ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Գիտության կոմիտե

COMPASS
Real Path to Changes

Հանրակրթական դպրոցների աշակերտներ

Բուհերի ուսանողներ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ - ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ - ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ

Գործատուներ

Սոցիալապես խոցելի խմբեր

Գյումրի 2019

Սույն ուսումնասիրությունն անցկացվել է
«Կրթություն - աշխատաշուկա - տնտեսություն միջհամակարգային կապերի արդյունավետության գնահատումն ու բարելավման ուղիները Շիրակի մարզում» հետազոտության շրջանակներում:

Հետազոտությունն իրականացվել է
««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18SH-5B013 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Հետազոտական խմբի ղեկավար — Արմեն Քթոյան
Հետազոտական Խմբի անդամներ — Լուսյա Գալոյան
Արփինե Սարգսյան
Մարինե Ավետիսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

Ա. Շիրակի մարզ. կրթություն-աշխատաշուկա-տնտեսություն 6

Ա1. Շիրակի մարզի կրթության ոլորտի ընդհանուր նկարագիրը 6

Ա2. Շիրակի մարզի աշխատուժի պահանջարկն ըստ մասնագիտությունների և պահանջվող մասնագետների թվի 8

1. Ընտրանքային հետազոտությունների արդյունքները 17

1.1. Հանրակրթական դպրոցների աշակերտների հետազոտության արդյունքները 17

1.2. Շիրակի մարզի բուհերի ուսանողների հարցման արդյունքները 47

1.3. Շիրակի մարզի գործատուների հարցման արդյունքները 86

1.4. Սոցիալապես խոցելի խմբերի հարցման արդյունքները 96

1.4.1. Գործազուրկներ 96

1.4.2.Սահմանափակ կարողություն ունեցող անձանց հարցման արդյունքների վերլուծություն 112

2. ԱՄՓՈՓՈՒՄ 123

2.1. Հանրակրթական դպրոցների աշակերտների հարցման արդյունքների ամփոփում 123

2.2. Բուհերի ուսանողների հարցման արդյունքների ամփոփում 126

2.3. Գործատուների հարցման արդյունքների ամփոփում 129

2.4. Սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչների հարցման արդյունքների ամփոփում 130

2.4.1. Գործազուրկների հարցման արդյունքներից բխող հիմնական եզրահանգումները 130

2.4.2. Սահմանափակ կարողություն ունեցող անձանց հարցման արդյունքների ամփոփում 132

Հապավումների ցանկ

բուհ	բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳՄ	Գյումրու մասնաճյուղ
ԵԹԿՊԻ	Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ
ԶԼՄ	զանգվածային լրատվական միջոց
ԶՊԾ	զբաղվածության պետական ծառայություն
ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀԱՊՀ	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
ՀԳՊԱ	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա
ՀՊՏՀ	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
ՄՈԳ	միջին որակավորումային գնահատական
ՇՊՀ	Շիրակի պետական համալսարան
ՊԴԿ	պրոֆեսորադասախոսական կազմ
ՏՏ	տեղեկատվական տեխնոլոգիա

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական փոփոխությունները, որոնք իրենց վրա կրում են համաշխարհային տնտեսության կերպափոխումները և տեղի են ունենում աշխարհաքաղաքական, բնապահպանական, սոցիալական և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների ազդեցությունների պայմաններում, իրենց ազդեցությունն են ունենում կրթական համակարգի վրա: Կրթական ծառայությունների շուկայում հանդիսանալով վաճառողներ, բուհերը իրենց ծառայություններն են առաջարկում այն սպառողներին, ովքեր հետագայում դառնալու են աշխատանքի շուկայի սուբյեկտներ: Աշխատանքի շուկայի լիարժեքության և գործունեության անընդհատության ապահովման նպատակով անհրաժեշտ է իրականացնել դրա առաջարկի և պահանջարկի դինամիկ վերլուծություն և կանխատեսում՝ առաջիկա տարիների համար: Ընդ որում՝ մասնագետի վերաբերյալ կրթական հաստատության և աշխատաշուկայի պահանջներն ու ընկալումները էականորեն տարբերվում են, ինչը վերջիններիս անհամապատասխանության առանցքային գործոնն է:

Մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործումը մեծապես պայմանավորված է կրթություն-աշխատաշուկա-տնտեսություն համակարգային կապի արդյունավետ գործարկումը, դրա օղակներում պարբերաբար ի հայտ եկող խոչընդոտներին արագ և համարժեք արձագանքման կարողությունից: Այս առումով կարևորվում է տնտեսության՝ աշխատանքային ռեսուրսների նկատմամբ կարիքների վերհանումը, բուհերին գործատուների և ընդհանրապես՝ աշխատաշուկայի կողմից առաջադրվող պահանջների դիտարկումը, հանրակրթության մակարդակում մարդկային կապիտալի զարգացման խոչընդոտների վերհանումը: Խնդիրների նկարագրված շրջանակը բավականին լայն է և ընդգրկուն, պահանջում է հետևողականորեն վերլուծել ու դիտարկել տեղի ունեցող գործընթացները: Այս համատեքստում կրթություն-աշխատաշուկա-տնտեսություն համակարգային կապի տարբեր օղակները ներկայացնող ինստիտուցիոնալ միավորների հետազոտությունը հրամայական անհրաժեշտություն է հանդիսանում:

Սույն հետազոտության շրջանակներում մեր կողմից կատարվել են հանրակրթական դպրոցների աշակերտների, բուհերի ուսանողների, գործատուների ընտրանքային հարցումներ, որոնք հիմնական թիրախը աշխատանքային

ռեսուրսներին առաջադրվող պահանջների վերհանումն է, կրթական ծառայությունների նպատակայնության գնահատումը, արդեն հիշատակված համակարգային կապի օղակների միջև փոխադարձ առնչությունների ամրապնդումը:

Կարևոր նշանակություն ունի նաև զարգացման ներառականության ապահովումը, ինչը ենթադրում է, ի թիվս այլ միջոցառումների, նաև սոցիալապես խոցելի համարվող առանձին խմբերի աշխատանքային կարիքների ու հնարավորությունների վերհանումը, աշխատաշուկայի և գործատուների պահանջների դիտարկումը, դրանց միջև համապատասխանության ապահովմանը միտված քայլերի նախանշումը: Նշվածի համատեքստում, սույն հաշվետվության մեջ ամփոփված են նաև Շիրակի մարզում գործազուրկների և սահմանափակ շարժունակություն ունեցող անձանց շրջանում անցկացված ընտրանքային հարցման և հետազոտությունների արդյունքները:


Հետազոտությունը կատարվել է ՀՀ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր – 2018-ի շրջանակներում:

Ա. Շիրակի մարզ. կրթություն-աշխատաշուկա-փնտրեսություն

Ա1. Շիրակի մարզի կրթության ոլորտի ընդհանուր նկարագիրը

2018թվականի հունվար ամսվա դրությամբ ՀՀ Շիրակի մարզում գործում են 11 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որտեղ սովորում են 1975 ուսանող: Նախորդ տարվա նույն ամսում մարզում գործել են 8 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ 2006 ուսանողներով:

2014-2015 թվականների համեմատ նշված հաստատությունների թիվը մարզում չի փոխվել: Այսպես, համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2015 թվականին Շիրակի մարզում կար 12 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, որը հանրապետականի 12,3% է կազմում: Սովորողների թիվը կազմել է 2187 ուսանող կամ հանրապետական ցուցանիշի 9%-ը:




Գծ. 1. Միջին մասնագիտական պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակն ըստ տարիքի, ՀՀ, Շիրակի մարզ, 2017/2018 ուս. տարի

2018 թվականի հունվարի դրությամբ ՀՀ Շիրակի մարզում գործում են 9 բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնցից 6 պետական և 3 ոչ պետական: Ուսանողների ընդհանուր թիվը կազմում է 3576 ուսանող: Ընդ որում՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը նախորդ տարվա համեմատ չի փոխվել, այնինչ նկատվել է ուսանողների թվի նվազում: Այսպես,

նախորդ տարում Շիրակի մարզի բուհերում սովորել է 5503 ուսանող, 2014 թվականին այս թիվը կազմել է 6282, իսկ 2015 թվականին՝ 5539 ուսանող: Չնայած նկատելի է ուսանողների թվի նվազում նախորդ տարիների համեմատ, սակայն պետք է նշել, որ այս բուհերի առկայությունը նկատելիորեն նվազեցնում է մարզից դեպի Երևան ուսանողների հոսքը:

Շիրակի մարզում ուսանողների թիվը կազմել է հանրապետական ցուցանիշի 5,3%-ը:



Գծ. 2. Բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակն ըստ տարիքի, ՀՀ, Շիրակի մարզ, 2017/2018 ուս.տարի


Շիրակի մարզի կրթական համակարգի հիմնական խնդիրը մասնագիտական կրթության անհամապատասխանությունն է՝ աշխատաշուկայի պահանջներին:

Միջին մասնագիտական և բարձրագույն կրթության հաստատությունների շրջանավարտների մասնագիտությունների ցանկը նույնն է տարիներ շարունակ և շատ մասնագիտություններ այսօր մարզի աշխատաշուկայում պահանջարկ չունեն:

Ա2. Շիրակի մարզի աշխատուժի պահանջարկն ըստ մասնագիտությունների և պահանջվող մասնագետների թվի

Շիրակի մարզի աշխատաշուկայում տիրող ներկայիս իրավիճակը դեռևս կրում է 1988թ.-ի երկրաշարժի հասցրած հետևանքները:

ՀՀ Աշխատանքային ռեսուրսների ցուցանիշների ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ աշխատանքային ռեսուրսների ամենամեծ տեսակարար կշիռը առկա է ք. Երևանում՝ 32.2%, ապա Արմավիրում՝ 10.4% և Կոտայքում՝ 9.8%: Շիրակի մարզում ցուցանիշը կազմում է 9.0%:



Գծ. 3. Աշխատանքային ռեսուրսներ, ՀՀ և Շիրակի մարզ 2015-2017թթ


Գծ. 3-ում ներկայացված տվյալներից կարելի է նկատել, որ աշխատանքային ռեսուրսների կազմում կանանց տեսակարար կշիռը դիտարկված տարիներին գերազանցել է տղամարդկանց տեսակարար կշռին՝ միջինում 11.0 տոկոսային կետով: Աշխատանքային ռեսուրսների տարիքային բաշխվածության վերլուծությունը

ցույց է տալիս, որ Շիրակի մարզում աշխատանքային ռեսուրսների կազմում գերակշռում են 20–24 և 25–29 տարեկանները, սակայն անհրաժեշտ է նաև նշել, որ բավականին մեծ տեսակարար կշիռ ունեն նաև 55–59 տարեկան անձինք (10.5%): Բարձր տեսակարար կշռով են բնութագրվում նաև 30–34, 20–24 և 50–54 տարեկանները. համապատասխանաբար՝ 9.8%, 9.5% և 9.1%: Ինչ վերաբերում է 65–69 և 70–75 տարեկաններին, ապա նրանք աշխատանքային ռեսուրսների կազմում ունեն ամենացածր տեսակարար կշիռները. համապատասխանաբար՝ 4.8% և 4.7%:

Աշխատանքի շուկան բնութագրող մյուս ցուցանիշը, ինչպես նշել ենք վերևում, տնտեսական ակտիվության մակարդակն է՝ տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռն աշխատանքային ռեսուրսներում: Տնտեսական ակտիվության մակարդակը կախված է տնտեսապես ակտիվ բնակչության թվից, որի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են ծնելիության ու մահացության հարաբերակցությունը, քաղաքացիների տեղաշարժերը, այն է՝ երկրից ելքերն ու մուտքերը կամ միգրացիան, ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի առանձնահատկությունները և այլն:


Շիրակի մարզի տնտեսապես ակտիվ բնակչության թվի վրա ի թիվս թվարկված գործոնների էական ազդեցություն ունեն նաև ներքին տեղաշարժերը, որոնք դրսևորվում են գյուղ-քաղաք-մայրաքաղաք տեղաշարժերի միջոցով:

2017 թվականի տվյալներով Շիրակի մարզի տնտեսապես ակտիվ բնակչության քանակը կազմել է 107 000 մարդ: 2017 թվականին Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմել է 62.5%, իսկ Շիրակի մարզինը՝ 56.1%, որը հանրապետական միջին ցուցանիշից ցածր է 6.4%-ով: 2014 թվականի համեմատ մարզի տնտեսական ակտիվության մակարդակը աճել է 3.1%-ով:



Գծ. 4. Տնտեսապես ակտիվ բնակչություն, ՀՀ և Շիրակի մարզ 2015-2017թթ

Ներկայացված տվյալներից կարելի է նկատել, որ տնտեսապես ակտիվ բնակչության կազմում կանանց տեսակարար կշիռը դիտարկված տարիներին գերազանցել է տղամարդկանց տեսակարար կշռին:




Գծ. 5. Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն, ՀՀ և Շիրակի մարզ 2015-2017թթ

Աշխատանքի շուկայի մասին համապարփակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դիտարկել նաև բնակչության զբաղվածության և գործազրկության մակարդակների ցուցանիշները:

Այսպես՝ զբաղվածության մակարդակը զբաղվածների թվի մասնաբաժինն է աշխատանքային ռեսուրսներում, իսկ գործազրկության մակարդակը՝ գործազուրկների տեսակարար կշիռը տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակում:


ՀՀ-ում գործազրկության մակարդակով առաջին տեղում Շիրակի մարզն է, որտեղ գործազրկության մակարդակը 18,6% է: Ընդ որում՝ այս ցուցանիշը կրկնակի գերազանցում է ՀՀ միջին ցուցանիշը: Գրանցված գործազուրկների կազմում գերակշիռ մասն են կազմում միջնակարգ և միջին մասնագիտական կրթությամբ անձինք, որոնք մեծ տեսակարար կշիռ են կազմում 35-50 տարեկան քաղաքացիները: Գործազրկության մակարդակի վերլուծությունը ցույց է տվել, որ

գործազրկության մակարդակը բարձր է մարզի քաղաքներում՝ 16.2%, որից 10.9%-ը կանայք են:




Գծ. 6. Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի փոփոխությունն ըստ ՀՀ մարզերի, 2018թ

Ստորև, գծ. 7-ում ներկայացված են աշխատանքի շուկայի պահանջարկի ցուցանիշները՝ դիտարկված ըստ մասնագիտական կրթական մակարդակի: Դիտարկված տվյալների վերլուծության արդյունքում պարզվում է, որ Շիրակի մարզում գերակշռում է նախնական և միջին մասնագիտական կրթության մասնագետների պահանջարկը:




Գծ. 7. Ըստ մարզերի թափուր աշխատատեղերի տեսակարար կշիռները ըստ կրթական մակարդակի

Ըստ կրթական մակարդակի հետբուհական և բարձրագույն կրթություն ունեցողների թիվը կազմում է գործազուրկների թվի 16.1%-ը, թերի բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողները՝ 17.5%-ը, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողները՝ 10.5%-ը, ընդհանուր միջնակարգ, հիմնական ընդհանուր, հատուկ ընդհանուր և տարրական կրթություն ունեցողները՝ 55.9%-ը:




Գծ. 8. Առավել պահանջվող աշխատատեղերի բաշխումը ըստ կրթական մակարդակների %-ով, Շիրակի մարզ

Ինչպես երևում է գծ. 8-ից, Շիրակի մարզում առավել մեծ պահանջարկ առկա է որակավորում չպահանջող աշխատատեղերի համար (59,3%), որից հետո բարձրագույն կրթություն պահանջող աշխատատեղերի (19,3%), ապա նախնական մասնագիական (13,5%) և միջին մասնագիտական կրթություն պահանջող աշխատատեղերի համար (7,9%): Ընդ որում՝ մասնագիտական կրթություն պահանջող աշխատատեղերի մոտ կեսը (47,4%) հանդիսանում են բարձարագույն կրթութական մակարդակին համապատասխանող աշխատատեղեր: Այս իմաստով առավել պակաս է պահանջարկը միջին մասնագիտական կրթություն պահանջող աշխատատեղերի նկատմամբ:




Գծ. 9. Առավել պահանջվող աշխատատեղերը ըստ մարզերի և կրթական մակարդակների (հատ), Շիրակի մարզ




Գծ.10. Ամենապահանջված աշխատանքների բաշխվածությունն ըստ աշխատանքի կատեգորիաների (տոկոսային կշիռն ընդհանուրի մեջ), Շիրակի մարզ

Ինչպես երևում է գծ. 10-ում ներկայացված տվյալներից, ըստ աշխատանքի կատեգորիայի գերակշռում են Ծրագավորման աշխատանքները, ինչը զարմանալի չէ հաշվի առնելով SS ոլորտի և մասնավորապես ծրագրավորման մասնագիտության նկատմամբ մեծ պահանջարկի:



Գծ. 11. 5 ամենապահանջված աշխատանքների բաշխվածությունն ըստ ընկերության գործունեության ոլորտի (տոկոսային կշիռն ընդհանուրի մեջ), Շիրակի մարզ

Ըստ գծ. 11-ի տվյալների՝ ըստ գործատուի ոլորտի Շիրակի մարզում գերակշռում են SS ընկերությունները, ընդհանուր աշխատանքներիմեջ կազմելով 35 տոկոս: Ֆինանսաբանկային ոլորտը որն իր մեջ ներառում է նաև ապահովագրական ընկերությունները, նույնպես ընդգրկվել են թոփ հինգում և երկրորդ տեղը կիսում է Ներկրում/Արտահանում/Ներկրում ոլորտի հետ:



Գծ. 12. Աշխատավարձերի համեմատական վերլուծություն մասնագիտությունների և աշխատանքային փորձի կտրվածքով, Շիրակի մարզ

Գծ. 12-ում ներկայացված է 11 մասնագիտական ոլորտ, որոնց համար ունենք ընդհանուրի մեջ զգալի կշիռ ունեցող տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր է ստանալ բավարար պատկեր աշխատավարձերի վերաբերյալ: Ինչպես տեսնում ենք աշխատավարձի մակարդակը ամենաբարձրն է SS ոլորտում, իսկ ամենացածրը կրթության և գիտության ոլորտում:

1. Ընտրանքային հետազոտությունների արդյունքները

1.1. Հանրակրթական դպրոցների աշակերտների հետազոտության արդյունքները


Հարցումն անցկացվել է Շիրակի մարզի մի քանի դպրոցների աշակերտների շրջանում: Հարցման նպատակն է պարզել հանրակրթական դպրոցի բարձր դասարաններում սովորողների վերաբերմունքն ուսման, դրա շարունակելու նպատակահարմարության, ապագա պլանների և այլնի մասին:

Հարցումն անցկացվել է Շիրակի մարզի 9 դպրոցների և վարժարանների 580 աշակերտների շրջանում: Հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկը կազմվել է պատահական ընտրանքի սկզբունքով՝ ապահովելով դրա ներկայացուցչականությունը, հիմնվելով մարզում հանրակրթական դպրոցների բաշխվածությունից, քանակից և տեղադիրքից:

Աշակերտների հարցումն անցկացվել է հետևյալ դպրոցներում և վարժարաններում.


1. Տնտեսագիտական վարժարան
2. ՇՊՀ ավագ դպրոց
3. Ակադեմիական վարժարան
4. Գյումրու թիվ 1 դպրոց
5. Գյումրու թիվ 2 դպրոց
6. Գյումրու թիվ 26 դպրոց
7. Ոսկեհասկի միջնակարգ դպրոց
8. Ազատանի միջնակարգ դպրոց
9. Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց

Հարցումն անցկացվել է ըստ հավելված 1-ում ներկայացված հարցաթերթի: Հարցվածների 362-ը (62.4%) աղջիկներ են, 218-ը (37.6%)՝ տղաներ: Հարցված աշակերտների 42%-ը սովորում է 10-րդ դասանում, 32%-ը՝ 11-րդ դասարանում: Մնացածը 9-րդ և 12-րդ դասարանի աշակերտներ են (գծ. 1.1)



Գծ. 1.1. Հարցվածների բաշխումն ըստ դասարանների

Հարցվածներից 559-ը (96.4%) պատասխանել է առաջադիմության վերաբերյալ հարցին: Նրանց կեսից ավելին 10 բալային համակարգում ունի 7-9 միավոր առաջադիմություն, 35.4%-ի առաջադիմությունը բարձր է 9 միավորից, իսկ 12.3%-ի առաջադիմությունը՝ 7 միավորից ցածր (գծ. 1.2):



Գծ. 1.2. Հարցմանը մասնակցածների առաջադիմությունը (%, առաջադիմության մասին հարցին պատասխանած աշակերտների ընդհանուր թվի նկատմամբ)

Աղյուսակ 1.1-ում ներկայացված է հարցված աշակերտների առաջադիմության բաշխվածությունն ըստ սեռի:

Աղյուսակ 1.1. Հարցվածների առաջադիմությունն ըստ սեռի

Սեռը/գնահատականը	9-10 միավոր	7-9 միավոր	7 միավորից ցածր	Ընդամենը
Իգական	41,69%	54,52%	3,79%	100%
Արական	25,84%	47,37%	26,79%	100%
Ընդամենը	35,69%	51,81%	12,50%	100%

Աղյուսակ 1.1-ից երևում է, որ աղջիկ աշակերտների մոտ գերակշռում են գերազանց սովորողները, 7 միավորից ցածր գնահատական ունեցողները ընդամենը 4%-ն են, իսկ տղաների մոտ բաշխումը նորմալին մոտ է, այսինքն՝ 7-9 միավորները ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն, իսկ շատ բարձր և շատ ցածր գնահատականները՝ գրեթե նույն հաճախականությամբ են հանդիպում:


9-10 միավոր առաջադիմություն ունեցող աշակերտների 73%-ը աղջիկներ են, իսկ 7 միավորից ցածր առաջադիմությամբ սովորողների 81.2%-ը՝ տղաներ (աղյուսակ 1.2):

Աղյուսակ 1.2. Աշակերտների առաջադիմությունն՝ ըստ սեռի. փոքր-ինչ այլ դիտակետ

Սեռը/առաջադիմ.	9-10 միավոր	7-9 միավոր	7 միավորից ցածր	Ընդամենը
Իգական	72,6%	65,4%	18,8%	62,1%
Արական	27,4%	34,6%	81,2%	37,9%
Ընդամենը	100,0%	100,0%	100,0%	100,0%

Ուսման նկատմամբ վերաբերմունքը

Ուսման նկատմամբ իր վերաբերմունքն արտահայտել է հարցված աշակերտների 95.3%-ը: Ըստ այդմ, պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ (գծ. 1.3).



Գծ 1.3. Հարցվածների վերաբերմունքը ուսման նկատմամբ

Աշակերտների մոտ 50%-ի համար ուսումը որոշակի հետաքրքրություն ներկայացնում է, մոտ 33%-ը սովորում է մեծ հետաքրքրությամբ: Անտարբեր է ուսման նկատմամբ կամ ուսումը ծանր բեռ է համարում հարցվածների 8%-ից մի փոքր ավելին:

Աղյուսակ 1.3-ում դիտարկվում է ուսման նկատմամբ հետաքրքության և աշակերտի սեռի կապը:

Աղյուսակ 1.3. Հարցված աշակերտների սեռը և ուսման նկատմամբ հետաքրքրությունը

սեռը/ուսման նկ. վերաբերմունքը	**սովորում եմ մեծ հետաքրքրութ.**	**որոշակի հետաքրքրություն ներկայացնում է**	**անտարբեր եմ ուսման նկատմամբ**	**ուսումը ծանր բեռ է**	**դժվ. եմ պատ.**	**ընդ.**
իգական	78,02%	61,59%	24,14%	26,32%	48,94%	62,75%
արական	21,98%	38,41%	75,86%	73,68%	51,06%	37,25%
ընդամենը	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%

Մեծ հետաքրքրությամբ սովորողների 78%-ը աղջիկներ են, և հակառակը՝ *ուսումը ծանր բեռ է* պատասխանն ընտրած աշակերտների 74%-ը տղաներ են: Չնայած՝ *դժվարանում եմ պատասխանել* տարբերակում սեռային բաշխման տարբերություններ չկան:


Հետաքրքրական կարող է դիտվել հարցված աշակերտների առաջադիմության և ուսման նկատմամբ վերաբերմունքի միջև առկա առնչությունների ուսումնասիրությունը (աղյուսակ 1.4):

Աղյուսակ 1.4. Առաջադիմությունը և ուսման նկատմամբ հետաքրքրվածությունը

	Հետաքրքրվածությունը					
Առաջադիմութ.	**սովորում եմ մեծ հետաքրքրութ.**	**որոշակի հետաքրքրութ. ներկայացնում է**	**անտարբեր եմ ուսման նկատմամբ**	**ուսումը ծանր բեռ է**	**դժվ եմ պատասխ.**	**ընդ.**
9-10 միավոր	49,21%	41,88%	2,09%	3,14%	3,66%	100,00%
7-9 միավոր	27,54%	56,88%	4,35%	1,45%	9,78%	100,00%
7 միավորից ցածր	10,45%	41,79%	17,91%	13,43%	16,42%	100,00%
ընդամենը	33,15%	49,63%	5,24%	3,56%	8,43%	100,00%

Գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտների միայն կեսն է սովորում մեծ հետաքրքրությամբ: 7 միավորից ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների մոտ 18%-ը անտարբեր է ուսման նկատմամբ, իսկ ևս 13%-ի համար՝ ուսումը ծանր բեռ է: Ըստ էության, կարելի է ենթադրել, որ ցածր առաջադիմության կարևոր պատճառներից մեկը ուսման նկատմամբ համապատասխան վերաբերմունքն է և ոչ թե կարողությունների կամ մտավոր ներուժի ցածր մակարդակը:

Հարցված աշակերտների 55%-ը նշել է, որ մայրն ունի բարձրագույն կրթություն: Բարձրագույն կրթություն ունեցող հայրերի տեսակարար կշիռն ավելի ցածր է՝ 41%: Հաջորդում են միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողները: Աշակերտների 23%-ի հայրը և 16%-ի մայրը ունի միջին մասնագիտական կրթություն:



Գծ 1.4. Ծնողների կրթական մակարդակը

Հետաքրքրական է դիտարկել ծնողների կրթական մակարդակի կապը աշակերտների առաջադիմության հետ (աղյուսակ 1.5):

Աղյուսակ 1.5.Աշակերտի առաջադիմությունը և ծնողների կրթական մակարդակը

Աշակերտի հոր կրթությունը							
Առաջադիմությունը	տարր.	միջն.	միջին մասն.	թերի բարձր.	բարձր.	հետբուհ.	ընդ.
9-10 միավոր	0,0%	10,5%	22,1%	16,3%	47,4%	3,7%	100,0%
7-9 միավոր	2,5%	16,2%	20,9%	15,5%	41,9%	2,9%	100,0%
7 միավորից ցածր	4,5%	29,9%	34,3%	7,5%	19,4%	4,5%	100,0%
Ընդամենը	1,9%	15,9%	23,0%	14,8%	41,0%	3,4%	100,0%
Աշակերտի մոր կրթությունը							
Առաջադիմություն	տարր.	միջն.	միջին մասն.	թերի բարձր.	բարձր.	հետբուհ.	ընդ.
9-10 միավոր	0,0%	4,7%	10,4%	14,5%	67,4%	3,1%	100,0%
7-9 միավոր	0,4%	11,9%	20,2%	12,6%	50,2%	4,7%	100,0%
7 միավորից ցածր	0,0%	29,2%	16,9%	6,2%	43,1%	4,6%	100,0%
Ընդամենը	0,2%	11,4%	16,3%	12,5%	55,5%	4,1%	100,0%

Գերազանց առաջադիմությամբ աշակերտների կեսից ավելիի դեպքում ծնողներն ունեն բարձրագույն կրթություն: Հետաքրքրական է, որ 7 միավորից ցածր առաջադիմություն ցուցաբերող աշակերտների 43.1%-ի մոտ մոր կրթությունը չնայած բարձրագույն է, սակայն ցածր է հոր կրթական մակարդակը: Այսինքն՝

աշակերտների ուսման առաջադիմության կարևոր պայման է ընտանիքում ուսմանը նպաստող միջավայրի ձևավորումը, որի կարևոր նախադրյալ կարող է հանդիսանալ երկու ծնողների կրթական բարձր մակարդակ ունենալը:

Ընտանիքի ֆինանսական վիճակը հարցի պատասխանները

Հարցված աշակերտների 24%-ըհրաժարվել է պատասխանել ընտանիքի ֆինանսական վիճակի վերաբերյալ հարցին: 51%-ը պատասխանել է, որ եկամուտը բավարարում է ընթացիկ ծախսերը կատարելու համար, իսկ 14.2%-ի պարագայում՝ եկամուտն ավելին է, քան ծախսերը: Փոքր թվով աշակերտներ են նշել ընտանիքի դժվար ֆինանսական վիճակը:

Աղյուսակ 1.6. Աշակերտի ընտանիքի ֆինանսական վիճակի վերաբերյալ հարցի պատասխանների բաշխվածությունը

#	Պատասխանը	%
1	Ընտանիքի եկամուտը չի բավարարում նույնիսկ ամենաանհրաժեշտ գնումները կատարելու համար	2,6%
2	Ընտանիքի եկամուտը բավարարում է միայն խիստ անհրաժեշտ գնումների համար	4,6%
3	Եկամուտը բավարար է ինչպես սննդամթերքի, այնպես էլ հագուստի համար	50,9%
4	Մեր ընտանիքի եկամուտը ավելին է, քան ծախսերը	14,2%
5	Դժվարանում եմ պատասխանել	3,5%
6	Հրաժարվում եմ պատասխանել	24,2%

Աղյուսակ 1.7-ում դիտարկվել է ընտանիքի եկամտի ևաշակերտի առաջադիմության փոխադարձ առնչությունը:

Աղյուսակ 1.7. Եկամտի և առաջադիմության առնչությունը

	Եկամտի վերաբերյալ պատասխանները						
Առաջադիմությունը	1	2	3	4	5	6	ընդ.
9-10 միավոր	6,7%	53,8%	32,7%	42,3%	31,6%	36,6%	35,3%
7-9 միավոր	66,7%	38,5%	57,7%	44,9%	42,1%	47,3%	52,2%
7 միավորից ցածր	26,7%	7,7%	9,6%	12,8%	26,3%	16,0%	12,5%
Ընդամենը	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%

Ամենաբարձր առաջադիմություն ունեն այն աշակերտները, որոնց ընտանիքի եկամուտը բավարարում է միայն անհրաժեշտ գնումների համար: Առաջին եկամտային խմբի (ընտանիքի եկամուտը չի բավարարում նույնիսկ ամենաանհրաժեշտ գնումները կատարելու համար) աշակերտներն ունեն միջինից զգալիորեն ցածր առաջադիմություն:

Հետաքրքրական առնչություններ կարելի է հայտնաբերել աշակերտների՝ ուսման նկատմամբ վերաբերմունքի և ընտանիքի եկամտի վերաբերյալ տրված պատասխանների միջև (աղյուսակ 1.8):

Ուսման նկատմամբ անտարբեր աշակերտների մեջ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմում ցածր եկամտային խմբում գտնվողները:


Աղյուսակ 1.8. Ուսման նկատմամբ վերաբերմունքը և ընտանիքի եկամուտը

	Եկամտի վերաբերյալ պատասխանները						
ուսման նկատմամբ վերաբերմունքը	1	2	3	4	5	6	ընդ.
սովորում եմ մեծ հետաքրքրությամբ	53%	58%	30%	41%	42%	27%	33%
ուսումը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում	20%	23%	58%	43%	32%	51%	50%
անտարբեր եմ ուսման նկատմամբ	20%	8%	4%	4%	21%	3%	5%
ուսումը ծանր բեռ է ինձ համար	0%	4%	3%	4%	0%	5%	3%
դժվարանում եմ պատասխանել	7%	8%	6%	9%	5%	14%	9%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%	100%

Անապահով ընտանիքներից աշակերտներն ավելի հետաքրքրված են ուսման նկատմամբ, քան ապահովները: Խնայողություն կատարելու հնարավորություն ունեցող ընտանքիքներից աշակերտների 41%-ն է սովորում մեծ հետաքրքրությամբ, մինչդեռ անապահով ընտանիքների պարագայում այդ թիվն ավելի մեծ է: Մյուս կողմից, անապահով ընտանիքներից աշակերտների 20%-ը անտարբեր է ուսման նպատմամբ, մինչդեռ ապահով ընտանիքներում այդ թիվը շատ ավելի փոքր է՝ 4%:


Մասնագիտական կողմնորոշման աշխատանքները և բուհի վերաբերյալ տեղեկատվությունը՝ աշակերտների գնահատմամբ

Հարցված աշակերտների ավելի քան 50%-ը դրական է պատասխանել դպրոցում կատարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքների վերաբերյալ հարցին: Ընդ որում, զգալի են հատկապես ուսուցիչների կողմից արվող աշխատանքները (42% դեպքերում, *գծ. 1.5*), մինչդեռ բուհերի ներկայացուցիչների կողմից արվող աշխատանքները մի քանի անգամ պակաս ինտենսիվ են:



Գծ 1.5. Աշակերտների պատասխանները դպրոցում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների անցկացման մասին հարցին

Հարցաթերթում հարցերից մեկն առնչվում է նրան, թե արդյո՞ք աշակերտները կարիք ունեն բուհի և մասնագիտության մասին ավելի կշռադատված որոշում կայացնելու համար լրացուցիչ տեղեկություններ ստանալ բուհերի, մասնագիտությունների և նմանատիպ այլ հարցերի վերաբերյալ: Հարցվածներից 21-ը (3.6%) որևէ պատասխան չի նշել: Մնացած պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.




Գծ 1.6. Արդյոք բուհի կամ մասնագիտության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության կարիք ունեք

Աշակերտների կեսից ավելին լրացուցիչ տեղեկատվության կարիք ունի թե բուհի, թե մասնագիտության վերաբերյալ: Միայն մասնագիտության վերաբերյալ հավելյալ տեղեկատվության կարիք ունի աշակերտների 11.1%-ը, իսկ ևս 5%-ը կցանկանար միայն բուհի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալ: Հետաքրքրական է, որ աշակերտների միայն 18%-ն է համարում, որ եղած տեղեկատվությունը բուհի կամ մասնագիտության վերաբերյալ լիովին բավարար է: Ըստ այդմ, աշակերտների գերակշիռ մասը իր ապագայի վերաբերյալ որոշումները ստիպված է կայացնել ոչ լիարժեք տեղեկատվության պայմաններում, ինչը հետագայում լրջագույն խնդիրներ է ստեղծում թե սովորելու մոտիվացիայի, թե մարդկային ռեսուրսի օգտագործման արդյունավետության մասով:

Հարցված աշակերտների 80 տոկոսն անդրադարձել է այն հարցին, թե *ո՞ր աղբյուրներից եք սրացել (կամ՝ կցանկանայիք սրանալ) այդ տեղեկատվությունը:*


18%-ը տեղեկատվությունը ստանում է ընկեր, բարեկամ, ծանոթներից, մոտ 17%-ը՝ համացանցից, փոքր-ինչ ցածր է բուհերի ներկայացուցիչներից և ուսուցիչներից տեղեկատվություն ստացողների մասնաբաժինը (գծ. 1.7):



Գծ 1.7. բուհի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրների բաշխվածությունը

<u>Արդյո՞ք ցանկություն ունեք բուհում սովորելու</u>

Հարցվածների 2.4%-ը չի նշել որևէ պատասխան: Մնացածների միջև պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.



Գծ. 1.8. Ցանկություն ունե՞ք արդյոք ուսումը շարունակելու բուհում

Հարցվածների ¾-ը արտահայտել է բուհում սովորելու միանշանակ ցանկություն, ևս 6%-ը ավելի շուտ ցանկանում է սովորել: Ոչ և ավելի շուտ՝ ոչ պատասխաներ են տվել աշակերտների 12%-ից փոքր-ինչ ավելին: Չկողմնորոշվածները, ովքեր դժվարացել են հարցին պատասխանել, 6.7%-ն են:

Աղյուսակ 1.9. Սովորելու նկատմամբ վերաբերմունքը և բուհում ուսումը շարունակելու մտադրությունը

	Ուսումը բուհում շարունակելու մտադրությունը					
Ուսման նկատմամբ վերաբերմունքը	այո	ավելի շուտ՝ այո	ոչ	ավելի շուտ՝ ոչ	դժվ. եմ պատ.	ընդ.
սովորում եմ մեծ հետաքրքրությամբ	38,39%	28,13%	12,20%	8,70%	17,14%	33,15%
ուսումը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում	49,63%	50,00%	39,02%	56,52%	68,57%	50,37%
անտարբեր եմ ուսման նկատմամբ	2,20%	12,50%	24,39%	0,00%	2,86%	4,44%
ուսումը ծանր բեռ է	2,20%	3,13%	9,76%	13,04%	2,86%	3,33%
դժվարանում եմ պատասխանել	7,58%	6,25%	14,63%	21,74%	8,57%	8,70%
Ընդամենը	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%

Բուհ ընդունվելու ցանկություն արտահայտածների 12.5%-ը անտարբեր է ուսման նկատմամբ: Եվ ընդհանրապես, ուսման նկատմամբ անտարբեր աշակերտների 37%-ը միանշանակ ցանկություն է արտահայտել բուհում սովորելու, իսկ 17%-ը բուհում ընդունվելու մտադրության մասին հարցին տվել է ավելի շուտ այո պատասխանը:

Չնայած սրան, ուսման նկատմամբ հետաքրքրության աստիճանը որոշակի կոռելացվածություն ունի բուհ ընդունվելու մտադրության հետ:

Աղյուսակ 10. Ընտանիքի ֆինանսական վիճակը և բուհում սովորելու ցանկությունը

	Ուսումը բուհում շարունակելու մտադրությունը					
Ընտանիքի ֆինանսական վիճակը	այո	ավելի շուտ՝ այո	ոչ	ավելի շուտ՝ ոչ	դժվ. եմ պատ.	ընդ.
1	2%	0%	27%	0%	0%	3%
2	6%	4%	0%	12%	3%	5%
3	68%	79%	55%	59%	72%	68%
4	21%	13%	9%	12%	17%	19%
5	3%	4%	9%	18%	7%	4%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Բուհում սովորելու միանշանակ մտադրություն արտահայտած աշակերտների ընտանիքները ֆինանսապես բարվոք վիճակում են (աղյուսակ 1.10): Մյուս պատասխանների հաճախականությունը թույլ չի տալիս միանշանակ գնահատական տալ աշակերտի ընտանքի ֆինանսական վիճակի և բուհ ընդունվելու մտադրության մասին: Սա, թերևս կարող է նշանակել, որ կամ աշակերտները իրենց ընտանիքի ֆինանսական վիճակի վերաբերյալ հարցին պատասխանել են ոչ բավարար օբյեկտիվությամբ, կամ էլ՝ բուհում սովորելու մտադրությունն ընտանիքի ֆինանսական վիճակի հետ ուղղակիորեն շաղկապված չէ:

Աղյուսակ 1.11. Մասնագիտական կողմնորոշման աշխատանքները և բուհում սովորելու ցանկությունը.

	Ուսումը բուհում շարունակելու մտադրությունը					
Տարվել են արդյոք մասնագիտ. կողմնորոշման աշխ.	այո	ավելի շուտ՝ այո	ոչ	ավելի շուտ՝ ոչ	դժվ. եմ պատ.	ընդ.
այո, ուսուցիչների կողմից	49%	32%	14%	36%	22%	43%
այո, բուհ ներկայաց. կողմից	9%	18%	7%	4%	8%	9%
ոչ	24%	29%	38%	24%	35%	26%
այլ	2%	0%	10%	4%	0%	3%
դժվ. եմ պատ.	16%	21%	31%	32%	35%	19%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%


Բուհում սովորելու ցանկություն չունեցող աշակերտների 38%-ը նշել է, որ իրենց դպրոցում մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ չեն արվել, և միայն 14%-ն է նշել, որ այդօրինակ աշխատանքներ տարվել են ուսուցիչների կողմից (աղյուսակ 1.11): Բուհում սովորելու ցանկություն հայտնած աշակերտների շուրջ կեսը փաստել է, որ ուսուցիչների կողմից տարվել են մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ: Կարելի է արձանագրել, որ աշակերտների հետ ուսուցիչների կողմից տարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքները բուհ ընդունվելու մտադրության ձևավորման տեսանկյունից լուրջ ներուժ են պարունակում:

Աղյուսակ 1.12. Բուհի մասին տեղեկատվության աղբյուրը և ուսումը շարունակելու մտադրությունը

	Ուսումը բուհում շարունակելու մտադրությունը					
բուհի մասին տեղեկատվության աղբյուրը	այո	ավելի շուտ՝ այո	ոչ	ավելի շուտ՝ ոչ	դժվ. եմ պատ.	ընդ.
ՀԼՄ	6%	8%	10%	0%	3%	6%
ընկեր, բարեկամ, ծանոթ	22%	31%	20%	21%	19%	22%
դիմորդի տեղեկատու	7%	27%	3%	0%	3%	7%
Համացանց	21%	12%	30%	43%	16%	21%
ուսուցիչներ	19%	8%	20%	29%	19%	19%
բուհ ներկայացուցիչներ	23%	15%	3%	7%	19%	20%
այլ	2%	0%	13%	0%	19%	4%
ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Բուհում սովորելու մտադրություն հայտնած աշակերտների 22%-ը բուհի վերաբերյալ տեղեկատվությունը ստացել է ընկեր, ծանոթ, բարեկամների շնորհիվ, 21%-ը՝ Համացանցից, 23%-ը՝ բուհերի ներկայացուցիչներց, 19%-ը՝ ուսուցիչներից: Կարելի է նկատել, որ բուհում ուսումը շարունակելու հարցում բացասական մոտեցում ունեցող աշակերտների պարագայում բուհի մասին տեղեկատվության ավելի նշանակալի աղբյուր է եղել Համացանցը, մինչդեռ հակառակ մտադրություն արձանագրած աշակերտները ավելի շատ որպես տեղեկատվության աղբյուր օգտվել են ընկեր, ծանոթ, բարեկամներից, նաև՝ դիմորդի տեղեկատուներից:

Բուհում սովորելու վերաբերյալ դիրքորոշման պատճառները բացատրել է հարցվածների 40%-ը: Նրանց պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ (տոկոսները ներկայացված են հարցվածների ընդհանուր թվի նկատմամբ):



Գծ 1.9. Բուհի նկատմամբ դիրքորոշման պատճառները

Հետաքրքրական է, որ բուհում սովորելու առնչությամբ բացասական դիրքորոշում են արտահայտել նաև բուհում սովորելու ցանկություն արտահայտած որոշ աշակերտներ:


Աղյուսակ 1.12. Բուհում սովորելու դիրքորոշումը և պատճառները

	Պատճառները (շարժառիթները)								
Բուհ ընդունվելու մտադրությունը	Ժամ.-ի կորուստ	բուհը որակյալ կրթ. չի տալիս	ցանկ. եմ արհեստ սովորել՝ բուհից դուրս	կրկնուսույցի հնարավ. չունեմ	չեմ կարող վճարել ուսման համար	դպրոցից հետո գնալու եմ երկրից	այլ	չի պատ.	Ընդ.
այո	1%	8%	11%	6%	1%	4%	3%	67%	100%
ավելի շուտ՝ այո	0%	6%	3%	18%	3%	12%	6%	53%	100%
ոչ	16%	9%	36%	2%	11%	9%	9%	7%	100%
ավելի շուտ՝ ոչ	28%	0%	24%	4%	0%	8%	8%	28%	100%
դժվ եմ պատ	3%	3%	11%	0%	0%	13%	26%	45%	100%
Ընդամենը	3%	7%	13%	6%	2%	6%	5%	58%	100%

Բուհ ընդունվելու մտադրություն ունեցողների 11%-ը ցանկանում է բուհից դուրս որևէ արհեստ կամ մասնագիտություն ստանալ, 8%-ը համարում է, որ մեր բուհերը որակյալ կրթություն չեն տալիս: Ընդ որում, բուհերի որակի մասով այսպիսի կարծիք ունեցողների տեսակարար կշիռը հավասար է բուհում սովորելու մտադրություն չունեցողների շրջանում նույն կարծիքն արտահայտածների տեսակարար կշռին: Բուհում սովորելու մտադրություն ունեցող աշակերտների պարագայում էական խոչընդոտ է հանդիսանում կրկնուսույցի հնարավորություն չունենալը, իսկ բուհում

սովորելու մտադրություն չունեցողները ավելի շատ հակված են բուհում ուսումը ժամանակի կորուստ դիտարկելուն:


Հարցման արդյունքում գնահատվել են բուհ ընդունվելու հնարավոր որոշման հիմնական շարժառիթները: Աշակերտները դրանք գնահատել են 5 միավորային սանդղակով, որտեղ 5-ը նշանակում է, որ տվյալ շարժառիթը աշակերտի հիմնական նպատակն է, իսկ 1-ը՝ տվյալ շարժառիթը ընդհանրապես կարևոր չէ աշակերտի համար: Շարժառիթների միջինացված գնահատականները բերված են գծ. 1.10-ում:



Գծ. 1.10. Բուհ ընդունվելու որոշման շարժառիթների միջինացված գնահատականները (5 միավորային համակարգով):

Ըստ այդմ, առաջնային շարժառիթներից է նոր գիտելիք ստանալը և լավ մասնագետ դառնալը, ապագայում աշխատանքի ընդունվելու համար կրթություն ունենալը, ընդհանուր կրթական մակարդակը բարձրացնելը, նաև՝ պարզապես դիպլոմ ձեռք բերելը:


Աշակերտները պակաս կարևոր են համարել համապատասխան կարգավիճակ, նոր ծանոթներ, ընկերներ ձեռքբերելը, ուսանողական կյանքով ապրելու հնարավորություն ստանալը:



Գծ. 1.11. Ե՞րբ է առաջացել ուսումը բուհում շարունակելու ցանկությունը


Հարցված աշակերտների կեսից ավելին բուհում ուսումը շարունակելու ցանկություն է ունեցել 9-րդ դասարանում կամ նույնիսկ դրանից առաջ: 10-րդ դասարանում այդպիսի ցանկություն է առաջացել հարցված աշակերտների 16%-ի մոտ, ավելի ուշ կողմնորոշվել են հարցվածների միայն 10%-ը: Ըստ այդմ, բուհում սովորելու ցանկությունը առավել հաճախ ձևավորվում է դեռևս հիմնական դպրոցում սովորելու տարիներին:

Բուի ընդունվելու ցանկություն արտահայտածների 27.1%-ը կնախընտրեր ընդունվել երևանյան որևէ բուի (գծ. 1.12): Գյումրիի բուհերի ցանկում առավել նախընտրելի են երեք հիմնականները՝ ՇՊՀ, ՀՊՏՀ և ՀԱՊՀ մասնաճյուղերը:




Գծ. 1.12. Բուհերի նախընտրությունը հարցվածների կողմից, տոկոսներով՝ բուհընդունվելու ցանկություն արտահայտածների ընդհանուր թվի նկատմամբ

Երևանում ուսումը շարունակելու ցանկություն արտահայտած աշակերտների ¼-ը նախընտրում է ԵՊՀ-ն, 8.6%-ը՝ բժշկական համալսարանը, 5.3%-ը՝ Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանը (գծ. 1.13):



Գծ. 1.13. Պատասխանների բաշխումն ըստ երևանյան բուհերի


Ի՞նչն է առավելապես Ձեզ կողմնորոշել Ձեր նշած բուհն ընտրելու առումով հարցին պատասխանել են հարցվածների 87 տոկոսը: Առաջարկված տարբերակների միջև ընտրությունը բաշխվել է հետևյալ կերպ (գծ. 1.14).



Գծ. 1.14. Ի՞նչն է կողմնորոշել տվյալ բուհի ընտրության հարցում, տոկոս ստացված պատասխանների ընդհանուր թվի նկատմամբ:

Բուհի ընտրության հարցում առաջնայինը կրթության բարձր որակն է, նաև՝ որակյալ մասնագետների առկայությունը: Որոշակի դեր է խաղացել նաև ծնողների խորհուրդը և բուհի բարձր վարկանիշը:

Ի՞նչ մասնագիտություն եք ցանկանում սրանալ բուհում հարցին միարժեք պատասխաններ են տվել հարցվածներից 431-ը կամ 74%-ը: Պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ (գծ. 1.15):




Գծ. 1.15. Ինչ մասնագետ եք ցանկանում դառնալ բուհում, տոկոսներով հարցվածների ընդհանուր թվի նկատմամբ

Հարցվածների 16%-ը մասնագիտության հարցում դեռ չի կողմնորոշվել: Կողմնորոշվածների պարագայում առավել հաճախ հիշատակված մասնագիտություններն են լեզվաբանը, ծրագրավորողը, իրավաբանը և ֆինանսիստը: Հարցվածների 2.6 տոկոսը նշել է մեկից ավելի մասնագիտություններ, ընդ որում՝ հաճախ միմյանց հետ առնչություն չունեցող (օր.՝ լեզվաբան և ծրագրավորող):

Հետաքրքիր է անդրադառնալ այն հարցին, թե ինչն է աշակերտներին առավելապես կողմնորոշել այս կամ այն մասնագիտության ընտրության հարցում:


Այս հարցին չեն պատասխանել հարցվածների 17տոկոսը: Մնացածի դեպքում, տրված ընտրված բոլոր տարբերակների միջև առանձին պատասխանների

տոկոսային բաշխվածությունն ունի հետևյալ տեսքը (գծ. 1.16): Մասնագիտության բարձր վարկանիշը կարևորել է աշակերտների 18%-ը, սեփական ունակություններին համապատասխանությունը նշվել է 14.5% դեպքերում, ծնողների խորհուրդը աշակերտների 12%-ի պարագայում վճռորոշ է եղել: Հետաքրքրական է, որ բարձր աշխատավարձը իր կարևորությամբ միայն 4-րդ գործոնն է, որը նշվել է աշակերտների միայն 10%-ի կողմից:



Գծ. 1.16. Ի՞նչն է Ձեզ առավելապես կողմնորոշել ընտրել այդ մասնագիտությունը, տոկոսներով, բոլոր ընտրված տարբերակների նկատմամբ

Հարցվածների 89%-ը պատասխանել է այն հարցին, թե ու՞մ հետ է պատրաստվում պարապել (կամ՝ արդեն պարապում) այն առարկաները, որոնցից հանձնելու է բուհ-ի ընդունելության քննությունները: Մեծ մասը (51.3%) պատրաստվում է պարապել դասախոսի հետ, 16.1%-ը՝ դասախոսի հետ համատեղ: Պարապել պատրաստվող աշակերտների միայն 14.4%-ն է նշել, որ պարապելու է ինքնուրույն (գծ. 1.17):



Գծ. 1.17. <u>Ու՞մ հետ եք պատրաստվում պարապել (կամ՝ արդեն պարապում) այն առարկաները, որոնցից հանձնելու եք բուհ-ի ընդունելության քննությունները</u>, տոկոսներով, հարցին պատասխան նշածների ընդհանուր թվից


Ըստ էության ստացվում է, որ հարցվածների գերակշիռ մեծամասնությունը պատրաստվում է պարապել կամ արդեն պարապում է: Չեն պարապում կամ չեն պատրաստվում պարապել հարցվածների 1 տոկոսից պակասը:

Աղյուսակ 1.13. Պարապելու մտադրությունը և առաջադիմությունը

	Ում մոտ եք պարապելու							
Առաջադիմությունը	դասախոս	դասախոս և ինքնուրույն	ինքնուրույն	ծնող	ծանոթ բարեկամ	այլ	չի պատասխ.	Ընդ.
9-10	41%	38%	25%	17%	17%	46%	21%	35%
7-9	54%	56%	51%	67%	73%	35%	44%	52%
7-ից ցածր	4%	6%	24%	17%	10%	19%	35%	12%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

Դասախոսի մոտ պարապելու ցանկություն արտահայտածների 41%-ն ունի բարձր առաջադիմություն, 54%-ի առաջադիմությունը 7-9 միավորի սահմաններում է: Բարձր առաջադիմություն ունեցողների 53%-ը պատրաստվում է պարապել դասախոսի հետ, 16%-ը՝ դասախոսի հետ համատեղ, և միայն 9%-ն է պատրաստվում ինքնուրույն պարապել: Հետաքրքրական է, որ ցածր առաջադիմություն ունեցողների 25%-ը պատրաստ է պարապել ինքնուրույն:

Հարցված աշակերտների շուրջ 44%-ը դժվարացել է պատասխանել այն հարցին, թե *արդյո՞ք մասնագիտական գիտելիքները, որոնք պետք է ձեռք բերեք բուհում, կմեծացնեն աշխատանք գտնելու հնարավորությունը:* Այս հարցում քիչ թե շատ կողմնորոշվածների պարագայում ավելի շատ բացասական ակնկալիքներ են: Այսպես, 17 տոկոսը համարում է, որ բուհում ստացած գիտելիքները չեն ավելացնի աշխատանք գտնելու հնարավորությունները: Եվս 14% հարցված հակված է այդպես կարծելու: Աշխատանք գտնելու հարցում բուհի գիտելիքի դրական ազդեցության հարցում վստահ է աշակերտների միայն 13.6%-ը, իսկ 12%-ը ավելի շատ հակված է այդ մտքին:




Գծ 1.18. Արդյո՞ք մասնագիտական գիտելիքները, որոնք պետք է ձեռք բերեք բուհ-ում, կմեծացնեն աշխատանք գտնելու հնարավորությունը, %, հարցվածների ընդհանուր թվից

Կարելի է արձանագրել, որ համեմատաբար փոքր մասնաբաժին ունեն այն ուսանողները, որոնք վստահ են բուհում ստացած գիտելիքով աշխատանք գտնելու հնարավորությունների առկայության հարցում, ինչը մտահոգիչ է, սակայն՝ նաև արտացոլում է վերջին ժամանակաշրջանի մեր իրողությունները:


Հարցված աշակերտները 5 միավորային համակարգով (5-ը առավելագույն գնահատականն է) գնահատել են այն գործոնները, որոնք իրենց կարծիքով կարևոր են և նպաստում են Հայաստանում աշխատանք գտնելուն: Ըստ այդմ, առավել կարևոր են դիտվում աշխատասիրությունը (միջին միավորը՝ 4.41), մասնագիտական հմտությունները (4.39), բարձրագույն կրթությունը (4.38), տաղանդը կամ խելքը

(4.3): Գործոնների՝ ըստ կարևորության երկրորդ խմբում ներառվել են կապերը, փողը, հաջողությունը (գծ. 1.19):



Գծ. 1.19. Հայաստանում աշխատանք գտնելու նպաստող գործոնների միջինացված գնահատականները, ըստ հարցվողների տրված պատասխանների, միավոր, 5 միավորային սանդղակով

Հարցված աշակերտների 92.4%-ը պատասխաններ է նշել այն հարցին, թե ինչ են առավել կարևոր համարում ապագա աշխատանքում (գծ. 1.20):




Գծ. 1.20. Ինչն են աշակերտները առավել կարևորում իրենց ապագա աշխատանքում, % տրված պատասխանների ընդհանուր թվից

Ըստ էության բարձր վարձատրությունն առաջնային է: Այս գործոնը կարևորել է աշակերտների կեսից ավելին: Նաև կարևորվում է հետաքրքիր լինելը: Մյուս

պատասխանների հաճախականությունը որակապես ցածր է: Հետաքրքրական է, որ սեփական կարողություններին և ընդունակություններին համապատասխանելը կարևորվել է շատ քիչ թվով աշակերտների կողմից (8.7%):

Բուհն ավարտելուց հետո ցանկալի աշխատավայրի վերաբերյալ հարցին պատասխանել է հարցմանը մասնակցած աշակերտների 93.4%-ը:



Գծ. 1.21.<u>Որտեղ եք մտադիր աշխատել բուհն ավարտելուց հետո</u> հարցի պատասխանները, % հարցին պատասխան տված աշակերտների ընդհանուր թվից

Հարցին պատասխանածների մոտ 78%-ի մոտ այս առնչությամբ կա հստակություն կամ պլանի որոշակիություն: Մեծ թիվ են կազմում Երևանում աշխատել ցանկացող աշակերտները (28.3%), արտերկիր հեռանալ է պատրաստվում 21.4%-ը: Մոտ 20%-ը պատրաստվում է աշխատանք գտնել Շիրակի մարզում:

Աղյուսակ 1.14. Ակնկալվող աշխատավայրը և գիտելիքի նկատմամբ սպասելիքները

	Որտեղեքմտադիրաշխբուհիցհետո							
Մասն. գիտելիքները կմեծացնեն աշխ. գտնելու հնարավ	Շիրակի մարզ	Երևան	ՀՀ այլ բնակ	արտերկիր	այլ	դժվ եմ պատ	չի նշել պատ.	Ընդամենը
այո	22%	28%	6%	19%	2%	19%	4%	100%
ավելի շուտ՝ այո	23%	37%	1%	24%	1%	14%	0%	100%
ավելի շուտ՝ ոչ	14%	21%	0%	14%	0%	50%	0%	100%
ոչ	3%	6%	3%	41%	9%	25%	13%	100%
դժվ եմ պատ	7%	27%	0%	18%	11%	33%	4%	100%
Ընդամենը	20%	28%	4%	21%	3%	21%	4%	100%


Իրենց մասնագիտական գիտելիքներով աշխատանք գտնելու ցածր հավանականություն դիտարկող աշակերտների մեծ մասը կամ դժվարացել է պատասխանել այն հարցին, թե որտեղ է պատրաստվում աշխատել բուհն ավարտելուց հետո, կամ էլ պլանավորում է աշխատանք գտնելու համար լքել Հայաստանը: Ապագայում աշխատանք գտնելու հարցում ավելի մեծ վստահություն ունեցող աշակերտների նշանակալի մասը աշխատանք գտնելու հիմնական տարբերակ է դիտարկում Երևանը, հետո՝ Շիրակի մարզը, և վերջում՝ արտերկիրը:

Աղյուսակ 1.15. Աշխատասիրությունը և ապագա աշխատավայրը

	Որտեղ եք մտադիր աշխատել բուհից հետո							
Աշխատասիրության գործոնին տված գնահատականը	Շիրակի մարզ	Երևան	ՀՀ այլ բնակ	արտերկիր	այլ	դժվ եմ պատ	չի նշել պատ.	Ընդամենը
1	12%	0%	12%	54%	4%	15%	4%	100%
2	18%	9%	9%	18%	9%	36%	0%	100%
3	35%	13%	0%	23%	3%	26%	0%	100%
4	22%	33%	3%	21%	1%	19%	1%	100%
5	19%	32%	5%	18%	3%	20%	2%	100%
Ընդամենը	20%	29%	5%	21%	3%	21%	2%	100%

Աշխատանք գտնելու հարցում աշխատասիրություն գործոնին բարձր գնահատական տված աշակերտները բուհից հետո մտադիր են մնալ Շիրակի մարզում կամ տեղափոխվել Երևան (աղյուսակ 1.15):

Հարցվածների զգալի մասը բուհն ավարտելուց հետո, հնարավորության դեպքում, պատրաստ է մեկնել արտասահման: Այսպես, հարցաթերթում այս հարցին պատասխանել է աշակերտների 78%-ը: Նրանց 53%-ը հաստատաբար, իսկ 16%-ը՝ ամենայն հավանականությամբ, հնարավորության դեպքում, պատրաստ է մեկնել արտասահման՝ ուսման նպատակով (գծ. 1.22):



Գծ. 1.22. Արդյո՞ք պատրաստ եք բուհն ավարտելուց հետո մեկնել արտասահման (% ըստ բոլոր պատասխանների):


Աշխատելու նպատակով նույնպես, գրեթե նույնքան հարցված աշակերտ, պատասխանել է, որ պատրաստ է մեկնել արտասահման:

Մշտական բնակություն հաստատելու համար արտասահման մեկնելու ցանկություն ունեցողներն ավելի քիչ են: Հաստատապես *այո* է պատասխանել հարցվածների 31%-ը, ավելի շուտ՝ այո՝ 8%-ը, իսկ *ոչ* և *ավելի շուտ*՝ ոչ պատասխանները տրվել են համապատասխանաբար 29% և 15% աշակերտների կողմից:

Հարցաթերթի առանցքային հարցերից մեկն առնչվում էր նրան, թե ինչպես են աշակերտները ընկալում բուհում ստանալիք գիտելիքի և հմտությունների արտաքին

մրցունակությունը: Այսինքն՝ արդյոք կարող են արտերկրում իրենց ապագա մասնագիտությամբ աշխատանք գտնել (գծ. 1.23):


Այս հարցին պատասխանել է հարցվածների 84%-ը, պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.



Գծ. 1.23. <u>Ձեր կարծիքով, արդյո՞ք արտերկրում Ձեր մասնագիտությամբ աշխատանք կգտնեք հարցի պատասխանները</u>, տոկոս, հարցին պատասխանած աշակերտների ընդհանուր թվից

Ըստ այդմ, գերիշխում են լավատեսական ընկալումները սեփական մասնագիտական հնարավորությունների, արտերկրում պահանջվածության վերաբերյալ: Հարցին պատասխանածների 65 տոկոսը համոզված է, որ արտասահմանում պահանջված կլինի, իսկ 13.5%-ը՝ մեծ հավանականությամբ այդպես է կարծում:

Հարցման ընթացքում փորձ է արվել պարզել նաև, թե աշակերտները ինչպես են օգտագործում իրենց օրվա ժամանակը (գծ. 1.24):



Գծ. 1.24. <u>Օրական քանի՞ ժամ եք հատկացնում գործունեության տարբեր տեսակների</u> հարցի պատասխանների հաճախականությունները, % հարցվածների թվից

Կարելի է արձանագրել, որ սովորելու և համացանցի ու սոցիալական ցանցերի վրա օրվա ընթացքում ծախսվող միջին ժամանակները մոտավորապես հավասար են: Այսպես, հարցվածների 28%-ը սովորելու վրա ծախսում է օրական 1ժ-ից քիչ, իսկ 3ժ-ից ավելի ծախսում է հարցվածների միայն 35%-ը: Քիչ ժամանակ է ծախսվում ընթերցանության վրա՝ հարցվածների 11%-ն է օրական ընթերցում ավելի քան 3ժ.:

Աղյուսակ 1.15. Սովորելու վրա ծախսվող ժամանակը և բուհ ընդունվելու մտադրությունը

	Որքա՞ն ժամանակ եք օրական ծախսում սովորելու վրա				
Արդյո՞ք ցանկություն ունեք բուհում սովորելու	մինչև 1ժ	1-3ժ	3ժ-ից ավելի	չի պատ	Ընդ.
այո	17%	34%	36%	12%	100%
ավելի շուտ՝ այո	44%	35%	9%	12%	100%
ավելի շուտ՝ ոչ	55%	7%	14%	25%	100%
ոչ	48%	24%	8%	20%	100%
դժվ եմ պատ	32%	37%	16%	16%	100%
Ընդամենը	24%	32%	30%	14%	100%

Կարելի է նկատել, որ նրանք, ովքեր միանշանակ կողմնորոշվել են բուհ ընդունվելու հարցում, համապատասխան վարքագիծ են ցուցաբերում՝ ավելի շատ

սովորելով: Այսպես, բուհ ընդունվելու միանշանակ ցանկություն արտահայտած աշակերտների 36 տոկոսը օրական սովորելու վրա ծախսում է 3ժ-ից ավելի, իսկ *ավելի շուտ այո* պատասխանածների՝ միայն 9 տոկոսը: *Ոչ* պատասխանի դեպքում առկա է հակառակ պատկեր: Ստացվում է, որ դպրոցում սովորելը շատերի համար իմաստ ունի միայն եթե պլանավորում ես ընդունվել բուհ: Այսինքն՝ դպրոցը դիտվում է որպես բուհի միջանկյալ աստիճան և ոչ թե ինքնուրույն կրթական համակարգ:

Աղյուսակ 1.16. Ընթերցանության վրա ծախսված ժամանակն ու բուհ ընդունվելու ցանկությունը

	Որքան ժամանակ եք օրական ծախսում ընթերցանության վրա				
Արդյոք ցանկություն ունեք բուհում սովորելու	մինչև 1ժ	1-3ժ	3ժ-ից ավելի	չի պատաս.	Ընդամենը
այո	48%	28%	11%	13%	100%
ավելի շուտ՝ այո	44%	18%	18%	21%	100%
ավելի շուտ՝ ոչ	70%	7%	2%	20%	100%
ոչ	48%	28%	0%	24%	100%
դժվ եմ պատ	37%	39%	8%	16%	100%
Ընդամենը	48%	27%	10%	15%	100%

Ընդհանրապես, ընթերցանության վրա աշակերտները քիչ ժամանակ են ծախսում: 3 ժամից ավելի օրական ընթերցում է աշակերտների 10%-ը: Դրանից փոքր-ինչ ավելի շատ մասնաբաժին ունեն այն աշակերտները, որոնք ցանկանում են սովորել բուհում: Իսկ նրանք, ովքեր բուհ ընդունվելու ցանկություն չեն արտահայտել, ոչ միայն չեն սովորում, այլ նաև չեն ընթերցում:

Աղյուսակ 1.17. Բուհում սովորելու ցանկությունը և համացանցում անցկացրած ժամանակը


	Որքան ժամանակ եք օրական ծախսում Համացանցում				
Արդյոք ցանկություն ունեք բուհում սովորելու	մինչև 1ժ	1-3ժ	3ժ-ից ավելի	չի պատ.	Ընդ.
այո	30%	27%	28%	16%	100%
ավելի շուտ՝ այո	24%	12%	41%	24%	100%
ավելի շուտ՝ ոչ	9%	7%	50%	34%	100%
ոչ	12%	28%	28%	32%	100%
դժվ.եմպատ.	18%	26%	34%	21%	100%
Ընդ.	27%	24%	31%	19%	100%

Բուհում սովորելու ցանկություն ունեցողների 28%-ը համացանցում անցկացնում է 3 ժամից ավելի: Բուհում սովորելու ցանկություն չարտահայտած աշակերտների դեպքում այս ցուցանիշը 50% է: Հետաքրքրական է, որ Համացանցում օրական նույնքան ժամանակ են ծախսում թե այն աշակերտները, ովքեր միանշանակ որոշել են ընդունվել բուհ, և թե նրանք, ովքեր էլի միանշանակորեն որոշել են չընդունվել:

1.2. Շիրակի մարզի բուհերի ուսանողների հարցման արդյունքները


Ուսանողների շրջանում անցկացված հարցման հիմնական նպատակը բուհերի կողմից մատուցվող ծառայությունների որակից ուսանողների բավարարվածության գնահատումն է, մասնագիտական հմտությունների և տեսական գիտելիքի ընկալման վերաբերյալ պատկերացումների ամբողջացումը, աշխատաշուկայում տեղի ունեցող գործընթացների, մասնագիտությունների պահանջվածության, աշխատանքային հեռանկարների մասին ուսանողների պատկերացումների հետազոտությունը:

Հարցմանը մասնակցել է 354 ուսանող: Հարցվածները ներկայացնում է Գյումրու հետևյալ 4 բուհերը՝




Գծ 2.1. Հարցվածների տեսակարար կշիռն ըստ բուհերի

Հարցվածների 85%-ը բակալավրիատի ուսանողներ են, 15%-ը՝ մագիստրանտներ (գծ. 2.2):




Գծ 2.2. Ուսանողների բաշխումն ըստ կրթական աստիճանի

Հարցվածների 83%-ը առկա կրթաձևի ուսանողներ են, 17%-ը՝ հեռակա (գծ. 2.3):




Գծ 2.3. Ուսանողների բաշխումն ըստ կրթաձևի

Հարցվածների 21%-ը սովորում է անվճար, 79%-ը՝ վճարովի հիմունքներով (գծ. 2.4):




Գծ. 2.4.Հարցված ուսանողներն ըստ ուսումնառության ձևի




Գծ 2.5. Հարցված ուսանողներն ըստ կուրսի

Հարցվածների մեջ գերակշռում են ավագ կուրսերի ուսանողները (գծ. 2.5):



Գծ. 2.6. Հարցված ուսանողների բաշխումն ըստ սեռի



Գծ. 2.7. Հարցված ուսանողների բաշխումն ըստ առաջադիմության (ՄՈԳ-ը 20 բալային սանդղակով)

Հարցվածների մեջ գերակշռում են բարձր ՄՈԳ-ով ուսանողները (գծ. 2.7):

Ստորև փորձ է արվել դիտարկել հարցված ուսանողների առանձին բնութագրիչների փոխկապվածությունը:

Աղյուսակ 2.1. Կրթաձևը և առաջադիմությունը


	ՄՈԳ						
Կրթաձև	**8-10**	**10-12**	**12-14**	**14-16**	**16-18**	**18-20**	**Ընդ.**
Առկա	6,9%	9,3%	15,9%	18,6%	22,8%	26,6%	100,0%
Հեռակա	23,2%	8,9%	14,3%	37,5%	16,1%	0,0%	100,0%
Ընդ.	9,5%	9,2%	15,6%	21,7%	21,7%	22,3%	100,0%

Աղյուսակ 2.1-ում ի ցույց է դրված կրթաձևի և ուսանողների առաջադիմության կապը: Հեռակա սովորողները ունեն միջին և դրանից ցածր ՄՈԳ՝ տարբերություն առկա կրթաձևով սովորողների:

Աղյուսակ 2.2. Ուսումնառության ձևը և առաջադիմությունը

	ՄՈԳ						
Ուսումնառության ձևը	**8-10**	**10-12**	**12-14**	**14-16**	**16-18**	**18-20**	**Ընդ.**
Անվճար	2,7%	4,1%	2,7%	8,1%	17,6%	64,9%	100,0%
Վճարովի	11,4%	10,7%	19,1%	25,4%	22,8%	10,7%	100,0%
Ընդ.	9,5%	9,2%	15,6%	21,7%	21,7%	22,3%	100,0%

Անվճար սովորողներն ավելի բարձր ՄՈԳ ունեն: Վճարովի սովորողները միջին ՄՈԳ են արձանագրել: Սա խորհրդանշական է. մի կողմից՝ վճարովի համակարգում սովորողները, թերևս, իմաստ չեն տեսնում բարձր գնահատականներ ստանալու մեջ: Մյուս կողմից, եթե ՄՈԳը բարձր լինի, չի կարող անվճար սովորել:



Գծ. 2.8. <u>Ինչու եք ընտրել այն բուհը, որտեղ հիմա սովորում եք</u> հարցի պատասխանները, տոկոսներով, հարցված ուսանողների թվի նկատմամբ


Գծ. 2.8-ում պատասխանների հաճախականությունների հանրագումարը գերազանցում է 100 տոկոսը, քանի որ հարցվողներից յուրաքանչյուրը կարող էր ընտրել պատասխանի մեկից ավելի տարբերակներ: Ըստ այդմ, բուհն ընտրելու շարժառիթների թվում առաջնայինը կրթության որակի, բուհի վարկանիշի գործոններն են: Համեմատաբար հաճախադեպ է նաև *այլ տարբերակ չկար* պատասխանը (21.8%): Այսինքն, ընտրության սահմանափակությունը բավականին մեծ թվով դեպքերում կանխորոշում է ուսանողի կողմից բուհի և նույնիսկ՝ մասնագիտության ընտրությունը:

Աղյուսակ 2.3. Բուհը և այն ընտրելու շարժառիթը

Բուհն ընտրելու շարժառիթը										
Բուհը	կրթության որակն է կարևոր	արդի են ուսումնական ծրագրերը	բուհն ունի բարձր վարկանիշ, այստեղ սովորելը պատվաբեր է	ծնողներիս, ընկերներիս, բարեկամներիս խորհրդով	միակ հասանելի բուհն էր	իմ նախընտրած բուհը չկարողացավ ընդունել ինձ, ուստի ցանկությամբ հայտնվեցի այստեղ	ինձ համար միևնույն էր, թե որտեղ կընդունվեմ	այլ	Չի կրել պատասխանել	Ընդ
ՇՊՀ	19.8%	9.9%	3.7%	16.0%	28.4%	8.6%	7.4%	3.7%	2.5%	100.0%
ՀԱՊՀԳՄ	32.7%	10.2%	4.1%	16.3%	18.4%	2.0%	6.1%	8.2%	2.0%	100.0%
ՀՊՏՀԳՄ	38.2%	12.4%	16.6%	6.5%	13.8%	3.2%	2.3%	3.7%	3.2%	100.0%
ՀԳՊԱԳՄ	28.6%	0.0%	0.0%	0.0%	42.9%	14.3%	0.0%	0.0%	14.3%	100.0%
Ընդ.	33.1%	11.3%	11.6%	9.9%	18.4%	4.5%	4.0%	4.2%	3.1%	100.0%

Հարցված ուսանողների մոտ կոնկրետ բուհն ընտրելու շարժառիթների որոշակի տարբերություն կա՝ ըստ բուհերի: Այսպես, ՀՊՏՀ ԳՄ դեպքում շարժառիթների շարքում առաջնային է կրթության որակը, իսկ ՇՊՀ դեպքում՝ *այլ տարբերակ չկար* պատասխանը (աղյուսակ 2.3):

Ուսանողական հարցման կարևոր արդյունքներից մեկը բուհ ընդունվելու հիմնական շարժառիթների համալիր վերլուծությունն է: Հարցված ուսանողները շարժառիթների ներկայացված տարբերակները գնահատել են 5 միավորային սանդղակով: Գծ. 2.9-ում ներկայացված են շարժառիթների միջինացված գնահատականները:



Գծ. 2.9. Բուի ընդունվելու հիմնական շարժառիթների միջինացված գնահատականները, 5 միավորային համակարգով[1]

Կրթության բովանդակության և որակին առնչվող գործոններն առաջնային են համարվում: Դրա հետ միասին, 4 միավորից բարձր միջին գնահատական ունի նաև դիպլոմ ստանալու ձգտումը: Մյուս շարժառիթների միջին գնահատականը ավելի ցածր է: Ընդհանրապես, շարժառիթները կարելի է պայմանականորեն բաժանել 3 խմբերի՝ 4 միավորից բարձր միջին գնահատականով, 3-4 միավոր, 3 միավորից ցածր: Գծ. 2.9-ից երևում է, որ այսօրինակ բաժանումը ոչ միայն տեխնիկական, այլ նաև բովանդակային, որակական բնույթ է կրում:


[1]5-ը նշանակում է, որ տվյալ շարժառիթը ուսանողի հիմնական նպատակն է, իսկ 1-ը՝ տվյալ շարժառիթը ընդհանրապես կարևոր չէ իր համար:

Աղյուսակ 2.4. Ուսանողի ՄՈԳ-ը և բուհ ընդունվելու շարժառիթները

	Բուհ ընդունվելու շարժառիթի միջին գնահատականը										
ՄՈԳը	Ստանալ գիտելիք	Դիպլոմ ձեռք բերել	Ուսանողական կյանք	Նոր ընկերներ	Նոր կարգավիճակ	Հետ չմնալ մյուսներից	Լավ աշխատանք	Այլ գործունեություն չկար	Ծնողներիս ցանկ. է	Բարեհաջող ամուսնանալ	Դառնալ կիրթ մարդ
8-10	4,31	4,44	3,47	4,06	3,58	2,58	4,52	2,19	3,23	2,29	4,26
10-12	4,55	4,30	3,80	4,03	2,97	2,66	4,14	2,00	2,69	1,73	4,24
12-14	4,41	3,96	3,90	3,80	3,45	2,50	4,26	1,96	2,45	1,70	4,53
14-16	4,58	4,31	3,89	3,94	3,46	2,46	4,25	1,94	2,96	1,97	4,48
16-18	4,59	4,13	4,08	3,78	3,61	2,41	4,31	1,93	2,74	1,63	4,64
18-20	4,81	4,25	4,04	3,72	3,76	2,45	4,53	1,57	2,45	1,42	4,74

Աղյուսակ 2.4-ից երևում է, որ բարձր ՄՈԳ ունեցող ուսանողների պարագայում որակապես բարձր է գիտելիք ստանալու շարժառիթի գնահատականը. գերազանց սովորողների խմբում այն 4.81 է, մինչդեռ 8-10 ՄՈԳ ունեցող ուսանողների մոտ՝ միայն 4.31: Մյուս կողմից, ցածր առաջադիմությամբ ուսանողներն ավելի բարձր են գնահատել նոր ընկերներ ձեռք բերելու շարժառիթը: Բացի այդ, ցածր ՄՈԳ-ով ուսանողների մոտ բուհ ընդունվելու շարժառիթների շարքում *ծնողների ցանկությունն է* պատասխանը ավելի բարձր գնահատական է ստացել, քան գերազանց առաջադիմությամբ սովորող ուսանողների մոտ: Ստացվում է, որ անսալով ծնողների ցանկությանը, երբեմն նաև՝ դեմ գնալով սեփական ձգտումներին, ուսանողն ընդունվում է բուհ, բայց քանի որ դա իր որոշումը չէ, ապա բնականաբար բարձր առաջադիմություն չի ցուցաբերում:

Հետաքրքրական է ուսանողների՝ բուհ ընդունվելիս ունեցած սպասելիքների արդարացման մակարդակի գնահատումը: Այս հարցին պատասխանել է ընտրանքում ներառված ուսանողների 93%-ը: Նրանց միայն 14%-ն է համարում, որ իր սպասելիքներն ամբողջությամբ արդարացել են (գծ. 2.10):



Գծ. 2.10. Որքանո՞վ են արդարացել ձեր սպասելիքները բուհ ընդունվելիս

Մյուս կողմից, միայն 8.1%-ն է համարում, որ իր սպասելիքները ընդհանրապես չեն արդարացել, իսկ 70%-ը պատասխանել է, որ սպասելիքները արդարացել են, սակայն՝ մասամբ:

Աղյուսակ 2.5. Առաջադիմությունը և սպասելիքների արդարացումը

	Որքանով են արդարացել սպասելիքները						
ՄՈԳ	ամբողջ. արդարացել են	ընդհ չեն արդ.	մասամբ են արդ.	ավելին, քան սպասում էի	այլ	չի պատ.	Ընդ.
8-10	14,0%	14,8%	7,2%	12,5%	9,1%	28,6%	9,5%
10-12	14,0%	3,7%	8,9%	12,5%	0,0%	14,3%	9,2%
12-14	14,0%	11,1%	16,2%	25,0%	0,0%	28,6%	15,6%
14-16	20,0%	25,9%	21,3%	25,0%	27,3%	14,3%	21,7%
16-18	14,0%	37,0%	23,4%	6,3%	18,2%	0,0%	21,7%
18-20	24,0%	7,4%	23,0%	18,8%	45,5%	14,3%	22,3%
Ընդ.	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%

Սպասելիքները ընդհանրապես չեն արդարացել պատասխան տված ուսանողների մեծ մասի առաջադիմությունը միջինից բարձր է, բայց առավելագույն միջակայքում չէ: Կարելի է ենթադրել, որ հենց սպասելիքների չարդարանալն է այն զսպող գործոնը հանդիսացել, ինչը թույլ չի տվել ավելի լավ օգտագործել իրենց մարդկային կապիտալի ներուժային հնարավորությունները: Ըստ այդմ,

սպասելիքները ուսանողների համար կարևոր մոտիվացիոն մեխանիզմ են հանդիսանում:

Աղյուսակ 2.6. Առաջադիմությունը և սպասելիքների արդարացումը. մեկ այլ դիտակետ

	Որքանով են արդարացել սպասելիքները						
ՄՈԳ	ամբողջ. արդարացել են	ընդհ չեն արդ.	մասամբ են արդ.	ավելին, քան սպասում էի	այլ	չի պատ.	Ընդ.
8-10	21,2%	12,1%	51,5%	6,1%	3,0%	6,1%	100,0%
10-12	21,9%	3,1%	65,6%	6,3%	0,0%	3,1%	100,0%
12-14	13,0%	5,6%	70,4%	7,4%	0,0%	3,7%	100,0%
14-16	13,3%	9,3%	66,7%	5,3%	4,0%	1,3%	100,0%
16-18	9,3%	13,3%	73,3%	1,3%	2,7%	0,0%	100,0%
18-20	15,6%	2,6%	70,1%	3,9%	6,5%	1,3%	100,0%
Ընդ.	14,5%	7,8%	67,9%	4,6%	3,2%	2,0%	100,0%


Աղյուսակ 2.6-ից բխում է, որ ամբողջությամբ արդարացած սպասելիքների՝ միջինից բարձր մակարդակ ունեն ցածր առաջադիմությամբ ուսանողները: Բարձր առաջադիմության (16-18 ՄՈԳ) պարագայում՝ սպասելիքներն ավելի շուտ չեն արդարացել: Այսպիսով, մի կողմից, չնայած այն բանին, որ 16-18 խմբում սպասելիքները չեն արդարացել, ուսանողները շարունակում են սովորել և հակառակը՝ մինչև 12 խմբում սպասելիքները լիովին արդարացել են, բայց ուսանողները շարունակում են վատ սովորել: Կարելի է նկատել, որ վատ սովորողները ավելին չեն սպասել, իսկ լավ սովորողները չնայած սպասել են ավելիին, սակայն դրա չիրականանալը չի խանգարել, որ միջինից զգալիորեն բարձր առաջադիմություն ցուցաբերեն:

Աղյուսակ 2.7. Բուհի ընտրությունը և սպասելիքների արդարացումը

	Որքանով են արդարացել սպասելիքները						
Բուհը	ամբողջ. արդարացել են	ընդհ չեն արդ.	մասամբ են արդ.	ավելին, քան սպասում էի	այլ	չի պատ.	Ընդ.
ՇՊՀ	9,9%	12,3%	65,4%	9,9%	2,5%	0,0%	100,0%
ՀԱՊՀ ԳՄ	18,4%	8,2%	69,4%	2,0%	0,0%	2,0%	100,0%
ՀՊՏՀ ԳՄ	15,2%	6,0%	69,6%	3,2%	2,8%	3,2%	100,0%
ՀԳՊԱ ԳՄ	0,0%	14,3%	28,6%	14,3%	42,9%	0,0%	100,0%
Ընդ.	14,1%	7,9%	67,8%	4,8%	3,1%	2,3%	100,0%

Հարցմանը մասնակցած ՀՊՏՀ ԳՄ ուսանողների միայն 6%-ն է համարում, որ իր սպասելիքները չեն արդարացել ընդհանրապես: Համադրվող մյուս բուհերի պարագայում այս ցուցանիշն ավելի բարձր է: Մյուս կողմից, ՀՊՏՀ ԳՄ ուսանողների 15 տոկոսից ավելին նշել է, որ սպասելիքներն ամբողջությամբ արդարացել են: ՇՊՀ պարագայում այս ցուցանիշը մոտ 10% է:

Հարցված ուսանողներին խնդրել ենք պատասխանել նաև այն հարցին, թե ինչպիսին կլիներ մասնագիտության և բուհի ընտրությունը, եթե նորից ընտրելու հնարավորություն ստեղծվեր:



Գծ. 2.11. Եթե նորից բուհ և մասնագիտություն ընտրելու հնարավորություն ունենայի, ապա…


Հարցվածների 36%-ը կընտրեր այլ մասնագիտություն, 18.4%-ը՝ այլ բուհ: Եվ միայն ¼ մասը կընտրեր նույն մասնագիտությունը կամ նույն բուհը:

Ստորև փորձ է արվել դիտարկել այս հարցի պատասխանների կապը կոնկրետ բուհի ընտրության հետ:

Աղյուսակ 2.8. Բուհի ընտրությունը և նորից ընտրելու տարբերակները

	Եթե նորից բուհ և մասնագիտություն ընտրելու հնարավորություն ունենայի, ապա կընտրեի				
Բուհը	նույն մասն և նույն բուհը	նույն մասն, բայց այլ բուհ	այլ մասն	դժվ եմ պատ	Ընդ.
ՇՊՀ	19,8%	12,3%	45,7%	22,2%	100,0%
ՀԱՊՀ ԳՄ	39,6%	14,6%	29,2%	16,7%	100,0%
ՀՊՏՀ ԳՄ	23,1%	20,8%	34,4%	21,7%	100,0%
ՀԳՊԱ ԳՄ	14,3%	42,9%	28,6%	14,3%	100,0%
Ընդ.	24,4%	18,4%	36,2%	21,0%	100,0%


ՇՊՀ հարցված ուսանողների մոտ 46%-ը կնախընտրեր այլ մասնագիտություն ստանալ: Սա ամենաբարձր ցուցանիշն է՝ համադրվող բուհերի շարքում: ՀԱՊՀ ԳՄ սովորողները ավելի քիչ են հակված փոփոխությունների, հավանաբար որովհետև ընտրությունը կատարվում է առանձնահատուկ մասնագիտությունների շրջանում՝ հիմքում ունենալով իրապես կոչումը, քան հանրային ընկալումները կամ ծնողների ցանկությունը:



Գծ. 2.12. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր ընտանիքի ֆինանսական վիճակը

Հարցվածների 1/3-ից ավելին հրաժարվել է պատասխանել ընտանիքի ֆինանսական վիճակի վերաբերյալ հարցին, 10%-ը դժվարացել է պատասխանել: Մյուսների ընտանիքները, ըստ էության, հիմնականում ունեն բարեկեցության միջին մակարդակ:

Անդրադառնանք այն հարցին, թե ինչպես են ուսանողներն ընկալում բուհի գիտելիքներով աշխատանք գտնելու հնարավորությունները (գծ. 2.13):



Գծ. 2.13. Ուսանողների պատասխանները <u>արդյո՞ք մասնագիտական գիտելիքները, որոնք սրացել եք բուհում, մեծացրել են աշխատանք գտնելու հավանականությունը</u> հարցին, % հարցվածների ընդհանուր թվից

Հարցվածների կեսից ավելին լավատես է և համարում է, որ մեծ է բուհի գիտելիքներով աշխատանք գտնելու հավանականությունը: Մյուս կողմից, այս հարցում թերահավատ է հարցվածների ավելի քան 26%-ը, իսկ 14.4%-ը դժվարացել է պատասխանել, ինչը որոշ մոտավորությամբ ևս կարելի է դիտարկել որպես անվստահության դրսևորում:


Աղյուսակ 2.9. Ուսանողների առաջադիմությունը և բուհի տված գիտելիքներով աշխատանք գտնելու հնարավորության ընկալումը

Արդյո՞ք մասնագիտական գիտելիքները, որոնք ստացել եք բուհում, մեծացրել են աշխատանք գտնելու հնարավորությունը

ՄՈԳ	այո	ավելի շուտ՝ այո	ավելի շուտ՝ ոչ	ոչ	դժվ. եմ պատ.	չի պատ.	Ընդ.
8-10	36%	15%	15%	12%	15%	6%	100%
10-12	44%	19%	16%	13%	6%	3%	100%
12-14	33%	22%	7%	11%	20%	6%	100%
14-16	35%	23%	19%	8%	16%	0%	100%
16-18	28%	25%	17%	19%	9%	1%	100%
18-20	32%	29%	14%	5%	18%	1%	100%
Ընդ.	34%	23%	15%	11%	15%	2%	100%


Աղյուսակ 2.9-ից կարելի է արձանագրել, որ ընդհանուր առմամբ, աշխատանք գտնելու հարցում ապագա վստահությունն ուսանողի ընթացիկ առաջադիմության հետ կապ ունի: *Ոչ* և *ավելի շուտ ոչ* պատասխանները գերակշռում են ցածր առաջադիմություն ունեցողների մոտ: Դրանով հանդերձ, բարձր առաջադիմություն ունեցողների մոտ ևս իրենց ապագայի առնչությամբ անվստահության որոշ տարրեր կան: Մասնավորապես՝ գերազանց սովորող ուսանողների 18%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին, 14%-ն էլ համարում է, որ բուհում ստացած մասնագիտական գիտելիքները ավելի շուտ չեն մեծացրել աշխատանք գտնելու հնարավորությունները:

Հետաքրքրական կարող է դիտվել ուսանողների ընկալումը՝ ՀՀ-ում աշխատանքին նպաստող գործոնների համադրման մասով: 5 բալային համակարգում գնահատելով մի շարք գործոնների կարևորությունը, ստացվել են գծ. 2.14-ում բերված միջինացված արդյունքները:



Գծ. 2.14. Աշխատանք գտնելու նպաստող հիմնական գործոնների միջինացված գնահատականները, ըստ հարցված ուսանողների, 5 բալային համակարգով

Միջինացված գնահատականի առավելագույն մակարդակը ստացվել է մասնագիտական հմտությունների, աշխատասիրության և տաղանդի պարագայում: Պակաս կարևոր են համարվել հաջողակ լինելը, կապերը և ֆինանսական հնարավորությունները:




Գծ. 2.15. Համապատասխան գործոնի կարևորությունը առավելագույն՝ 5 միավոր գնահատած ուսանողների տեսակարար կշիռը հարցվածների ընդհանուր թվի նկատմամբ, տոկոսներով

Մասնագիտական հմտությունների կարևորությանն առավելագույն գնահատական է տվել հարցված ուսանողների 60%-ը: Մյուս կողմից, հարցվածների 1/3-ը համարում է, որ կապերը ևս վճռական նշանակություն ունեն աշխատանքի տեղավորման հարցում (գծ. 2.15):

Աղյուսակ 2.10. Առաջադիմության առնչությունը աշխատանք գտնելուն նպաստող գործոնների հետ

	Որո՞նք են Հայաստանում աշխատանք գտնելուն նպաստող հիմնական գործոնները					
ՄՈԳ	Բախտ	Աշխատասիրություն	Կապեր	Տաղանդ	Փող	Մասնագիտական հմտություն
8-10	3,9	4,3	4,1	4,4	3,5	4,2
10-12	4,3	4,4	4,1	4,6	3,3	4,6
12-14	4,1	4,6	4,0	4,4	3,3	4,5
14-16	3,9	4,6	3,7	4,5	3,1	4,6
16-18	4,1	4,6	3,6	4,5	3,0	4,8
18-20	4,2	4,6	4,0	4,7	3,0	4,7

Աղյուսակ 2.10-ից ակնառու է, որ ցածր առաջադիմություն ունեցողները պակաս կարևոր նշանակություն են տալիս աշխատասիրությանը, ամենացածր առաջադիմություն ունեցողները բարձրագույն կրթություն ստանալը կարևոր չեն համարում ապագա աշխատանքում, այսինքն՝ նրանք ընդհանրապես մոտիվացված չեն սովորելու հարցում: Ավելի կարևոր է համարվում փողը, նաև՝ համապատասխան կապեր ունենալը: Կարելի է արձանագրել, որ իրենց ՄՈԳ-ի ցածր լինելը ոչ թե պատահականություն է, այլ սովորելը լիարժեքորեն չկարևորելու հետևանք:




Գծ. 2.16. <u>Ի՞նչն եք առավել կարևոր համարում Ձեր ապագա աշխատանքում</u> հարցի պատասխանների բաշխվածությունը, % հարցմանը մասնակցած ուսանողների ընդհանուր թվից[2]

Հարցված ուսանողների մեծ մասը ապագա աշխատանքում առաջնային կարևորություն է տալիս վարձատրությանը (գծ. 2.16): Փաստենք, որ եթե աշակերտները նույն հարցերին ավելի շատ ռոմանտիկ, երկնային պատասխաններ էին տալիս, ապա ուսանողների մոտեցումը շատ ավելի պրակտիկ ու պրագմատիկ է: Արդ, կարևորվում է բարձր վարձատրությունը, աշխատանքի հետաքրքիր լինելը և հետո նոր՝ մասնագիտության հետ համապատասխանությունը: Մյուս կողմից, շատ ցածր է ստեղծագործականության կարևորության գնահատականը, սեփական կարողությունների համապատասխանելը, հասարակության համար օգտակար լինելը: Սա մտահոգիչ կարելի է համարել որոշ առումներով: Դրանով հանդերձ՝ արտացոլում է մեր իրողությունը. աշխատանքը գերխնդիր է և այս ընկալումը բուհում ավելի խորն է, քան դպրոցի աշակերտների դեպքում:

[2] Տոկոսների հանրագումարը գերազանցում է 100-ը, քանի որ հարցվածները նշել են մինչև 3 պատասխան:

Հարցված ուսանողների 96 տոկոսը պատասխանել է բուհն ավարտելուց հետո հնարավոր աշխատավայրի մասին հարցին (գծ. 2.17): Հարցվածների կեսից ավելին նախընտրում է մնալ և աշխատել Շիրակի մարզում, 22.5%-ը ցանկանում է աշխատանք գտնել Երևանում: Այս հարցում չկողմնորոշված է միայն 17%-ը:



Գծ. 2.17. Որտե՞ղ եք մտադիր աշխատել բուհն ավարտելուց հետո հարցի պատասխանները.

Համեմատելով նույն հարցին դպրոցների աշակերտների և ուսանողների տված պատասխանները, կարելի է արձանագրել, որ ուսանողների պարագայում ավելի շատ են Շիրակի մարզում մնալ ցանկացողները: Սա ևս պրագմատիկ մոտեցման դրսևորում կարելի է համարել:


Փորձենք հասկանալ, թե աշխատավայրի մասով կողմնորոշումը որևէ կապ ունի առաջադիմության հետ

Աղյուսակ 2.11. Ուսանողների առաջադիմությունը և նախընտրելի աշխատավայրը

	Աշխատավայրի նախընտրությունը						
ՄՈԳ	Շիրակի մարզ	Երևան	այլ մարզեր	արտերկիր	այլ	դժվ եմ պատ	Ընդ.
8-10	34,4%	31,3%	3,1%	12,5%	3,1%	15,6%	100,0%
10-12	54,8%	16,1%	0,0%	0,0%	0,0%	29,0%	100,0%
12-14	59,6%	19,2%	0,0%	0,0%	5,8%	15,4%	100,0%
14-16	48,6%	25,0%	2,8%	2,8%	4,2%	16,7%	100,0%
16-18	57,5%	21,9%	0,0%	2,7%	5,5%	12,3%	100,0%
18-20	50,7%	24,0%	0,0%	6,7%	2,7%	16,0%	100,0%
Ընդ.	51,9%	23,0%	0,9%	3,9%	3,9%	16,4%	100,0%

Բարձր առաջադիմություն ունեցողների ավելի մեծ մասն է ցանկանում մնալ աշխատելու Շիրակի մարզում, քան ցածր առաջադիմություն ունեցողների պարագայում: Կարելի է ենթադրել, որ վատ սովորելու պատճառներից մեկն էլ այն է, որ ուսանողը չի պլանավորում մնալ աշխատելու Շիրակի մարզում, ցանկանում է դուրս գալ, առնվազն՝ Երևան՝ 31.3%, կամ՝ արտերկիր՝ 12.5%: Հետաքրքրական է, որ արտերկիր գնալու ամենամեծ ցանկություն ցուցաբերել են ամենավատ, հետո՝ ամենալավ սովորողները:

Ուսանողների հարցման կարևոր ասպեկտներից մեկը ժամանակային ռեսուրսի օգտագործման դիտարկումն է:



Գծ. 2.18. Օրական միջինում քանի ժամ եք հատկացնում հարցի պատասխանների բաշխվածությունը

Սովորելուն օրական 3ժ-ից ավելի տրամադրում է հարցված ուսանողների միայն 23%-ը, մինչդեռ 40%-ը նույնքան ժամանակ է հատկացնում Համացանցին, սոցիալական ցանցերին:

Աղյուսակ 2.12. Առաջադիմությունը և սովորելուն հատկացված ժամանակը

	Սովորելուն հատկացվող օրական ժամանակը			
ՄՈԳ	մինչև 1ժ	1-3ժ	3ժ-ից շատ	Ընդ.
8-10	48,4%	48,4%	3,2%	100,0%
10-12	31,0%	51,7%	17,2%	100,0%
12-14	26,0%	64,0%	10,0%	100,0%
14-16	29,6%	45,1%	25,4%	100,0%
16-18	16,4%	57,5%	26,0%	100,0%
18-20	15,8%	47,4%	36,8%	100,0%
Ընդ.	24,8%	52,1%	23,0%	100,0%

Ինչպես և կարելի էր սպասել, բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների մեծ մասը շատ ժամանակ է ծախսում սովորելու վրա: Եվ հակառակը. օրինակ՝ 8-10 ՄՈԳ ունեցող ուսանողների շուրջ կեսը սովորելուն հատկացնում է 1ժ-ից ոչ ավելի, իսկ 3ժ-ից շատ օրական սովորում է ցածր ՄՈԳ ունեցողների միայն 3.2%-ը:

Հարցված ուսանողների մեծ մասը քիչ է ընթերցում, և այստեղ առաջադիմությամբ պայմանավորված առանձնահատկություններ, թերևս, չկան (աղյուսակ 2.13):

Աղյուսակ 2.13. Առաջադիմությունը և ընթերցանությանը հատկացվող ժամանակը

	Ընթերցանությանը հատկացվող օրական ժամանակը			
ՄՈԳ	մինչև 1ժ	1-3ժ	3ժ-ից շատ	Ընդ.
8-10	74,2%	19,4%	6,5%	100,0%
10-12	58,6%	27,6%	13,8%	100,0%
12-14	59,2%	30,6%	10,2%	100,0%
14-16	45,1%	40,8%	14,1%	100,0%
16-18	44,4%	44,4%	11,1%	100,0%
18-20	43,2%	47,3%	9,5%	100,0%
Ընդ.	50,6%	38,3%	11,0%	100,0%

Հետաքրքրական է, որ միջին ՄՈԳ ունեցողները ընթերցանությանը ավելի շատ ժամանակ են տրամադրում, քան ամենացածր ու ամենաբաձր առաջադիմությամբ սովորող ուսանողները:

Աղյուսակ 2.14. Առաջադիմությունը և Համացանցին հատկացվող ժամանակը

	Համացանցին հատկացվող օրական ժամանակը			
ՄՈԳ	մինչև 1ժ	1-3ժ	3ժ-ից շատ	Ընդ.
8-10	38,7%	19,4%	41,9%	100,0%
10-12	20,7%	48,3%	31,0%	100,0%
12-14	30,6%	30,6%	38,8%	100,0%
14-16	20,0%	31,4%	48,6%	100,0%
16-18	22,2%	37,5%	40,3%	100,0%
18-20	35,6%	31,5%	32,9%	100,0%
Ընդ.	27,5%	33,0%	39,5%	100,0%

Ուսանողների՝ ըստ առաջադիմության բոլոր խմբերը գրեթե նույնքան ժամանակ են հատկացնում Համացանցին և սոցցանցերին: Գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողների պարագայում, թերևս, օրական 3ժ-ից ավելի Համացանցում անցկացնողների տեսակարար կշիռը (33%) ուսանողների մյուս խմբերի համեմատ մի փոքր ցածր է:

Աղյուսակ 2.15. Ուսուցման համակարգը և սովորելուն հատկացվող ժամանակը

	Սովորելուն հատկացվող օրական ժամանակը			
Ուսուց. համակ.	մինչև 1ժ	1-3ժ	3ժ-ից շատ	Ընդ.
անվճար	17,6%	50,0%	32,4%	100,0%
վճարովի	26,7%	53,1%	20,2%	100,0%
Ընդ.	24,7%	52,4%	22,9%	100,0%

Անվճար ուսուցման համակարգում սովորողները, միջինում ավելի շատ ժամանակ են ծախսում սովորելու վրա, քան վճարովի համակարգում սովորողները (աղյուսակ 2.15):

Աղյուսակ 2.16. Գիտելիք ստանալու շարժառիթը և սովորելուն հատկացվող ժամանակը

	Սովորելուն հատկացվող օրական ժամանակը			
Շարժառիթի գնահատ.	մինչև 1ժ	1-3ժ	3ժ-ից շատ	Ընդ.
2	2,4%	0,6%	0,0%	0,9%
3	19,3%	17,0%	0,0%	13,7%
4	19,3%	9,9%	2,7%	10,6%
5	59,0%	72,5%	97,3%	74,8%
Ընդ.	100,0%	100,0%	100,0%	100,0%

Սովորելու վրա մինչև 1ժ ծախսող ուսանողների 59%-ը բուհ է ընդունվել գիտելիք ստանալու և լավ մասնագետ դառնալու համար (համենայն դեպս՝ այդ շարժառիթին տվել են առավելագույն՝ 5 միավոր, աղյուսակ 2.16): Ավելին, գիտելիք ստանալու շարժառիթն առաջնային համարած ուսանողների 30%-ն է, որ օրական սովորելու վրա ծախսում է 3ժ-ից ավելի: 50%-ը 1-3ժ. է սովորում օրեկան, 20%-ը՝ մինչև 1ժ.: Ստացվում է, որ կամ գիտելիք ստանալն ու լավ մասնագետ դառնալը առաջնային գերակայություն համարող ուսանողների զգալի մասը չի պատկերացնում, որ դրա համար անհրաժեշտ է ավելի շատ ժամանակ հատկացնել սովորելուն, կամ էլ՝ բուհերում պահանջները խիստ չեն, ուսանողները հարկադրված չեն շատ ջանք գործադրել սովորելու համար:

Աղյուսակ 2.17. Դիպլոմ ստանալու շարժառիթը և սովորելուն հատկացվող ժամանակը

	Սովորելուն հատկացվող օրական ժամանակը			
Շարժառիթի գնահատ.	մինչև 1ժ	1-3ժ	3ժ-ից շատ	Ընդ.
1	5,0%	3,6%	8,2%	5,0%
2	6,3%	6,0%	5,5%	5,9%
3	15,0%	9,6%	2,7%	9,4%
4	21,3%	23,4%	13,7%	20,6%
5	52,5%	57,5%	69,9%	59,1%
Ընդ.	100,0%	100,0%	100,0%	100,0%

Սովորելու վրա օրական 3ժ-ից ավելի ծախսող ուսանողների 70%-ը դիպլոմ ստանալու շարժառիթը գնահատել է առավելագույն՝ 5 միավորով: Ավելին, այս շարժառիթը գերակա համարողների մեծ մասը սովորելու վրա օրական միջինում ծախսում է 1-3ժ:

Աղյուսակ 2.18. Ծնողների ցանկությամբ առաջնորդվելու շարժառիթը և սովորելուն հատկացվող ժամանակը

	Սովորելուն հատկացվող օրական ժամանակը			
Շարժառիթի գնահատ.	մինչև 1ժ	1-3ժ	3ժ-ից շատ	Ընդ.
1	18,6%	51,5%	29,9%	100,0%
2	34,7%	50,7%	14,7%	100,0%
3	16,7%	60,0%	23,3%	100,0%
4	50,0%	40,9%	9,1%	100,0%
5	31,6%	57,9%	10,5%	100,0%
Ընդ.	25,2%	51,8%	23,0%	100,0%

Ծնողների ցանկությամբ առաջնորդվելու շարժառիթը առավելագույն միավորով գնահատած ուսանողների մեծ մասը սովորելու վրա քիչ ժամանակ է ծախսում, քան նրանք, ովքեր այս շարժառիթի համար տվել են նվազագույն գնահատականներ (աղյուսակ 2.18):

Ինչպես և կարելի էր ակնկալել, այն ուսանողները, ովքեր այլ զբաղմունք չունենալու պատճառով են բուհ ընդունվել (այս շարժառիթը գնահատել են 5 միավոր), սովորելու վրա շատ քիչ ժամանակ են ծախսում (աղյուսակ 2.19): Հետևաբար՝ ճիշտ շահադրդրումը մարդկային կապիտալի զարգացման առանցքային գրավականն է: Հակառակ դեպքում առկա է այդ նույն կապիտալի վատնում:

Աղյուսակ 2.19. Այլ զբաղմունք չունենալու շարժառիթը և սովորելուն հատկացվող ժամանակը

	Սովորելուն հատկացվող օրական ժամանակը			
Շարժառիթի գնահատ.	մինչև 1ժ	1-3ժ	3ժ-ից շատ	Ընդ.
1	18,6%	51,5%	29,9%	100,0%
2	34,7%	50,7%	14,7%	100,0%

3	16,7%	60,0%	23,3%	100,0%
4	50,0%	40,9%	9,1%	100,0%
5	31,6%	57,9%	10,5%	100,0%
Ընդ.	25,2%	51,8%	23,0%	100,0%

Ստորև աղյուսակ 2.20-ում ներկայացված են բուհում կրթության որակի գնահատման համար ուսանողներին առաջադրված չափանիշներին տրված գնահատականների միջինացված մեծությունները, ինչպես նաև՝ նվազագույն (1) և առավելագույն (5) գնահատականների հաճախականությունները:

Աղյուսակ 2.20. Կրթության որակի չափանիշների միջինացված գնահատականները

	Գնահատման չափանիշը (հարցը)	**Չափանիշի միջին գնահատա-կանը**	**5 միավորի հաճախա-կանությունը**	**1 միավորի հաճախա-կանությունը**
1.	Որքա՞ն կգնահատեք Ձեր բուհի կողմից տրամադրվող կրթության որակն ընդհանուր առմամբ	3.72	19.2%	2.1%
2.	Որքանո՞վ է Ձեր բուհում ուսման վարձավճարը համապատասխանում կրթության որակին	3.26	10.6%	7.3%
3.	Ի՞նչ չափով եք բավարարված Ձեր ստացած տեսական գիտելիքներով	3.58	16.4%	3.9%
4.	Որքանո՞վ եք բավարարված ստացված գործնական գիտելիքներով	3.04	9.7%	10.9%
5.	Որքանո՞վ եք բուհում սովորելու հարցում մոտիվացված	3.36	14.9%	7.5%
6.	Որքանո՞վ եք բավարարված կրթական ծրագրի բովանդակությամբ (որքանով է այն արդյունավետ և կազմված պիտանի, ոչ ավելորդ դասընթացներից)	3.20	11.5%	8.8%
7.	Որքա՞ն եք գնահատում ուսումնամեթոդական նյութերով (դասագրքեր, դասախոսության նյութեր և այլն) ապահովվածության մակարդակը	3.26	12.2%	7.0%
8.	Որքա՞ն կգնահատեիք լսարաններով ապահովվածությունը, լսարանների վիճակը և հագեցվածությունը	3.61	28.0%	7.9%
9.	Որքանո՞վ եք բավարարված համակարգչային սրահների առկայությամբ և դրանց հագեցվածությամբ	3.32	21.7%	10.1%
10	Որքանո՞վ եք բավարարված պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական մակարդակով	3.73	22.3%	5.2%
11.	Ինչպե՞ս եք գնահատում դասախոսների մանկավարժական հմտությունների մակարդակը	3.74	21.2%	3.4%
12.	Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության ընթացքում պրոֆեսորադասախոսական կազմի ցուցաբերած պատրաստակամությամբ, աջակցությամբ	3.88	27.4%	2.8%
13	Որքանո՞վ եք բավարարված դասախոսների օբյեկտիվությունից	3.48	17.0%	8.4%

	Գնահատման չափանիշը (հարցը)	Չափանիշի միջին գնահատա-կանը	5 միավորի հաճախա-կանությունը	1 միավորի հաճախա-կանությունը
14	Որքա՞ն եք գնահատում ուսուցման գործընթացում նորարարական տեխնոլոգիաների կիրառման մակարդակը	3.24	14.8%	9.5%
15	Որքանո՞վ եք բավարարված բուհում ուսանողների հետազոտական գործունեության կազմակերպումից (գիտաժողովներ, սեմինարներ և այլն)	3.45	17.8%	4.6%
16	Որքանո՞վ եք բավարարված բուհում Ձեր իրավունքների պաշտպանությունից	3.70	24.5%	5.6%
17.	Գնահատեք Ձեր բուհում որոշումների ընդունմանը ուսանողների ներգրավվածության աստիճանը	3.55	16.4%	4.9%
18	Որքա՞ն եք գնահատում բուհում ստեղծագործական ինքնարտահայտման/ զարգացման հնարավորությունները (սպորտային, մշակութային, ժամանցային այլ գործունեություն)	3.16	13.8%	8.9%
19	Ինչպե՞ս եք գնահատում Ձեր բուհի հեղինակությունը (իմիջը) ՀՀ կրթական համակարգում	3.65	22.3%	3.9%
20	Որքանո՞վ եք բավարարված բուհ-ում տեղի ունեցող բարելավումներով, դրանց արդյունքներով	3.57	21.5%	7.6%

Հարցված ուսանողները առավելագույն գնահատական են տվել իրենց բուհերում դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական պատրաստվածությանը, օգտակար լինելու պատրաստակամությանը, կրթական ծառայությունների որակին՝ ընդհանուր առմամբ:

Նվազագույն գնահատականներ են տրվել բուհում գործնական գիտելիքների ստացմանը, կրթական ծրագրերի բովանդակությանը, կրթական գործընթացում նորարարական մեթոդների կիրառությանը:

Ի հավելումն կարելի է նկատել, որ լավագույն և վատագույն գնահատականների մակարդակներում էական տարբերություններ չկան: Բոլոր չափանիշների միջինացված գնահատականները գտնվում են 3-4 միջակայքում, ինչը նաև նշանակում է, որ ուսանողների զգալի մասը կատարել է համահարթեցված գնահատում՝ առանց տարբերակման վրա ժամանակ ծախսելու:

Աղյուսակ 2.21. Առաջադիմությունը և բուհում կրթական ծառայությունների որակի առանձին չափանիշների գնահատականները

	Որակի չափանիշը[3]											
ՄՈԳ	1	2	4	5	6	9	10	13	14	16	19	20
«8-10»	4,06	3,56	3,48	3,20	3,55	3,63	4,03	3,86	3,52	4,14	3,93	3,71
«10-12»	3,75	3,56	3,44	3,70	3,27	3,19	3,65	3,73	3,26	3,96	4,00	4,13
«12-14»	3,69	3,25	3,06	3,12	2,98	3,30	3,80	3,33	3,38	3,38	3,60	3,62
«14-16»	3,85	3,29	3,01	3,27	3,31	3,36	3,79	3,40	3,41	3,87	3,73	3,58
«16-18»	3,42	2,89	2,74	3,36	3,03	3,30	3,41	3,26	2,99	3,44	3,35	3,23
«18-20»	3,79	3,35	3,04	3,55	3,23	3,25	3,85	3,61	3,13	3,77	3,67	3,58

Գերազանց առաջադիմությամբ սովորողները կրթության որակը բուհում ավելի բարձր են գնահատել, քան 16-18 միջակայքում ՄՈԳ ունեցողները (որակի չափանիշ 1): Ընդհանրապես, միջին ՄՈԳ ունեցող ուսանողների պարագայում որակի չափանիշների գնահատականների տարբերություններն ավելի ընդգծված բնույթ ունեն, քան ամենացածր և ամենաբարձր ՄՈԳ ունեցողների դեպքում է: Սա կարելի է, թերևս, բացատրել, գնահատականով պայմանավորված որոշ կարծրատիպային, վարքագծային մոդելներով կաշկանդված չլինելու, ավելի օբյեկտիվ գնահատականներ տալու հանգամանքով:

Աղյուսակ 2.22. Կրթաձևը և բուհում կրթական ծառայությունների որակի գնահատականը

	Կրթական ծառայությունների որակը բուհում, միավոր					
Կրթաձևը	1	2	3	4	5	Ընդ.
Անվճար	1,4%	7,0%	29,6%	45,1%	16,9%	100,0%
Վճարովի	2,3%	4,6%	30,9%	42,4%	19,8%	100,0%
Ընդ.	2,1%	5,1%	30,6%	42,9%	19,2%	100,0%

Անվճար կրթաձևով սովորողները պակաս բավարարված են բուհում կրթության ընդհանուր որակով, քան վճարովի սովորողները: Մի կողմից սա կարող է

[3] Չափանիշների համարակալումը համապատասխանում է աղյուսակ 2.20-ում ներկայացված հերթական համարներին:

տարակուսելի թվալ, այնուհանդերձ պետք է փաստել, որ վճարովի սովորողները պակաս պահանջատեր են կամ էլ քիչ ակնկալիքներ ունեն կրթական համակարգից և մասնավորապես՝ բուհից:

Աղյուսակ 2.23. Կրթաձևը և բուհում կրթական ծառայությունների վճարի գնահատականը

	Վարձավճարի համապատասխանությունը կրթության որակին					
Կրթաձևը	1	2	3	4	5	Ընդ.
Անվճար	8,7%	11,6%	23,2%	46,4%	10,1%	100,0%
Վճարովի	6,9%	14,5%	38,2%	29,8%	10,7%	100,0%
Ընդ.	7,3%	13,9%	35,0%	33,2%	10,6%	100,0%

Վճարովի կրթաձևում սովորողները վարձավճարի համապատախանությունը կրթության որակին ավելի ցածր են գնահատել, քան անվճար սովորող ուսանողները: Այսպես, վճարովի համակարգում սովորողների միայն 41%-ն է չափանիշը գնահատել 4 և բարձր, մինչդեռ անվճար սովորողների 56%-ն է այս կարծիքին:

Աղյուսակ 2.24. Կրթաձևը և բուհում սովորելու հարցում մոտիվացված լինելու գնահատականը

	Բուհում սովորելու հարցում մոտիվացիան					
Կրթաձևը	1	2	3	4	5	Ընդ.
Անվճար	12,7%	12,7%	21,1%	35,2%	18,3%	100,0%
Վճարովի	6,0%	12,7%	34,3%	33,1%	13,9%	100,0%
Ընդ.	7,5%	12,7%	31,4%	33,5%	14,9%	100,0%

Նախ՝ մոտիվացիայի գնահատականն ընդհանուր առմամբ ցածր է: Մյուս կողմից՝ անվճար սովորողների 18.3%-ը այս չափանիշին տվել է առավելագույն միավոր, իսկ վճարովի կրթաձևում սովորողների միայն 14%-ն է այս մոտեցումը կիսում: Կարելի է արձանագրել, որ առավելագույն մոտիվացվածության առումով անվճար սովորող ուսանողները շահեկան դիրքում են:

Աղյուսակ 2.25. Կրթաձևը և դասախոսների օբյեկտիվությամբ բավարարվածության գնահատականը

	Դասախոսների օբյեկտիվության գնահատականը					
Կրթաձևը	1	2	3	4	5	Ընդ.
Անվճար	5,8%	4,3%	23,2%	43,5%	23,2%	100,0%
Վճարովի	9,1%	8,3%	31,1%	36,2%	15,4%	100,0%
Ընդ.	8,4%	7,4%	29,4%	37,8%	17,0%	100,0%

Անվճար սովորող ուսանողները դասախոսների օբյեկտիվությունն ավելի բարձր են գնահատել՝ վճարովի սովորող ուսանողների համեմատ: Որոշ առումներով սա հասկանալի է, քանի որ առանձին դեպքերում վճարովի սովորող ուսանողները կարող են համարել, որ դասախոսների ոչ օբյեկտիվ լինելը և ցածր գնահատելը թույլ չի տալիս ռոտացիոն կարգով տեղափոխվել անվճար ուսուցման համակարգ:

Աղյուսակ 2.26. Բուհը և գործնական գիտելիքներով բավարարվածության գնահատականը

	Գործնական գիտելիքներով բավարարվածությունը					
Բուհը	1	2	3	4	5	Ընդ.
ՇՊՀ	7,4%	12,3%	44,4%	25,9%	7,4%	100,0%
ՀԱՊՀ ԳՄ	16,3%	6,1%	30,6%	16,3%	10,2%	100,0%
ՀՊՏՀ ԳՄ	10,1%	19,4%	33,6%	21,7%	9,7%	100,0%
ՀԳՊԱ ԳՄ	0,0%	0,0%	85,7%	14,3%	0,0%	100,0%
Ընդ.	10,2%	15,5%	36,7%	21,8%	9,0%	100,0%

Բուհում ստացած գործնական գիտելիքներով բավարարվածությունը ցածր է դիտարկված բոլոր բուհերի ուսանողների մոտ: Չափանիշով առավելագույն բավարարվածության փոքր-ինչ բարձր մակարդակ կա ՀԱՊՀ ԳՄ և ՀՊՏՀ ԳՄ դեպքում: Մյուս կողմից, ՀԱՊՀ ԳՄ հարցված ուսանողների 20%-ը դժվարացել է այս հարցին պատասխանել, ինչը նշանակում է, որ ուսանողների մի որոշ մասի համար այս չափանիշի մասով անորոշություն կա:

Աղյուսակ 2.27. Բուհը և սովորելու հարցում մոտիվացիան

	Սովորելու մոտիվացիան					
Բուհը	1	2	3	4	5	Ընդ.
ՇՊՀ	3,7%	7,4%	35,8%	42,0%	7,4%	100,0%
ՀԱՊՀ ԳՄ	6,1%	10,2%	22,4%	16,3%	20,4%	100,0%
ՀՊՏՀ ԳՄ	8,3%	13,8%	26,7%	28,6%	14,7%	100,0%
ՀԳՊԱ ԳՄ	0,0%	0,0%	42,9%	57,1%	0,0%	100,0%
Ընդ.	6,8%	11,6%	28,5%	30,5%	13,6%	100,0%

Սովորելու հարցում ուսանողների մոտիվացիան փոքր-ինչ բարձր է ՀՊՏՀ ԳՄ-ում, նաև՝ ՀԱՊՀ ԳՄ-ում, չնայած այս վերջին բուհի հարցված ուսանողների շուրջ 25%-ը չի պատասխանել այս հարցին: Սա վկայում է այս հարցում ևս չկողմնորոշվածության նշանակալի մակարդակի մասին:

Աղյուսակ 2.28. Բուհը և պրոֆեսորադասախոսական կազմի պրոֆեսիոնալիզմը

	ՊԴԿ մասնագիտացման գնահատականը					
Բուհը	1	2	3	4	5	Ընդ.
ՇՊՀ	2,5%	9,9%	27,2%	42,0%	16,0%	100,0%
ՀԱՊՀ ԳՄ	4,1%	12,2%	22,4%	22,4%	16,3%	100,0%
ՀՊՏՀ ԳՄ	6,0%	3,2%	16,6%	43,8%	24,0%	100,0%
ՀԳՊԱ ԳՄ	0,0%	0,0%	0,0%	100,0%	0,0%	100,0%
Ընդ.	4,8%	5,9%	19,5%	41,5%	20,6%	100,0%

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական մակարդակով բավարարավածության գնահատականն ամենաբարձրը ՀՊՏՀ ԳՄ-ում է: Այս ցուցանիշով հաջորդը ՇՊՀ-ն է, այնուհետև՝ ՀԱՊՀ ԳՄ-ն:

Աղյուսակ 2.29. Բուհը և դասախոսների օբյեկտիվության գնահատականը


	Դասախոսների օբյեկտիվությունից բավարարվածությունը					
Բուհը	1	2	3	4	5	Ընդ.
ՇՊՀ	11,1%	9,9%	25,9%	40,7%	8,6%	100,0%
ՀԱՊՀ ԳՄ	8,2%	4,1%	26,5%	24,5%	12,2%	100,0%
ՀՊՏՀ ԳՄ	6,5%	6,5%	27,2%	33,2%	19,4%	100,0%
ՀԳՊԱ ԳՄ	0,0%	0,0%	28,6%	71,4%	0,0%	100,0%
Ընդ.	7,6%	6,8%	26,8%	34,5%	15,5%	100,0%

Դասախոսների օբյեկտիվությունից բավարարվածության առավելագույն գնահատական ամենաշատը նշել են ՀՊՏՀ ԳՄ հարցված ուսանողները: Մյուս կողմից, ՇՊՀ հարցված ուսանողների 11%-ը իրենց բուհում դասախոսների օբյեկտիվությունը գնահատել է ամենացածր միավորով: ՀՊՏՀ ԳՄ-ում նման գնահատական տվել է հարցվածների 6.5%-ը:

Աղյուսակ 2.30. Բուհը և հեղինակության ընկալումը ուսանողների կողմից

	Բուհի հեղինակության գնահատականը					
Բուհը	1	2	3	4	5	Ընդ.
ՇՊՀ	3,7%	3,7%	40,7%	30,9%	11,1%	100,0%
ՀԱՊՀ ԳՄ	2,0%	4,1%	38,8%	12,2%	20,4%	100,0%
ՀՊՏՀ ԳՄ	3,7%	6,9%	19,8%	33,2%	22,6%	100,0%
ՀԳՊԱ ԳՄ	0,0%	0,0%	57,1%	42,9%	0,0%	100,0%
Ընդ.	3,4%	5,6%	28,0%	29,9%	19,2%	100,0%

ՀՊՏՀ ԳՄ հարցված ուսանողների կեսից ավելին՝ 56%-ը, իրենց բուհի վարկանիշը գնահատել է 4 և 5: ՇՊՀ հարցված ուսանողների միայն 42%-ն է նման գնահատական տվել: ՀԱՊՀ ԳՄ դեպքում այս ցուցանիշը 33% է: Այսպիսով, ՀՊՏՀ ԳՄ ուսանողները բուհի հանրային վարկն ամենաբարձրն են գնահատել:



Գծ. 2.19. <u>Բուհ ընդունվելու ժամանակաշրջանի համեմատությամբ ինչպե՞ս է փոխվել սովորելու Ձեր ցանկությունը</u> հարցին տրված պատասխանների բաշխվածությունը

Հարցման արդյունքները վկայում են, որ բուհ ընդունվելու ժամանակահատվածի համեմատությամբ բուհում սովորելու ցանկությունն ուսանողների մոտ ավելի շատ նվազել է, քան աճել: Այսպես, սովորելու ցանկությունը զգալիորեն աճել է միայն 7%-ի մոտ, մինչդեռ զգալիորեն նվազել է 20.5%-ի պարագայում: Փոքր-ինչ ավելացել է 22%-ի մոտ, բայց նվազել՝ 25%-ի մոտ: Սա նշանակում է, որ հարցված բուհերում կրթական միջավայրի առումով լուրջ խնդիրներ կան, որոնք ուսանողներին հնարավորություն չեն տալիս լիարժեքորեն բավարարել իրենց ակնկալիքները:


Աղյուսակ 2.30. Առաջադիմությունը և սովորելու ցանկության փոփոխությունը

	Սովորելու ցանկության փոփոխությունը						
ՄՈԳ	զգալիորեն նվազել է	մի փոքր նվազել է	չի փոխվել	փոքր-ինչ ավելացել է	զգալիորեն աճել է	չի պատասխ.	Ընդ.
«8-10»	36,4%	24,2%	18,2%	9,1%	6,1%	6,1%	100,0%
«10-12»	12,5%	21,9%	25,0%	25,0%	0,0%	15,6%	100,0%
«12-14»	14,8%	24,1%	29,6%	22,2%	0,0%	9,3%	100,0%
«14-16»	18,7%	28,0%	18,7%	18,7%	6,7%	9,3%	100,0%
«16-18»	13,3%	26,7%	24,0%	18,7%	10,7%	6,7%	100,0%
«18-20»	20,8%	15,6%	24,7%	22,1%	9,1%	7,8%	100,0%
Ընդ.	18,5%	23,4%	23,4%	19,7%	6,4%	8,7%	100,0%

Բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների շուրջ 21%-ի մոտ զգալիորեն նվազել է սովորելու ցանկությունը: Իսկ միջինից ցածր ՄՈԳ ունեցողների մոտ սովորելու ցանկությունը դրական դինամիկա է արձանագրել: Ամենաշատը սովորելու ցանկությունը զգալիորեն նվազել է նվազագույն առաջադիմություն ունեցող ուսանողների մոտ՝ 36.4%-ը տվել են այսպիսի պատասխան: Որոշ չափով, այս հանգամանքը կարող է բացատրել նշված ուսանողների մոտ առաջադիմության ցածր մակարդակը:


Սովորելու ցանկության նվազմանը հանգեցրած գործոնների նկարագրությունը բերված է գծ. 2.20-ում: Ըստ այդմ, սովորելու ցանկության նվազումը տեղի է ունեցել

ավելի շատ բուհում սովորելուն նպաստող միջավայրի բացակայության, դասախոսների սուբյեկտիվության, նաև՝ սովորելուն զուգահեռ աշխատելու պատճառով:



Գծ. 2.20. Սովորելու ցանկության նվազելուն նպաստած գործոնները

<u>Աշխատանքն ուսումնառության ընթացքում</u>



Գծ.2.21. արդյոք աշխատել կամ աշխատում եք հարցի պատասխանների բաշխվածությունը, տոկոս հարցվածների ընդհանուր թվի նկատմամբ


Հարցման արդյունքներով պարզվում է, որ չի աշխատում կամ չի պատրաստվում աշխատել հարցվածների 20 տոկոսը: Շատ ավելի մեծ թվով ուսանողներ կամ աշխատում են, կամ էլ առաջիկայում մտադիր են որևէ տեղ աշխատանքի անցնել: Սա մի կողմից լավ է, մյուս կողմից խնդրահարույց, որովհետև ինչպես ցույց է տալիս փորձը, ուսումնառությանը զուգահեռ աշխատելը ուսման

որակի վրա բացասաբար է ազդում: Հարցվածների շուրջ 40 տոկոսը կամ աշխատում է, կամ նախկինում աշխատել է:

Աղյուսակ 2.31. Առաջադիմությունը և աշխատանքը սովորելու հետ համատեղելը

	Աշխատանքը ուսումնառության ընթացքում					
ՄՈԳ	աշխատում եմ	աշխատել եմ	չեմ աշխատում, բայց մտադիր եմ	չեմ աշխատել և չեմ պատրաստվում	չի նշել պատ.	ընդ.
«8-10»	45,5%	9,1%	15,2%	18,2%	12,1%	100,0%
«10-12»	37,5%	3,1%	18,8%	15,6%	25,0%	100,0%
«12-14»	24,1%	9,3%	27,8%	24,1%	14,8%	100,0%
«14-16»	25,3%	14,7%	28,0%	18,7%	13,3%	100,0%
«16-18»	21,3%	10,7%	30,7%	20,0%	17,3%	100,0%
«18-20»	33,8%	6,5%	26,0%	20,8%	13,0%	100,0%
Ընդ.	29,2%	9,5%	26,0%	19,9%	15,3%	100,0%

Ներկայումս աշխատող ուսանողների տեսակարար կշիռն ամենաբարձրն է ամենացածր ՄՈԳ ունեցող խմբում: Սա վառ վկայություն է ուսումը և աշխատանքը համատեղելու դեպքում խնդիրների առկայության անխուսափելիության:




Գծ. 2.22. Նախկինում աշխատած կամ ներկայումս աշխատող ուսանողների պատասխանների բաշխվածությունը գործունեության ոլորտի մասին հարցին, % հարցին պատասխանածների ընդհանուր թվի նկատմամբ

Ուսումնառությանը զուգահեռ ուսանողները աշխատում են հիմնականում առևտրի և ծառայությունների ոլորտում: Այսինքն՝ կատարում են ոչ մասնագիտական


աշխատանք, ինչը որոշակիորեն հասկանալի է: Մյուս կողմից, մեծ թիվ են կազմում նաև ֆինանսաբանկային ոլորտում աշխատող ուսանողները, ինչը խնդրահարույց է առաջին հերթին պատշաճ ուսումնառության համար՝ հաշվի առնելով ֆինանսաբանկային ոլորտում աշխատանքի կոշտ գրաֆիկի հետ:

Ուսանողների 63%-ը պատասխանել է աշխատանքի և մասնագիտական ուղղվածության առնչության հարցին: Միայն 27% դեպքերում է, որ ուսումնառությանը զուգահեռ աշխատանքը լրիվությամբ առնչվել է ուսանողի մասնագիտական ուղղվածության հետ, իսկ 28%-ի դեպքում՝ ընդհանրապես որևէ առնչություն չի ունեցել (գծ. 2.23):




Գծ. 2.23. Հարցված ուսանողների աշխատանքային գործունեության կապը իրենց մասնագիտական ուղղվածության հետ

Հարցված ուսանողների 24%-ը աշխատում է մշտական հիմունքներով (գծ. 2.24), ինչը ուսումնառության համար խիստ խնդրահարույց է:



Գծ. 2.24. Աշխատանքի բնույթի վերաբերյալ հարցի պատասխանների բաշխվածությունը, տոկոսներով հարցված ուսանողների ընդհանուր թվի նկատմամբ


Հարցված ուսանողների 12.4%-ը համարում է, որ ուսման և աշխատանքի համատեղման դեպքում տուժում է ուսումը, 8.5%-ը գտնում է, որ այդ դեպքում տուժում է թե աշխատանքը և թե ուսումը (գծ. 2.25): Մյուս կողմից, 12%-ը համարում է, որ համատեղման դեպքում ոչինչ չի տուժում: Պետք է սակայն արձանագրել, որ այսպիսի պատասխան տված ուսանողները հիմնականում կատարել են պատահական, ոչ մշտական հիմունքներով աշխատանք:



Գծ. 2.25. Ինչն է տուժում աշխատանքի և ուսման համատեղման դեպքում, տոկոսներով ընդհանուր հարցվածներից

Հետաքրքրական է, որ ցածր առաջադիմությամբ ուսանողների 27%-ի կարծիքով ուսման և աշխատանքի համատեղման արդյունքում ուսումը տուժում է:


Ընտրանքում ներառված ուսանողներին հարցեր են ուղղվել նաև աշխատանքի վերաբերյալ տեղեկատվության, այն գտնելու եղանակների մասին:



Գծ. 2.26. Ուսանողների պատասխանները <u>ինչպես եք գտել աշխատանքը</u> հարցին


Աշխատող ուսանողների 36%-ը իրենց աշխատանքը գտել են ծանոթների, բարեկամների կամ ընկերների օգնությամբ, ևս 21%-ի դեպքում օգնել են փորձաշրջանի ընթացքում ձևավորված կապերը: Չափազանց ցածր է զբաղվածության պետական գործակալության աջակցությամբ աշխատանք գտածների մասնաբաժինը, իսկ զբաղվածության մասնավոր գործակալությունների ջանքերով ընդհանրապես հարցվածներից որևէ մեկը աշխատանք չի գտել:

Աշխատող ուսանողները հիմնականում կատարել են կարճաժամկետ աշխատանքներ (գծ. 2.27). հիմնականում՝ 6-12 ամիս կամ մինչև 6 ամիս տևողությամբ: Չնայած սրան, քիչ չեն նաև տևական ժամանակով աշխատելու օրինակները:



Գծ. 2.27. Աշխատանքի փնտրության վերաբերյալ հարցին տրված պատասխանների բաշխվածությունը (տոկոսներով, աշխատող կամ նախկինում աշխատանք ունեցած ուսանողների թվից)


Աշխատող ուսանողների 53%-ը (կամ՝ հարցմանը մասնակցած ուսանողների ընդհանուր թվի շուրջ 25 տոկոսը) աշխատանքի անցնելու համար մասնակցել է բուհից դուրս կրթական ծրագրերի կամ լրացուցիչ դասընթացների: Սա կարելի է դիտել որպես բուհական կրթության գործնական բաղադրիչում առկա լուրջ թերությունները գիտակցելու, դրանց վերացմանը միտված կոնկրետ քայլեր ձեռնարկելու վարքագծի դրսևորում:



Գծ. 2.28. Ինչ գիտելիքի կամ հմտության պակասը լրացնելու համար են ուսանողները հաճախել լրացուցիչ դասընթացների

Լրացուցիչ դասընթացներին ուսանողները հիմնականում հաճախել են մասնագիտական գործնական հմտությունները լրացնելու համար (դեպքերի 54%-ում): Քիչ չեն նաև օտար լեզվի և համակարգչային հմտությունների լրացման համար դասընթացների հաճախելու օրինակները, ինչը որոշակիորեն տարակուսելի է, քանի որ այս ուղղություններով կարողությունների ստեղծմանը բուհերի կրթական ծրագրերում զգալի դասաժամեր են նախատեսված:

Մեկ այլ հարց վերաբերում էր աշխատանք գտնելու համար լրացուցիչ դասընթացներ հաճախելու անհրաժեշտությանը: Հարցված ուսանողների 52%-ը այս հարցին որևէ պատասխան չի նշել: Հարցվածների մյուս խմբի ներսում պատասխանների տարբերակները բաշխվել են հետևյալ կերպ (գծ. 2.29).



Գծ. 2.29 <u>Աշխատանք գտնելու համար ի՞նչ լրացուցիչ դասընթացների հաճախելու անհրաժեշտություն կունենաք</u> հարցի պատասխանների բաշխվածությունը (%, հարցին պատասխանած ուսանողների ընդհանուր թվից)[4]

Ստացվում է, որ ուսանողների առավել մեծ հատվածը լրացուցիչ բարելավման կարիք է զգում իր մասնագիտության գործնական հմտությունների խորացման հարցում: Ուսանողները կարևորել են նաև օտար լեզվի գիտելիքների խորացման


[4]Տոկոսների հանրագումարը գերազանցում է 100-ը, քանի որ հարցվածները կարող էին ընտրել մեկից ավելի պատասխաններ:

համար վերապատրաստումների անցկացումը, նաև՝ համակարգչային հմտությունների կատարելագործումը:

Հետաքրքրական է, որ հարցին պատասխանածների միայն 5.3%-ը (հարցվածների ընդհանուր թվի 2.6%) միանշանակ համոզմունք է արտահայտել, որ բուհի գիտելիքը բավարար է և լրացուցիչ վերապատրաստումների անհրաժեշտություն չկա:


1.3. Շիրակի մարզի գործատուների հարցման արդյունքները

Հարցումն անցկացվել է Շիրակի մարզում գործող 63 կազմակերպության շրջանում:




Գծ.3.1. Հարցված կազմակերպությունների բաշխումն ըստ ոլորտների

Հարցված կազմակերպությունների շարքում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն կրթության, ֆինանսաբանկային և առևտրի ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտները:



Գծ.3.2. Հարցված կազմակերպությունների բաշխումն ըստ աշխատողների միջին ցուցակային թվի


Հարցված կազմակերպությունների մեծ մասն ունի մինչև 50 աշխատող:



Գծ. 3.3. Հարցված կազմակերպությունների աշխատակիցների թվում կենսաթոշակառուների առկայության մասին հարցի պատասխանները

Հարցված կազմակերպությունների շուրջ 58%-ում կենսաթոշակառուներ չեն աշխատում: 37.3%-ում աշխատակիցների թվում կան կենսաթոշակառուներ:


Հարցին դրական պատասխան տված կազմակերպությունների 29%-ում աշխատակիցների թվում կա միայն 1 կենսաթոշակային տարիքի աշխատող, մյուս 29%-ում աշխատում է 2-3 թոշակառու: Հարցվածների թվում միայն երեք կազմակերպություններում աշխատող կենսաթոշակային տարիքի աշխատողների թիվը գերազանցում է 15-ը:



Գծ. 3.4. Կազմակերպությունների աշխատակիցների թվում հաշմանդամների առկայության վերաբերյալ հարցի պատասխանները

Հարցված կազմակերպություններից 26%-ում աշխատակիցների թվում կան հաշմանդամներ՝ 1 կազմակերպության հաշվով միջինում 2 մարդ:


Ինչ վերաբերում է ուսանողներին, ապա հարցված կազմակերպությունների 46%-ում աշխատում են ուսանողներ: Մեկական կազմակերպությունում աշխատում են 3-5 ուսանողներ, հարցված կազմակերպությունների 27%-ում աշխատող ուսանողների թիվը 2-ն է, իսկ 14% կազմակերպություններում աշխատում է մեկական ուսանող:



Գծ. 3.5. Արդյո՞ք կազմակերպությունում աշխատող ուսանողները կատարում են իրենց ապագա մասնագիտությանը համապատասխան աշխատանք

Հարցված կազմակերպություններում աշխատող ուսանողները հիմնականում կատարում են իրենց ապագա մասնագիտության հետ առնչվող աշխատանք: Միայն 23% կազմակերպություններում է, որ ուսանողների աշխատանքային պարտականությունների շրջանակը որևէ առնչություն չունի իրենց ապագա մասնագիտության հետ:


Հարցման ընթացքում փորձ է արվել հստակեցնել գործատուների ընկալումները աշխատողների անձնային և մասնագիտական հատկանիշների առնչությամբ (գծ. 3.6): Գործատուների կողմից առաջնահերթ նշանակություն է տրվում պրոֆեսիոնալիզմին և բանիմացությանը, պատասխանատվություն ստանձնելու կարողությանը, մշտապես կատարելագործվելու ունակությանը:



Գծ. 3.6. Անձնային և մասնագիտական հատկանիշների վերաբերյալ գործատուների ընկալումները

Մյուս կողմից, նորարականությունը, ստեղծագործ մտածելակերպը, նաև՝ թիմային աշխատանքի կարողությունը, կազմակերպությանը, դրա հիմնական արժեքներին հավատարմությունը պակաս կարևոր են դիտվում:

Հարցվածների կարծիքով, վարչական աշխատողների պարագայում կարևորվում է կրթական առավել բարձր մակարդակը՝ մագիստրատուրա և այլն: Իսկ ծառայողների դեպքում միջին մասնագիտական և բակալավրիական մակարդակները լիովին բավարար են դիտվում:




Գծ. 3.7. Արդյոք ունեք նոր աշխատող կամ աշխատողներ ներգրավելու կարիք

Հարցված գործատուների 65%-ը նոր աշխատողի կարիք չունի:

Աշխատողի կարիք ունեցող գործատուները հիմնականում ունեն 1-2 աշխատողի կարիք: Հարցված կազմակերպություններից միայն 4-ում են պատասխանել, որ պլանավորում են ներգրավել 5-ից ավելի նոր աշխատողներ:


Աշխատողի կարիք ունեցող կազմակերպություններից շուրջ կեսում պահանջվում են հիմնականում ցածր որակավորում ունեցող անձինք՝ ոչ մասնագիտական աշխատանքի համար: Կազմակերպությունների մյուս կեսում պահանջվում են հիմնականում տնտեսագետներ կամ SS ոլորտի մասնագետներ, բարձրագույն կրթությամբ, 25-40 տ. նախընտրելի միջակայքում:



Գծ. 3.8. Աշխատողներ ներգրավելու համար նախկինում ի՞նչ տարբերակներէ օգտագործել կազմակերպությունը, տոկոսներով, կազմակերպությունների թվի նկատմամբ


Աշխատողներ ներգավելու համար հարցված կազմակերպություններում հիմնականում հայտարարություններ են տարածել Համացանցով, դիմել են բուհերին, ԶՊԾ-ին: Սրանք երեք հիմնական ուղիներն են:

Հարցվածների 90%-ը աշխատակիցների թվում ունի Շիրակի մարզի բուհերի շրջանավարտներ: Հարցված գործատուներից 44%-ի մոտ աշխատում է մարզի բուհերի 7 կամ ավելի շրջանավարտ, 16%-ի մոտ աշխատում է 4-6 շրջանավարտ:



Գծ. 3.9. Շիրակի մարզի բուհերի շրջանավարտների թիվը հարցված գործատուների աշխատակիցների թվում

Ստորև ներկայացված են առանձին պնդումներին 10 բալային համակագով տրված գնահատականների միջինացած մեծությունները




Գծ. 3.10. Առանձին պնդումներին տրված միջինացված գնահատականները, 10 բալային համակարգով[5]

Բոլոր գնահատականները բավականին ցածր են: Մտահոգիչ է, որ չնայած համեմատաբար բարձր գնահատական ունի որակյալ մասնագետներ պատրաստելու ասպեկտը, սակայն գործատուների համոզմամբ, բուհերը բավարար ճկունությամբ

[5] 1-ը արտահայտում է կատարյալ անհամաձայնությունը, իսկ 10-ը՝ լրիվ համաձայնությունը համապատասխան պնդման հետ:

չեն արձագանքում աշխատանքային շուկայի պահանջմունքների փոփոխությանը: Այս գործոնի միջին գնահատականը ընդամենը 3.81 է կամ առավելագույն հնարավորի 38.1%:


Հարցված գործատուները գնահատել են նաև Շիրակի մարզի բուհերի շրջանավարտների պատրաստվածության մակարդակը՝ 10 միավորային սանդղակով, որտեղ 10-ը՝ առավելագույն գնահատականն է, 1-ը՝ նվազագույն (գծ. 3.11):



Գծ. 3.11. Շիրակի մարզի բուհերի շրջանավարտների պատրաստվածության միջինացված գնահատականը, ըստ գործատուների հարցման արդյունքների, 10 միավորային համակարգում

Համեմատաբար բարձր գնահատականներ են տրվել սոցիալ-հոգեբանական բնույթ ունեցող գործոններին: Իսկ բուն մասնագիտական գործոնները էապես ցածր են: Պրոֆեսիոնալիզմը և բանիմացությունը միջինում գնահատվել է 5.9, տեսական գիտելիքը գործնականում կիրառելու կարողությունը ստացել է ամենացածր գնահատականը՝ 5.2:

Գործատուները ներկայացրել են նաև իրենց նկատառումները այն հարցի շուրջ, թե բուհի շրջանավարտից որքա՞ն ժամանակ է պահանջվում գործնական աշխատանքի հիմնական հմտություններին ևգործառնական պարտականություններին տիրապետելու համար:




Գծ. 3.12. Որքան ժամանակ է պահանջվում բուհի շրջանավարտից գործնական հմտություններին տիրապետելու համար

Գործատուների 38%-ը համարում է, որ բուհի շրջանավարտը կարող է գործնական աշխատանքի հմտություններին և գործառնական պարտականություն-ներին տիրապետել մինչև 3 ամիս աշխատելը արդյունքում: 16%-ը համարում է, որ դրա համար պետք է մինչև 6 ամիս, 31%-ի կարծիքով դրա համար անհրաժեշտ է 6-12 ամիս:

Հետաքրքրական է գործատուների կողմից նկատառումների արտահայտումը ուսուցման գործընթացում բուհերում փոփոխությունների կարիքի վերաբերյալ՝ շրջանավարտների պատրաստվածության որակի բարձրացման նպատակով:

Հարցված գործատուների 67 տոկոսից ավելին համարում է, որ ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել գործնական պատրաստվածության ուժեղացմանը, 26%-ի մոտեցմամբ պետք է խթանել ուսուցման նորարարական տեխնոլոգիաները: Հատկանշական է, որ հարցվածներից որևէ մեկը չի հիշատակել շրջանավարտների տեսական պատրաստվածության բարձրացման անհրաժեշտության մասին, չնայած որ այդ տարբերակը ևս կար հարցաթերթում:


Գործատուները անդրադարձել են բուհերի հետ համագործակցության խթանման հնարավոր գործիքներին և ձևերին: Առավել հեռանկարային են դիտվում մասնագետների պատրաստման պատվերի ներկայացումը (51%), ուսանողների փորձաշրջանի անցկացումը, համատեղ նորարարական ծրագրերի մշակումը և անցկացումը (գծ. 3.13):



Գծ. 3.13. Բուհ-երի հետ համագործակցության ո՞ր ուղղություններն եք համարում առավել հեռանկարային


Հարցված գործատուների մեծ մասը ընդհանուր առմամբ բավարարված է Շիրակի մարզի բուհերի հետ համագործակցությունից: Միայն 7%-ն է համարում, որ այն անբավարար է (գծ. 3.14):

Հարցված գործատուների 60%-ը կցանկանար բուհական կրթությամբ ավելի շատ շրջանավարտներ ունենալ իրենց կազմակերպություններում:



Գծ. 3.14. Ինչպե՞ս եք գնահատում Շիրակի մարզի բուհերի հետ Ձեր համագործակցությունը

Հարցված գործատուների կեսից ավելին պլանավորում է շարունակել համագործակցությունը մարզի բուհերի հետ: Միաժամանակ, շուրջ 21%-ը համարում է, որ մասնագետների պատրաստումը բարելավման կարիք է զգում: Չեն պատրաստվում համագործակցել հարցված գործատուների շուրջ 7%-ը:




Գծ. 3.15. Պատրաստվու՞մ եք արդյոք շարունակել (կամ՝ սկսել) համագործակցությունը բուհերի հետ

1.4. Սոցիալապես խոցելի խմբերի հարցման արդյունքները

1.4.1. Գործազուրկներ


Գործազուրկների հարցման շրջանակներում Շիրակի մարզում հարցվել են 111 գործազուրկներ: Հարցվածների 63.4%-ը կանայք են, 36.6%-ը՝ տղամարդիկ:

Հարցվածների կեսից ավելին մինչև 40տ. են, ամենամեծ տարիքային խումբը 21-30տ. է, որի տեսակարար կշիռը 41.1% է (գծ. 4.1):




Գծ 4.1. հարցվածների բաշխումն ըստ տարիքային խմբերի

Հարցվածների 47.3%-ը ունեն բարձրագույն կրթություն, շուրջ 26%-ը՝ միջին մասնագիտական, իսկ մոտ 27%-ը՝ միջնակարգ:



Գծ.4.2. Հարցվածների բաշխումն ըստ կրթական մակարդակի

Հարցվածների մեծ մասը՝ 81.1%-ը որպես գործազուրկ գրանցված չէ:




Գծ. 4.3. Գրանցված եք արդյոք որպես գործազուրկ

Աղյուսակ 4.1. Տարիքային խումբը և որպես գործազուրկ գրանցվելը

	Գրանցված եք արդյոք որպես գործազուրկ		
Տարիքային խումբը	այո	ոչ	Ընդ.
Մինչև 20տ.	0,0%	100,0%	100,0%
21-30տ.	11,1%	88,9%	100,0%
31-40տ.	22,7%	77,3%	100,0%
41-50տ	10,5%	89,5%	100,0%
51-60տ.	39,1%	60,9%	100,0%
Ընդ.	18,9%	81,1%	100,0%

Ավելի շատ գրանցվածներ կան ավագ տարիքային խմբում՝ 39.1%: Սա վկայում է այն մասին, որ ավելի շուտ աշխատանք փնտրելու խնդիր չկա, այլ նպաստ ստանալու: Գրանցվածների 43%-ը 50-ից բարձր տարիքային խմբի անձիք են, չգրանցվածների 44%-ը՝ 21-30տ.:



Գծ. 4.4. <u>Որքան ժամանակ է ինչ աշխատանք եք փնտրում</u> հարցի պատասխանների բաշխվածությունը

Պետք է փաստել, որ գործազրկությունը ավելի շուտ երկարաժամկետ բնույթ ունի: Այսպես, հարցվածների 1/3-ից ավելին գործազուրկ է 3 տարուց ավելի: Մոտ 29%-ը 1-3 տարի է, ինչ աշխատանք չունի:

Աղյուսակ 4.2. Գործազրկության տևողությունը և տարիքը

	Տևողությունը						
Տարիքային խումբը	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-3 տարի	3 տարուց ավելի	Ընդ.
Մինչև 20տ.	0,0%	25,0%	0,0%	5,0%	0,0%	0,0%	1,8%
21-30տ.	50,0%	0,0%	72,7%	70,0%	50,0%	14,3%	40,5%
31-40տ.	0,0%	0,0%	18,2%	10,0%	12,5%	33,3%	19,8%
41-50տ	0,0%	75,0%	0,0%	10,0%	18,8%	19,0%	17,1%
51-60տ.	50,0%	0,0%	9,1%	5,0%	18,8%	33,3%	20,7%
Ընդ.	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%

Գործազրկության տևողության և գործազուրկի տարիքի միջև որոշակի կապ է նկատվում: Այսպես, 3տ. ավելի ժամանակով գործազուրկների 1/3-ը 50տ-ից բարձր խմբին է դասվում: Մեծ է նաև 31-40տ. խմբի տեսակարար կշիռը:


5-րդ տարիքային խմբում գործազուրկների մեծ մասն այդ կարգավիճակում է 3 տարուց ավելի: Տարակուսելի է, որ 31-40տ. խմբում ևս գործազուրկների մեծ մասը ևս երկարարաժամկետ գործազուրկ է:

Աղյուսակ 4.3. Գործազրկության տևողությունը և կրթությունը

	Տևողությունը						
Կրթությունը	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-3 տարի	3 տարուց ավելի	Ընդ.
Միջնակարգ	0,0%	6,7%	6,7%	16,7%	26,7%	43,3%	100,0%
Միջին մասնագիտ.	3,4%	6,9%	10,3%	6,9%	34,5%	37,9%	100,0%
Բարձրագույն	1,9%	0,0%	11,5%	25,0%	26,9%	34,6%	100,0%
Ընդ.	1,8%	3,6%	9,9%	18,0%	28,8%	37,8%	100,0%

Կրթական մակարդակի և գործազրկության տևողության միջև որոշակի կապ է նկատվում: Այսպես, 3 տարուց ավելի գործազուրկ է միջնակարգ կրթություն ունեցողների 43.3%-ը, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների պարագայում այդ ցուցանիշը 34.6% է:

Հարցվածների մեծ մասն աշխատանքային ստաժ չունի և առաջին անգամ է աշխատանք փնտրում (գծ. 4.5):




Գծ.4.5. Աշխատանքային ստաժի տևողությունը

Աղյուսակ 4.4. Աշխատանքային ստաժը և գործազրկության տևողությունը

	Ստաժի տևողությունը					
Աշխատանք փնտրելու տևողությունը	չունեմ	մինչև 5տ.	6-10տ.	11-15տ.	15տ. ավելի	Ընդ.
մինչև 1 ամիս	50,0%	50,0%	0,0%	0,0%	0,0%	100,0%
1-3 ամիս	0,0%	50,0%	50,0%	0,0%	0,0%	100,0%
3-6 ամիս	63,6%	27,3%	0,0%	0,0%	9,1%	100,0%
6-12 ամիս	77,8%	16,7%	5,6%	0,0%	0,0%	100,0%
1-3տարի	61,3%	19,4%	12,9%	3,2%	3,2%	100,0%
3 տարուց ավելի	59,5%	19,0%	9,5%	9,5%	2,4%	100,0%
Ընդ.	61,1%	21,3%	10,2%	4,6%	2,8%	100,0%

Գործազրկության տևողությունը որոշակի առնչություն ունի աշխատանքային ստաժի հետ: 3 տարուց ավելի աշխատանք փնտրողների շուրջ 60%-ը աշխատանքային ստաժ չունի:

Ի՞նչ պատճառով եք թողել Ձեր վերջին աշխատանքը հարցին պատասխանել է հարցվածների 38 տոկոսը: Պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.




Գծ. 4.6. Վերջին աշխատանքը թողելու պատճառները

Ամենամեծ մասնաբաժինն ունի սեփական ցանկությամբ աշխատանքից ազատումը (հարցվածների ընդհանուր թվի 8.11%): Հետաքրքրական է, որ


առողջական խնդիրներն ու բնակության վայրի փոփոխությունը ավելի հաճախադեպ պատասխաններ են, քան կազմակերպության կամ հաստիքի լուծարումը և պարզապես պայմանագրի գործողության ժամկետը լրանալը:

Ամենաշատը փնտրվող ոլորտը կրթություն է: Այստեղ աշխատանք կցանկանային ունենալ պատասխան նշածների 16.5%-ը: Կարելի է ենթադրել, որ խոսքը գործազուրկների բանակը համալրած ուսուցիչների մասին է ավելի շատ: Պահանջված են նաև սպասարկման, SS ոլորտները, նաև՝ առևտուրը: Մյուս կողմից, արտադրության ոլորտում աշխատանք են փնտրում ամենաքիչ թվով հարցվածներ:




Գծ. 4.7. <u>Որ ոլորտում եք աշխատանք փնտրում</u> հարցի պատասխանները

Հարցվածների 20.6% համարում է, որ աշխատանք գտնելու հարցում խոչընդոտներ չկան: Խոչընդոտներից ամենաշատ նշվածը փորձի բացակայությունը կամ անբավարարությունն է, ընտանեկան հանգամանքները և տարիքը: Թափուր աշխատատեղի բացակայության պատճառը նշվել է միայն հարցվածների 14 տոկոսի կողմից: Մասնագիտական հմտությունների և որակավորման պակասը խնդրահարույց է հարցվածների 12.1%-ի համար (գծ. 4.8):




Գծ. 4.8. Կան արդյոք խոչընդոտներ աշխատանք գտնելու համար և որոնք են

Աշխատանքի որոնման հիմնական աղբյուրը Համացանցն է: Դրանից օգտվում է աշխատանք փնտրողների 63.2%-ը: Մեծ է նաև բարեկամ, ծանոթների միջոցով աշխատանք փնտրողների մասնաբաժինը (37.7%): Փոքր է զբաղվածության պետական ծառայությանը դիմածների տեսակարար կշիռը: Էլ ավելի փոքր է զբաղվածության մասնավոր գործակալությունների միջոցով աշխատանք փնտրողների թիվը (հարցման մասնակիցների 1%-ը):




Գծ. 4.9. Աշխատանքի որոնման ինչ աղբյուրներ եք օգտագործում

Հարցվածների մոտ 74%-ը չի դիմել զբաղվածության պետաան ծառայությանը (գծ. 4.10.): Մնացածները դիմել են, որոնցից միայն 1/3-ն է ստացել աջակցություն (9.1%):



Գծ. 4.10. Դիմել եք արդյոք զբաղվածության պետական ծառայությանը


Հարցվածների գերակշիռ մասը զբաղվածության մասնավոր ծառայություններին չի դիմել (գծ. 4.11): Հետաքրքրական է, որ չնայած փոքր թիվ են կազմում դիմածները, սակայն նրանց զգալի մասը ստացել է աջակցություն: Կարելի է արձանագրել, որ ԶՊԾ դիմելու առանցքային շարժառիթներից է որպես գործազուրկ գրանցվելը և նպաստ ստանալը, իսկ քանի որ մասնավոր գործակալությունների պարագայում դա չկա, ուստիև դրանց քիչ են դիմում:



Գծ. 4.11. Դիմել եք արդյոք զբաղվածության մասնավոր գործակալություններին


Գործազուրկների հարցման կարևոր ասպեկներից մեկը պարզելն է, թե ինչ է ավելի կարևորվում՝ հարմար աշխատանքի որոնման ընթացքում:

Հարցվածների գերակշիռ մասը կարևորում է աշխատավարձի չափը (87.3%, գծ. 4.12): Պակաս կարևոր են աշխատանքի պայմանները, գրաֆիկը (51-54%): Մնացած գործոնները որակապես ցածր կարևորություն ունեն: Աշխատանքով բավարարվածությունը հարցվածների 75 տոկոսի համար կարևոր չէ, 80 տոկոսի համար կարևոր չէ մասնագիտության հարգի լինելը, 91 տոկոսի համար էական չէ գործատուի կարգավիճակը, հեղինակությունը:



Գծ. 4.12. Ի՞նչն եք առավել կարևորում՝ հարմար աշխատանքի որոնման ընթացքում

Ինչ վարձատրություն եք ակնկալում ստանալ հարցին պատասխանել է հարցվածների 95.5%-ը: Պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ (գծ. 4.13).



Գծ. 4.13. Ինչ վարձատրություն եք ակնկալում ստանալ

Հարցվածների կեսից ավելին ակնկալում է ստանալ աշխատանք մինչև 200 հազար դրամ ամսական աշխատավարձով: Սա խոսում է սպասելիքների ոչ ուռճացված և ադեկվատ լինելու մասին:

Փորձենք տեսնել, թե այս սպասելիքները կրթության, տարիքի կամ գործազրկության տևողության հետ ինչ առնչություն ունեն:

Աղ. 4.5. Գործազուրկների տարիքը և ակնկալվող վարձատրությունը

	Ակնկալվող վարձատրությունը				
Տարիքային խումբը	մինչև 100 հազ. դրամ	101-200 հազ. դրամ	201-300 հազ. դրամ	301-400 հազ. դրամ	Ընդ.
Մինչև 20տ.	3,0%	1,9%	0,0%	0,0%	1,9%
21-30տ.	24,2%	49,1%	47,1%	100,0%	42,5%
31-40տ.	24,2%	18,9%	17,6%	0,0%	19,8%
41-50տ	24,2%	13,2%	11,8%	0,0%	16,0%
51-60տ.	24,2%	17,0%	23,5%	0,0%	19,8%
Ընդ.	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%

Մինչև 100 հազ դրամ աշխատավարձ ակնկալողների դեպքում տարիքային առանձնահատկություն չկա: Համենայն դեպս՝ հարցման արդյունքներով այն ակնառու չէ: 101-200 հազար դրամի աշխատավարձ են ակնկալում 21-30տ խմբում գտնվողները:

Աղ. 4.6. Գործազուրկների կրթությունը և ակնկալվող վարձատրությունը


	Ակնկալվող վարձատրությունը				
Կրթությունը	մինչև 100 հազ. դրամ	101-200 հազ. դրամ	201-300 հազ. դրամ	301-400 հազ. դրամ	Ընդ.
Միջնակարգ	48,5%	22,6%	11,8%	0,0%	28,3%
Միջին մասնագիտ.	24,2%	30,2%	23,5%	0,0%	26,4%
Բարձրագույն	27,3%	47,2%	64,7%	100,0%	45,3%
Ընդ.	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%

Ցածր վարձատրություն են ակնկալում կրթական ցածր մակարդակ ունեցողները: Որքան կրթական մակարդակը բարձրանում է, այնքան աշխատավարձի ավելի մեծ ակնկալիքներ են ձևավորվում:

Աղ. 4.7. Գործազրկության տևողությունը և ակնկալվող վարձատրությունը

	Ակնկալվող վարձատրությունը				
Աշխատանք փնտրելու տևողությունը	մինչև 100 հազ. դրամ	101-200 հազ. դրամ	201-300 հազ. դրամ	301-400 հազ. դրամ	Ընդ.
մինչև 1 ամիս	0,0%	100,0%	0,0%	0,0%	100,0%
1-3 ամիս	33,3%	66,7%	0,0%	0,0%	100,0%
3-6 ամիս	40,0%	60,0%	0,0%	0,0%	100,0%
6-12 ամիս	5,3%	57,9%	21,1%	15,8%	100,0%
1-3տարի	18,8%	59,4%	21,9%	0,0%	100,0%
3 տարուց ավելի	52,5%	32,5%	15,0%	0,0%	100,0%
Ընդ.	31,1%	50,0%	16,0%	2,8%	100,0%

Գործազրկության տևողության և ակնկալվող վարձատրության միջև ևս որոշակի առնչություններ կան: Մինչև 100 հազար դրամի աշխատավարձ է ակնկալում 3 տարուց ավելի աշխատանք փնտրող հարցվածների 52.5%-ը: Ավելի քիչ ժամանակահատվածում աշխատանք փնտրողները փոքր-ինչ ավելի բարձր աշխատավարձ են ակնկալում: Այսինքն՝ աշխատանք փնտրելու տևողության երկարելուն համընթաց նվազման ուղղությամբ վերանայվում են աշխատավարձի մեծության նկատմամբ սկզբնական ակնկալիքները:



Գծ.4.14. Կցանկանայի՞ք արդյոք մասնագիտական ուսուցում անցնել կամ բարձրացնել Ձեր որակավորումը

Հարցվածների 43.6%-ը չի ցանկանում ոչ փոխել մասնագիտությունը, ոչ էլ բարձրացնել որակավորումը: Նոր մասնագիտություն է ուզում ստանալ հարցվածների միայն 18.2%-ը:

Աղյուսակ 4.8. Գործազուրկների տարիքը և վերապատրաստման ցանկությունը

	Վերապատրաստման ցանկությունը			
Տարիքային խումբը	այո, ցանկանում եմ ստանալ նոր մասնագիտություն	այո, ցանկանում եմ բարձրացնել իմ որակավորումը	ոչ	Ընդ.
Մինչև 20տ.	100,0%	0,0%	0,0%	100,0%
21-30տ.	20,0%	48,9%	31,1%	100,0%
31-40տ.	13,6%	40,9%	45,5%	100,0%
41-50տ	33,3%	38,9%	27,8%	100,0%
51-60տ.	0,0%	17,4%	82,6%	100,0%
Ընդ.	18,2%	38,2%	43,6%	100,0%


Հստակորեն երևում է, որ վերապատրաստվելու կամ մասնագիտություն փոխելու ցանկությունը տարիքի հետ նվազում է (աղյուսակ 4.8):

Որքան էլ տարակուսել է, միջնակարգ կրթություն ունեցողների մեծ մասը չի ցանկանում ոչ խորացնել մասնագիտական հմտությունները, ոչ էլ նոր մասնագիտություն ձեռք բերել: Միջին մասնագիտական կրթություն ունեցողների շատ ավելի մեծ մասը՝ գումարային 65 տոկոսից ավելին, ցանկանում են կամ փոխել մասնագիտությունը, կամ բարձրացնել իրենց որակավորումը (աղյուսակ 4.9):

Աղյուսակ 4.9. Գործազուրկների կրթական մակարդակը և վերապատրաստման ցանկությունը


	Վերապատրաստման ցանկությունը			
Կրթությունը	այո, ցանկանում եմ ստանալ նոր մասնագիտություն	այո, ցանկանում եմ բարձրացնել իմ որակավորումը	ոչ	Ընդ.
Միջնակարգ	30,0%	13,3%	56,7%	100,0%
Միջին մասն.	20,7%	44,8%	34,5%	100,0%
Բարձրագույն	9,8%	49,0%	41,2%	100,0%
Ընդ.	18,2%	38,2%	43,6%	100,0%

Հարցվածների 54%-ը անդրադարձել է այն հարցին, թե *վերապատրաստման ո՞ր ձևաչափն է նախընտրելի Ձեզ համար*: Նրանցից 43.3%-ը նախընտրում է վերապատրաստվել որևէ ուսումնակրթական կենտրոնում: Բուհը՝ որպես վերապատրաստման վայր, նախընտրելի է 28.3%-ի համար: Այլ տարբերակները պակաս նախընտրելի են:




Գծ. 4.15. Վերապատրաստման ձևաչափի նախընտրելիությունը

Վերապատրաստման արդյունքում 28.6%-ը կցանկանար ձեռք բերել համակարգչային հմտություններ: Որևէ արհեստ սովորելու անհրաժեշտություն է զգում վերապատրաստման կարիք ունեցողների մոտ 24%-ը: Մոտ 10%-ը կցանկանար ձեռք բերել սեփական գործ բացելու և վարելու հմտություններ: Որոշակի կարևորություն է ստացել նաև կառավարման ու մարդկանց հետ աշխատելու հմտությունների ձեռքբերումը (8-ական տոկոս):



Գծ. 4.16. Ինչ հմտություններ կցանկանային ձեռք բերել

Հարցվածների գերակշիռ մասը կցանկանար աշխատել որպես վարձու աշխատող և միայն 15.7%-ն է մտածում սեփական գործ հիմնելու մասին: 42.6%-ը կնախընտրեր աշխատել ճկուն աշխատանքային գրաֆիկով, ոչ լրիվ աշխատանքային օր (գծ. 4.17):



Գծ. 4.17. Նախընտրելի աշխատանքային գրաֆիկը

Ցածր տարիքային խմբերում նախընտրելի է լրիվ աշխատանքային շաբաթով վարձու աշխատող լինելը: Ավելի բարձր տարիքային խմբերում աստիճանաբար ավելի ու ավելի նախընտրելի է համարվում ճկուն աշխատանքային շաբաթը: Սեփական գործ հիմնելու մասին ավելի շատ մտածում են 41-50տ. խմբում ընդգրկված գործազուրկները (աղյուսակ 4.10):

Աղյուսակ 4.10. Տարիքային խումբը և ակնկալվող աշխատանքային գրաֆիկը

	Ակնկալվող աշխատանքային գրաֆիկը			
Տարիքային խումբը	լրիվ աշխ շաբաթ	ճկուն գրաֆիկ	սեփական գործ	Ընդ.
Մինչև 20տ.	50,0%	50,0%	0,0%	100,0%
21-30տ.	54,5%	38,6%	6,8%	100,0%
31-40տ.	45,5%	36,4%	18,2%	100,0%
41-50տ	22,2%	44,4%	33,3%	100,0%
51-60տ.	27,3%	54,5%	18,2%	100,0%
Ընդ.	41,7%	42,6%	15,7%	100,0%


Սեփական գործ հիմնելու ամենամեծ ցանկությունն ունեն 3տ և ավելի աշխատանք փնտրողները (աղյուսակ 4.11): Ավելի քիչ ժամանակով աշխատանք փնտրողների պարագայում նախընտրելի է լրիվ աշխատանքային շաբաթով, ոչ ճկուն գրաֆիկով աշխատանքը:

Աղյուսակ 4.11. Աշխատանք փնտրելու տևողությունը և ակնկալվող աշխատանքային գրաֆիկը

	Ակնկալվող աշխատանքային գրաֆիկը			
Աշխատանք փնտրելու տևողությունը	լրիվ աշխ շաբաթ	ճկուն գրաֆիկ	սեփական գործ	Ընդ.
մինչև 1 ամիս	50,0%	50,0%	0,0%	100,0%
1-3 ամիս	0,0%	100,0%	0,0%	100,0%
3-6 ամիս	70,0%	30,0%	0,0%	100,0%
6-12 ամիս	30,0%	50,0%	20,0%	100,0%
1-3տարի	56,3%	34,4%	9,4%	100,0%
3 տարուց ավելի	32,5%	42,5%	25,0%	100,0%
Ընդ.	41,7%	42,6%	15,7%	100,0%

Եթե հարցման պահին աշխատանքի տեղավորվելու հնարավորություն լիներ, ապա հարցվածների 87.4%-ը պատրաստ էր անմիջապես անցնել աշխատանքի:

Անմիջապես աշխատանքի անցնելուն անպատրաստ գործազուրկների 50%-ը 40տարեկանից բարձր է, 44%-ը ունի բարձրագույն կրթություն, 79%-ը 3տարուց ավելի է աշխատանք է փնտրում կամ պարզապես աշխատանք չունի, աշխատանքային ստաժը 5տ. պակաս է, 57%-ը ակնկալում է ամսական 100 հազար դրամից պակաս վարձատրություն, 57%-ը չի ցանկանում ոչ փոխել մասնագիտությունը, ոչ էլ վերապատրաստվել:




Գծ. 4.18.Վերջին ամսվա ընթացքում ի՞նչ քայլեր եք ձեռնարկել հիմա աշխատանք գտնելու կամ սեփական գործ սկսելու համար

Հարցվածների 67%-ը որևէ պատասխան չի նշել այն հարցին, թե *վերջին ամսվա ընթացքում ի՞նչ քայլեր եք ձեռնարկել հիմա աշխատանք գտնելու կամ սեփական գործ սկսելու համար*: 14%-ը խոստովանել է, որ ոչինչ չի ձեռնարկել: Ըստ էության, ակտիվորեն փնտրում է միայն հարցվածների 12%-ը, իսկ միայն 3%-ն է քայլեր ձեռնարկել որակավորման բարձրացման կամ նոր հմտությունների ձեռքբերման համար: Այսինքն՝ գործնական քայլեր ձեռնարկելու ակտիվությունը ցածր մակարդակի վրա է:

1.4.2.Սահմանափակ կարողություն ունեցող անձանց հարցման արդյունքների վերլուծություն


Հարցվել է Շիրակի մարզում բնակվող, հաշմանդամություն ունեցող 48 անձ: Հարցվածների 46 տոկոսը կանայք են, 54%-ը՝ տղամարդիկ: Հարցվածների շուրջ 42%-ը՝ 55-65տ. խմբին են պատկանում: 35-55տ. խմբին՝ 33.3%-ը:



Գծ. 4.19. Հարցվածներն ըստ տարիքային խմբերի


Հարցվածների 66%-ը բնակվում է ծնողների, երեխաների կամ բարեկամների հետ: Շուրջ 30%-ը բնակվում է միայնակ:

Հարցվածների կեսից ավելին՝ 55.3%-ը, 3-րդ խմբի հաշմանդամ է: Հաշմանդամության առաջին խումբ ունեն հարցվածների 10.6%-ը:




Գծ. 4.20. Հարցվածների բաշխումն ըստ հաշմանդամության խմբի

Հարցվածների շուրջ 1/3-ի սահմանափակ հնարավորությունները կապված են հենաշարժական ապարատի ֆունկցիաների խանգարման հետ, 13%-ը՝ տեսողության հետ խնդիրներով են պայմանավորված, իսկ կեսից ավելին ունեն այլ խնդիրներով պայմանավորված ֆիզիկական և հոգեկան սահմանափակումներ:




Գծ. 4.21. Ֆիզիկական սահմանափակումը կապված է...

Հարցվածների մոտ 36%-ին հակացուցված է ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ աշխատանքը, 15.6%-ը կարող է աշխատել, սակայն՝ ոչ լրիվ աշխատանքային օր, 13.3%-ի աշխատանքի համար պետք է հատուկ պայմաններ ստեղծվեն, նույն թվով հարցվածների համար էլ աշխատանքը պետք է լինի առանց նյարդային կամ հոգեբանական լարման (գծ. 4.22):



Գծ. 4.22. Հարցվածների մոտ առկա աշխատանքային սահմանափակումները


Հարցվածների մեջ ամենամեծ տեսակարար կշիռը (33.3%) ունեն միջնակարգ կրթություն ունեցողները: Բարձրագույն կրթություն ունի հարցվածներից յուրաքանչյուր 4-րդը: Հարցվածների մի փոքր մասը՝ 6.6%-ը ներկայումս սովորում է:



Գծ. 4.23. Հարցվածների բաշխումն ըստ կրթության

Հարցվածների գերակշիռ մասը՝ 72.3%-ը, նախկինում ունեցել է աշխատանք: Համապատասխանաբար, 27.7%-ը պատասխանել է, որ նախկինում որևէ աշխատանք չի ունեցել:


Նախկինում աշխատանք ունեցածների շուրջ 80 տոկոսի աշխատանքային ստաժը 3տ. ավելի է: Մինչև 1տարվա ստաժ ունի նախկինում աշխատածների մոտ 3%-ը:



Գծ. 4.24. Նախկինում աշխատածների ստաժի տևողությունը


Նախկինում աշխատանք ունեցած հարցվածների 31.4%-ը կատարել է որոշ չափով ավտոմատացված աշխատանք, ¼-ը՝ ֆիզիկական, 23%-ը՝ մտավոր, իսկ 20%-ը աշխատել է սպասարկման ոլորտում:

Հարցվածների կեսից ավելին համարում է, որ կարողությունների սահմանափակումը աշխատանքի վրա չի անդրադարձել: Մյուս կողմից, շուրջ 40%-ը նույն պատճառով հարկադրված է եղել դադարեցնել իր աշխատանքը: Եվ միայն 8%-ի դեպքում է, որ հնարավոր է եղել աշխատել նույն մասնագիտությամբ, սակայն՝ փոխելով աշխատավայրը (գծ. 4.25):



Գծ. 4.25. Արդյո՞ք հաշմանդամության կարգ սպանալը անդրադարձել է աշխատանքային գործունեության վրա


Նախկինում աշխատանք ունեցածների 65 տոկոսը տարբեր պատճառներով ստիպված է եղել փոխել իր աշխատավայրը: Փոփոխության պատճառների վերլությունը տալիս է հետևյալ պատկերը (գծ. 4.26).



Գծ.4.26. Աշխատավայրը փոխելու հիմնական պատճառները

Ցածր աշխատավարձը հարցվողների 25%-ի կողմից նշվել է որպես աշխատանքը փոխելու հիմնական պատճառ: Հարցվածների 7.5%-ի պարագայում խնդրահարույց էր աշխատավայր հասնելը, իսկ դեպքերի 5%-ում գլխավոր խնդիրը եղել է աշխատատեղի՝ սահմանափակ կարողություն ունեցող անձի համար հարմարեցված չլինելը:

Հարցվածների 47%-ը հարցման պահին ունեցել է աշխատանք: 53%-ը, համապատասխանաբար, գործազուրկ է: Չաշխատողների մեծամասնությունը նշել է, որ գործազուրկ է 3 տարուց ավելի (69.2%), վերջին 1-3տ. ընթացքում գործազուրկ է ներկայումս չաշխատող հարցված հաշմանդամների 19.2%-ը, և միայն 11.5%-ն է, որ աշխատանք չունի 1տ. պակաս ժամանակահատվածում (գծ. 4.27):



Գծ.4.27. Որքա՞ն ժամանակ է, ինչ չեք աշխատում


Հարցվածների 33.3%-ը պատասխանել է, որ աշխատանքի կամ աշխատանքը փոխելու կարիք ունի: Ըստ էության, հարցվածների մեծ մասը՝շուրջ 67%-ը աշխատանքի կամ այն փոխելու կարիք չունի:

Աղյուսակ 4.12. Աշխատանք ունենալը և այն փոխելու ցանկությունը

	Փոխելու ցանկությունը		
Աշխատում է	այո	ոչ	Ընդ.
այո	9,1%	90,9%	100,0%
ոչ	58,3%	41,7%	100,0%
Ընդ.	34,8%	65,2%	100,0%

Հարցման պահին աշխատողների միայն 9.1%-ն է արտահայտվել աշխատանքը փոխելու օգտին, իսկ աշխատանք չունեցողների 58.3%-ը նշել է, որ աշխատանքի կարիք ունի:


Աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող անձանց 60%-ի դեպքում աշխատանքն անհրաժեշտ է իրենց նյութական պահանջմունքների բավարարման համար, 35%-ը որպես շարժառիթ նշել է ընտանիքի մյուս անդամների նյութական կարիքների բավարարումը, այլ անձնաց հետ շփվելու պահանջմունքը աշխատանք գտնելու շարժառիթ է 25% դեպքերում: Այսինքն՝ աշխատանք որոնելու շարժառիթները զուտ տնտեսական բնույթի են, իսկ սոցիալական և հոգեբանական պահանջմունքները երկրորդ պլան են մղված:



Գծ.4.28. Աշխատանք փնտրելու հիմնական շարժառիթները

Աշխատանքի որոնման հիմնական տարբերակը զբաղվածության պետական ծառայությունն է (այս տարբերակն ընտրել են աշխատանք փնտրողների 47%-ը), ինչպես նաև անձնական կապերը՝ ծանոթ-բարեկամները: Այս տարբերակը նույն հաճախականությունն ունի, ինչ նախորդը: Համացանցի, աշխատանքի հայտարարությունների, տարբեր կայքերի միջոցով աշխատանք է փնտրում 18%-ը:

Հարցվածների 35 տոկոսը չի դիմել ԶՊԾ: 14.7%-ը դիմել է, սակայն որևէ աջակցություն չի ստացել: Փոխարենը, դիմել և աջակցություն ստացել է հարցվածների շուրջ 9%-ը:




Գծ.4.29. Զբաղվածության պետական ծառայության դիմելու հաճախականությունը և արդյունքները

Աշխատանք փնտրող հաշմանդամների գերակշիռ մասը (86%) աշխատանք է փնտրում 1տարուց ավելի:


Աշխատելու ցանկություն ունեցող անձանց շուրջ կեսը պատասխանել է, որ կարևոր չէ, թե որտեղ աշխատանք կլինի: 11%-ը կնախընտրեր աշխատել տնտեսության իրական հատվածում, ևս 11%-ը կցանկանար սեփական գործ հիմնել: Հետաքրքրական է, որ հարցվածներից որևէ մեկը ցանկություն չի հայտնել աշխատելու սահմանափակ կարողությամբ անձանց համար մասնագիտացված կազմակերպությունում:

Աշխատանք փնտրողների շուրջ կեսը պատրաստ է բավարարվել մինչև 100 հազ դրամ ամսական աշխատավարձով: Փոքր-ինչ ավելի բարձր՝ մինչև 200 հազ. դրամ է ակնկալում 23.5%-ը:




Գծ. 4.30. Ամսական որքա՞ն աշխատավարձ եք ակնալում ստանալ

Աշխատելու ցանկություն ունեցող,սահմանափակ կարողությամբ անձանց 39%-ը նախընտրում է աշխատել լրիվ աշխատանքային շաբաթ, բայց՝ ոչ լրիվ աշխատանքային օր: Ոչ լրիվ շաբաթ և աշխատանքային օր գրաֆիկով աշխատելու ցանկություն են արտահատել 22.2%-ը: Տանը կամ հերթափոխով աշխատելու ցանկություն է հայտնել 5.6%-ը (գծ. 4.31):




Գծ. 4.31. Աշխատանքային նախընտրելի գրաֆիկի մասին հարցի պատասխանները

Աշխատանք փնտրող սահմանափակ ֆիզիկական կարողություն ունեցող անձանց 40%-ը պատրաստ է առաջիկա շաբաթվա ընթացքում, աշխատանք գտնելու դեպքում անցնել աշխատանքի: 15%-ը պատրաստ է աշխատանքի անցնել 1 ամսվա ընթացքում, իսկ 25%-ի համար անհրաժեշտ է անցնել վերականգնողական կուրս կամ լավացնել առողջական վիճակը: Ըստ այդմ, առանց լրացուցիչ կամ էական ջանքերի, աշխատանք փնտրողների միայն 55%-ն պատրաստ անցնել աշխատանքի: Մյուսների պարագայում անհրաժեշտ է լուրջ նախապատրաստական աշխատանքի, վեռականգնողական կուրսի կամ հոգեբանական աջակցություն (գծ. 4.32.):



Գծ.4.32. Ե՞րբ եք պատրաստ աշխատանքի անցնել


Աշխատանք փնտրողների 52%-ը աշխատանք գտնելուն խանգարող գործոնների, խոչընդոտների շարքում նշել է հաշմանդամությամբ պայմանավորված սահմանափակումները, հաջորդ էական խոչընդոտը առողջական վիճակն է (35%), նաև՝ ցածր աշխատավարձը (13%): Մնացած պատասխանները ավելի ցածր ինտենսիվություն ունեն (գծ. 4.33): Ստացվում է, որ մասնագիտական անբավարար կարողությունները կամ աշխատատեղերի բացակայությունը շատ ավելի ցածր նշանակալիություն ունեն, քան հաշմանդամությամբ պայմանավորված սահմանափակումները կամ առողջական վիճակը: Սա այս ուղղությամբ տարվող աշխատանքների թիրախայնության բարձրացման կարևոր ուղերձ է պարունակում:



Գծ. 4.33. Ի՞նչն է դժվարացնում աշխատանք գտնելը


Հարցվածների միայն 37.8%-ն է դրական պատասխան տվել վերապատրաստման կարիք ունենալու վերաբերյալ հարցին:

Վերապատրաստման կարիքն արձանագրած հարցվածների 1/3 –ը ցանկանում է բարձրացնել իր որակավորումը, շուրջ 28%-ը որպես առաջնային նպատակ է դիտում աշխատանք գտնելը: Մոտ 17%-ի պարագայում շարժառիթը կրթական մակարդակը բարձրացնելը կամ նոր մասնագիտություն (արհեստ) սովորելն է (գծ. 4.34):




Գծ. 4.34. Վերապատրաստման նպատակը

Հարցվածների 22%-ը աջակցություն է ակնկալում աշխատատեղի որոնման հարցում, 16%-ը մասնագիտական վերապատրաստման, ևս 4%-ը՝ մասնագիտական կողմնորոշման հարցերում: 12%-ը ֆինանսական օգնություն է ակնկալում, իսկ 8%-ը արտաքին աջակցության դեպքում կարող է նաև սեփական գործ հիմնել (գծ. 4.35):



Գծ. 4.35. Ինչպիսի՞ աջակցության կարիք ունեք աշխատանք գտնելու հարցում



Գծ.4.36. Աշխատանք չգտնելու պարագայում ի՞նչ եք պատրաստվում անել

Աշխատանք չգտնելու պարագայում հարցվածների 10 տոկոսը ոչինչ չի պատրաստվում ձեռնարկել, 6.5%-ը պատասխանել է, որ կշարունակի փորձել: 15.2%-ը կմեկնի արտասահման, 10.9%-ը սեփական գործ կհիմնի, իսկ 6.5%-ը պարզապես կտեղափոխվի Երևան (գծ. 4.36):

2. ԱՄՓՈՓՈՒՄ

2.1. Հանրակրթական դպրոցների աշակերտների հարցման արդյունքների ամփոփում

1. Դպրոցականների առաջադիմությունն ընդգծված սեռային անհավասարակշռվածություն ունի: 9-10 միավոր առաջադիմություն ունեցող աշակերտների 73%-ը աղջիկներ են, իսկ 7 միավորից ցածր առաջադիմությամբ սովորողների 81.2%-ը՝ տղաներ:
2. Աշակերտների մոտ 50%-ի համար ուսումը որոշակի հետաքրքրություն ներկայացնում է, մոտ 33%-ը սովորում է մեծ հետաքրքրությամբ: Անտարբեր է ուսման նկատմամբ կամ ուսումը ծանր բեռ է համարում հարցվածների 8%-ից մի փոքր ավելին:
3. Գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտների միայն կեսն է սովորում մեծ հետաքրքրությամբ: 7 միավորից ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների մոտ 18%-ը անտարբեր է ուսման նկատմամբ, իսկ ևս 13%-ի համար՝ ուսումը ծանր բեռ է: Կարելի է ենթադրել, որ ցածր առաջադիմության կարևոր պատճառներից մեկը ուսման նկատմամբ համապատասխան վերաբերմունքն է և ոչ թե կարողությունների կամ մտավոր ներուժի ցածր մակարդակը:
4. Աշակերտների ուսման առաջադիմության կարևոր պայման է ընտանիքում ուսմանը նպաստող միջավայրի ձևավորումը, որի կարևոր նախադրյալ կարող է հանդիսանալ երկու ծնողների կրթական բարձր մակարդակ ունենալը:
5. Ուսման նկատմամբ անտարբեր աշակերտների մեջ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմում ցածր եկամտային խմբում գտնվողները:
6. Հարցված աշակերտների ավելի քան 50%-ը դրական է պատասխանել դպրոցում կատարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքների վերաբերյալ հարցին: Զգալի են հատկապես ուսուցիչների կողմից արվող աշխատանքները (42% դեպքերում), մինչդեռ բուհերի ներկայացուցիչների կողմից արվող աշխատանքները մի քանի անգամ պակաս ինտենսիվ են:
7. Աշակերտների գերակշիռ մասը իր ապագայի վերաբերյալ որոշումները ստիպված է կայացնել ոչ լիարժեք տեղեկատվության պայմաններում, ինչը հետագայում լրջագույն խնդիրներ է ստեղծում թե սովորելու շահադրդման, թե մարդկային ռեսուրսի օգտագործման արդյունավետության մասով:
8. Հարցվածների ¾-ը արտահայտել է բուհում սովորելու միանշանակ ցանկություն, ևս 6%-ը ավելի շուտ ցանկանում է սովորել: Ոչ և ավելի շուտ՝ ոչ պատասխաներ են տվել աշակերտների 12%-ից փոքր-ինչ ավելին:
9. Բուհ ընդունվելու ցանկություն արտահայտածների 12.5%-ը անտարբեր է ուսման նկատմամբ: Ուսման նկատմամբ անտարբեր աշակերտների 37%-ը միանշանակ ցանկություն է արտահայտել բուհում սովորելու, իսկ 17%-ը

բուհում ընդունվելու մտադրության մասին հարցին տվել է ավելի շուտ այո պատասխանը:

10. Աշակերտների հետ ուսուցիչների կողմից տարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքները բուհ ընդունվելու մտադրության ձևավորման տեսանկյունից լուրջ ներուժ են պարունակում:
11. Բուհում ուսումը շարունակելու հարցում բացասական մոտեցում ունեցող աշակերտների դեպքում բուհի մասին տեղեկատվության հիմնական աղբյուր է եղել Համացանցը, իսկ բուհ ընդունվելու ցանկություն հայտնած աշակերտները ավելի շատ որպես տեղեկատվության աղբյուր օգտվել են ընկեր, ծանոթ, բարեկամներից, նաև՝ դիմորդի տեղեկատուներից:
12. Բուհում սովորելու մտադրություն ունեցող աշակերտների պարագայում էական խոչընդոտ է հանդիսանում կրկնուսույցի հնարավորություն չունենալը, իսկ բուհում սովորելու մտադրություն չունեցողները ավելի շատ հակված են բուհում ուսումը ժամանակի կորուստ դիտարկելուն:
13. Աշակերտների բուհ ընդունվելու հնարավոր որոշման առաջնային շարժառիթներից են համարել նոր գիտելիք ստանալը և լավ մասնագետ դառնալը, ապագայում աշխատանքի ընդունվելու համար կրթություն ունենալը, ընդհանուր կրթական մակարդակը բարձրացնելը, նաև՝ պարզապես դիպլոմ ձեռք բերելը:
14. Հարցված աշակերտների կեսից ավելին բուհում ուսումը շարունակելու ցանկություն է ունեցել 9-րդ դասարանում կամ նույնիսկ դրանից առաջ:
15. Բուհի ընտրության հարցում առաջնայինը կրթության բարձր որակն է, նաև՝ որակյալ մասնագետների առկայությունը: Որոշակի դեր է խաղացել նաև ծնողների խորհուրդը և բուհի բարձր վարկանիշը:
16. Ապագա մասնագիտության ընտրության հարցում մասնագիտության բարձր վարկանիշը կարևորել է աշակերտների 18%-ը, սեփական ունակություններին համապատասխանությունը՝ 14.5%-ը, ծնողների խորհուրդը՝ 12%: Բարձր աշխատավարձը իր կարևորությամբ միայն 4-րդ գործոնն է. այն կարևորվել է աշակերտների միայն 10%-ի կողմից:
17. Բուհ ընդունվելու ցանկություն ունեցող աշակերտների մեծ մասը (51.3%) պատրաստվում է պարապել դասախոսի հետ, 16.1%-ը՝ դասախոսի հետ համատեղ: Պարապել պատրաստվող աշակերտների միայն 14.4%-ն է նշել, որ պարապելու է ինքնուրույն: Չեն պարապում կամ չեն պատրաստվում պարապել հարցվածների 1 տոկոսից պակասը:
18. Բարձր առաջադիմություն ունեցողների միայն 9%-ն է պատրաստվում ինքնուրույն պարապել: Մինչդեռ ցածր առաջադիմություն ունեցողների 25%-ը պատրատ է պարապել ինքնուրույն:
19. Աշխատանք գտնելու հարցում բուհի գիտելիքի դրական ազդեցության հարցում վստահ է աշակերտների միայն 13.6%-ը:

20. Հարցված աշակերտների կարծիքով Հայաստանում աշխատանք գտնելու համար առավել կարևոր են դիտվում աշխատասիրությունը (միջին միավորը՝ 4.41), մասնագիտական հմտությունները (4.39), բարձրագույն կրթությունը (4.38), տաղանդը կամ խելքը (4.3): Գործոնների՝ ըստ կարևորության երկրորդ խմբում ներառվել են կապերը, փողը, հաջողությունը:
21. Ապագա աշխատանքում բարձր վարձատրությունն առաջնային է համարել աշակերտների կեսից ավելին: Նաև կարևորվում է հետաքրքիր լինելը: Մյուս պատասխանների հաճախականությունը որակապես ցածր է: Սեփական կարողություններին և ընդունակություններին համապատասխանելը կարևորվել է շատ քիչ թվով աշակերտների կողմից (8.7%):
22. Մեծ թիվ են կազմում բուհն ավարտելուց հետո Երևանում աշխատել ցանկացող աշակերտները (28.3%), արտերկիր հեռանալ է պատրաստվում 21.4%-ը: Մոտ 20%-ը պատրաստվում է աշխատանք գտնել Շիրակի մարզում:
23. Ապագայում աշխատանք գտնելու հարցում մեծ վստահություն ունեցող աշակերտների նշանակալի մասը աշխատանք գտնելու հիմնական տարբերակ է դիտարկում Երևանը, հետո՝ Շիրակի մարզը, և վերջում՝ արտերկիրը:
24. Աշակերտների մոտ գերիշխում են լավատեսական ընկալումները սեփական մասնագիտական հնարավորությունների, արտերկրում պահանջվածության վերաբերյալ: Հարցին պատասխանածների 65 տոկոսը համոզված է, որ արտասահմանում պահանջված կլինի, իսկ 13.5%-ը՝ մեծ հավանականությամբ այդպես է կարծում:
25. Սովորելու և Համացանցի ու սոցիալական ցանցերի վրա օրվա ընթացքում աշակերտների կողմից ծախսվող միջին ժամանակները մոտավորապես հավասար են: Հարցվածների 28%-ը սովորելու վրա ծախսում է օրական 1ժ-ից քիչ, իսկ 3ժ-ից ավելի ծախսում է հարցվածների միայն 35%-ը: Քիչ ժամանակ է ծախսվում ընթերցանության վրա՝ հարցվածների 11%-ն է օրական ընթերցում ավելի քան 3ժ.:
26. Բուհում սովորելու ցանկություն ունեցողների 28%-ը համացանցում անցկացնում է 3 ժամից ավելի: Բուհում սովորելու ցանկություն չարտահայտած աշակերտների դեպքում այս ցուցանիշը 50% է: Համացանցում օրական նույնքան ժամանակ են ծախսում թե այն աշակերտները, ովքեր միանշանակ որոշել են ընդունվել բուհ, և թե նրանք, ովքեր էլի միանշանակորեն որոշել են չընդունվել:

2.2. Բուհերի ուսանողների հարցման արդյունքների ամփոփում

1. Անվճար սովորողներն ավելի բարձր ՄՈԳ ունեն: Վճարովի սովորողները միջին ՄՈԳ են արձանագրել: Վճարովի համակարգում սովորողները, հավանաբար, իմաստ չեն տեսնում բարձր գնահատականներ ստանալու մեջ:
2. Ուսանողների կողմից բուհն ընտրելու շարժառիթների թվում առաջնայինը կրթության որակի, բուհի վարկանիշի գործոններն են: Համեմատաբար հաճախադեպ է նաև *այլ տարբերակ չկար* պատասխանը (21.8%): Այսինքն, ընտրության սահմանափակությունը բավականին մեծ թվով դեպքերում կանխորոշում է ուսանողի կողմից բուհի և նույնիսկ՝ մասնագիտության ընտրությունը:
3. Կրթության բովանդակության և որակին առնչվող գործոններն առաջնային են համարվում բուհ ընդունվելու շարժառիթների շարքում: Դրա հետ միասին, 4 միավորից բարձր միջին գնահատական ունի նաև դիպլոմ ստանալու ձգտումը: Մյուս շարժառիթների միջին գնահատականը ավելի ցածր է:
4. Հարցված ուսանողների միայն 14%-ն է համարում, որ բուհ ընդունվելիս ունեցած սպասելիքներն ամբողջությամբ արդարացել են: Մյուս կողմից, միայն 8.1%-ն է համարում, որ իր սպասելիքները ընդհանրապես չեն արդարացել, իսկ 70%-ը պատասխանել է, որ սպասելիքները արդարացել են, սակայն՝ մասամբ:
5. Սպասելիքները ընդհանրապես չեն արդարացել պատասխան տված ուսանողների մեծ մասի առաջադիմությունը միջինից բարձր է, բայց առավելագույն միջակայքում չէ: Կարելի է ենթադրել, որ հենց սպասելիքների չարդարանալն է այն զսպող գործոնը հանդիսացել, ինչը թույլ չի տվել ավելի լավ օգտագործել իրենց մարդկային կապիտալի ներուժային հնարավորությունները:
6. Հարցմանը մասնակցած ՀՊՏՀ ԳՄ ուսանողների միայն 6%-ն է համարում, որ իրենց սպասելիքները չեն արդարացել ընդհանրապես: Համադրվող մյուս բուհերի պարագայում այս ցուցանիշն ավելի բարձր է: Մյուս կողմից, ՀՊՏՀ ԳՄ ուսանողների 15 տոկոսից ավելին նշել է, որ սպասելիքներն ամբողջությամբ արդարացել են: ՇՊՀ պարագայում այս ցուցանիշը մոտ 10% է:
7. Եթե նորից ընտրելու հնարավորություն լիներ, ապա հարցվածների 36%-ը կընտրեր այլ մասնագիտություն, 18.4%-ը՝ այլ բուհ: Եվ միայն ¼ մասը կընտրեր նույն մասնագիտությունը և նույն բուհը:
8. Հարցված ուսանողների կեսից ավելին լավատեսական սպասումներ ունի և համարում է, որ մեծ է բուհի գիտելիքներով աշխատանք գտնելու հավանականությունը: Մյուս կողմից, այս հարցում թերահավատ է հարցվածների ավելի քան 26%-ը, իսկ 14.4%-ը դժվարացել է պատասխանել,

ինչը որոշ մոտավորությամբ ևս կարելի է դիտարկել որպես անվստահության դրսևորում:

9. Աշխատանք գտնելու հարցում ապագա վստահությունն ուսանողի ընթացիկ առաջադիմության հետ էական կապ ունի:
10. Աշխատանք գտնելու նպաստող հիմնական գործոնների միջինացված գնահատականի առավելագույն մակարդակը ստացվել է մասնագիտական հմտությունների, աշխատասիրության և տաղանդի պարագայում: Պակաս կարևոր են համարվել հաջողակ լինելը, կապերը և ֆինանսական հնարավորությունները: Մասնագիտական հմտությունների կարևորությանն առավելագույն գնահատական է տվել հարցված ուսանողների 60%-ը: Մյուս կողմից, հարցվածների 1/3-ը համարում է, որ կապերը ևս վճռական նշանակություն ունեն աշխատանքի տեղավորման հարցում:
11. Հարցված ուսանողների մեծ մասը ապագա աշխատանքում առաջնային կարևորություն է տալիս վարձատրությանը: Ի տարբերություն հարցված աշակերտների, ուսանողների մոտեցումը շատ ավելի պրակտիկ ու պրագմատիկ է: Կարևորվում է բարձր վարձատրությունը, աշխատանքի հետաքրքիր լինելը և հետո նոր՝ մասնագիտության հետ համապատասխանությունը: Շատ ցածր է ստեղծագործականության կարևորության գնահատականը, սեփական կարողությունների համապատասխանելը, հասարակության համար օգտակար լինելը:
12. Հարցված ուսանողների կեսից ավելին նախընտրում է բուհն ավարտելուց հետո մնալ և աշխատել Շիրակի մարզում, 22.5%-ը ցանկանում է աշխատանք գտնել Երևանում: Այս հարցում չկողմնորոշված է միայն 17%-ը:
13. Սովորելուն օրական 3ժ-ից ավելի տրամադրում է հարցված ուսանողների միայն 23%-ը, մինչդեռ 40%-ը նույնքան ժամանակ է հատկացնում Համացանցին, սոցիալական ցանցերին: Հարցված ուսանողների մեծ մասը քիչ է ընթերցում, և այստեղ առաջադիմությամբ պայմանավորված առանձնահատկություններ, թերևս, չկան:
14. Անվճար ուսուցման համակարգում սովորողները, միջինում ավելի շատ ժամանակ են ծախսում սովորելու վրա, քան վճարովի համակարգում սովորողները:
15. Ծնողների ցանկությամբ բուհ ընդունված ուսանողների մեծ մասը սովորելու վրա քիչ ժամանակ է ծախսում, քան նրանք, ովքեր այս շարժառիթի համար տվել են նվազագույն գնահատականներ:
16. Հարցված ուսանողները առավելագույն գնահատական են տվել իրենց բուհերում դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական պատրաստվածությանը, օգտակար լինելու պատրաստակամությանը, կրթական ծառայությունների որակին՝ ընդհանուր առմամբ: Նվազագույն գնահատականներ են տրվել բուհում գործնական գիտելիքների ստացմանը,

կրթական ծրագրերի բովանդակությանը, կրթական գործընթացում նորարարական մեթոդների կիրառությանը:

17. Բուհ ընդունվելու ժամանակահատվածի համեմատությամբ բուհում սովորելու ցանկությունն ուսանողների մոտ ավելի շատ նվազել է, քան աճել: Սովորելու ցանկությունը զգալիորեն աճել է միայն 7%-ի մոտ, մինչդեռ զգալիորեն նվազել է 20.5%-ի պարագայում:
18. Բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների շուրջ 21%-ի մոտ զգալիորեն նվազել է սովորելու ցանկությունը: Իսկ միջինից ցածր ՄՈԳ ունեցողների մոտ սովորելու ցանկությունը դրական դինամիկա է արձանագրել:
19. Սովորելու ցանկության նվազումը տեղի է ունեցել ավելի շատ բուհում սովորելուն նպաստող միջավայրի բացակայության, դասախոսների սուբյեկտիվության, նաև՝ սովորելուն զուգահեռ աշխատելու պատճառով:
20. Չի աշխատում կամ չի պատրաստվում աշխատել հարցված ուսանողների 20 տոկոսը: 40 տոկոսը կամ աշխատում է, կամ նախկինում աշխատել է: Ներկայումս աշխատող ուսանողների տեսակարար կշիռն ամենաբարձրն է ամենացածր ՄՈԳ ունեցող խմբում: Սա կարող է նշանակել, որ ուսումը և աշխատանքը համատեղելու դեպքում խնդիրների առկայությունն անխուսափելի է:
21. Ուսումնառությանը զուգահեռ ուսանողները ավելի շատ աշխատում են առևտրի և ծառայությունների ոլորտում: Միայն 27% դեպքերում է, որ ուսումնառությանը զուգահեռ աշխատանքը լրիվությամբ առնչվել է ուսանողի մասնագիտական ուղղվածության հետ, իսկ 28%-ի դեպքում՝ ընդհանրապես որևէ առնչություն չի ունեցել:
22. Հարցված ուսանողների 12.4%-ը համարում է, որ ուսման և աշխատանքի համատեղման դեպքում տուժում է ուսումը, 8.5%-ը գտնում է, որ այդ դեպքում տուժում է թե աշխատանքը և թե ուսումը: Մյուս կողմից, 12%-ը համարում է, որ համատեղման դեպքում ոչինչ չի տուժում: Սակայն այսպիսի պատասխան տված ուսանողները հիմնականում կատարել են պատահական, ոչ մշտական հիմունքներով աշխատանք:
23. Աշխատող ուսանողների 36%-ը իրենց աշխատանքը գտել են ծանոթների, բարեկամների կամ ընկերների օգնությամբ, ևս 21%-ի դեպքում օգնել են փորձաշրջանի ընթացքում ձևավորված կապերը: Չափազանց ցածր է զբաղվածության պետական գործակալության աջակցությամբ աշխատանք գտածների մասնաբաժինը, իսկ զբաղվածության մասնավոր գործակալությունների ջանքերով ընդհանրապես հարցվածներից որևէ մեկը աշխատանք չի գտել:
24. Աշխատող ուսանողների 53%-ը (կամ՝ հարցմանը մասնակցած ուսանողների ընդհանուր թվի շուրջ 25 տոկոսը) աշխատանքի անցնելու համար մասնակցել է բուհից դուրս կրթական ծրագրերի կամ լրացուցիչ դասընթացների: Սա

կարելի է դիտել որպես բուհական կրթության գործնական բաղադրիչում առկա լուրջ թերությունները գիտակցելու, դրանց վերացմանը միտված կոնկրետ քայլեր ձեռնարկելու վարքագծի դրսևորում:

25. Ուսանողների առավել մեծ հատվածը լրացուցիչ բարելավման կարիք է զգում իր մասնագիտության գործնական հմտությունների խորացման հարցում: Ուսանողները կարևորել են նաև օտար լեզվի գիտելիքների խորացման համար վերապատրաստումների անցկացումը, նաև՝ համակարգչային հմտությունների կատարելագործումը:

2.3. Գործատուների հարցման արդյունքների ամփոփում

1. Աշխատողների անձնային և մասնագիտական հատկանիշների առնչությամբ գործատուների կողմից առաջնահերթ նշանակություն է տրվում պրոֆեսիոնալիզմին և բանիմացությանը, պատասխանատվություն ստանձնելու կարողությանը, մշտապես կատարելագործվելու ունակությանը: Նորարականությունը, ստեղծագործ մտածելակերպը, նաև՝ թիմային աշխատանքի կարողությունը, կազմակերպությանը, դրա հիմնական արժեքներին հավատարմությունը պակաս կարևոր են դիտվում:
2. Վարչական աշխատողների պարագայում կարևորվում է կրթական առավել բարձր մակարդակը՝ մագիստրատուրա և այլն: Իսկ ծառայողների դեպքում միջին մասնագիտական և բակալավրիական մակարդակները լիովին բավարար են դիտվում:
3. Աշխատողի կարիք ունեցող կազմակերպություններից շուրջ կեսում պահանջվում են հիմնականում ցածր որակավորում ունեցող անձինք՝ ոչ մասնագիտական աշխատանքի համար: Կազմակերպությունների մյուս կեսում պահանջվում են հիմնականում տնտեսագետներ կամ SS ոլորտի մասնագետներ, բարձրագույն կրթությամբ, 25-40 տ. նախընտրելի միջակայքում:
4. Գործատուների համեմատաբար բարձր են գնահատել բուհերի՝ որակյալ մասնագետներ պատրաստելու կարողությունը: Մյուս կողմից, ցածր է գնահատվել աշխատանքային շուկայի պահանջմունքների փոփոխությանը բուհերի արձագանքման ճկունությունը: Այս գործոնի միջին գնահատականը առավելագույն հնարավորի 38.1%-ն է:
5. Շիրակի մարզի բուհերի շրջանավարտների պրոֆեսիոնալիզմը և բանիմացությունը միջինում գնահատվել է 5.9, տեսական գիտելիքը գործնականում կիրառելու կարողությունը ստացել է ամենացածր գնահատականը՝ 5.2:
6. Գործատուների 38%-ը համարում է, որ բուհի շրջանավարտը կարող է գործնական աշխատանքի հմտություններին և գործառնական

պարտականություններին տիրապետել մինչև 3 ամիս աշխատելը արդյունքում: 16%-ը համարում է, որ դրա համար պետք է մինչև 6 ամիս, 31%-ի կարծիքով դրա համար անհրաժեշտ է 6-12 ամիս:

7. Հարցված գործատուների 67 տոկոսից ավելին համարում է, որ ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել գործնական պատրաստվածության ուժեղացմանը, 26%-ի մոտեցմամբ պետք է խթանել ուսուցման նորարարական տեխնոլոգիաները: Գործատուներից որևէ մեկը չի հիշատակել շրջանավարտների տեսական պատրաստվածության բարձրացման անհրաժեշտության մասին:
8. Բուհերի հետ համագործակցության խթանման հնարավոր գործիքների և մեխանիզմների շարքում առավել հեռանկարային են դիտվում մասնագետների պատրաստման պատվերի ներկայացումը (51%), ուսանողների փորձաշրջանի անցկացումը, համատեղ նորարարական ծրագրերի մշակումը և անցկացումը:
9. Հարցված գործատուների կեսից ավելին պլանավորում է շարունակել համագործակցությունը մարզի բուհերի հետ: Միաժամանակ, շուրջ 21%-ը համարում է, որ մասնագետների պատրաստումը բարելավման կարիք է զգում: Չեն պատրաստվում համագործակցել հարցված գործատուների շուրջ 7%-ը:

2.4. Սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչների հարցման արդյունքների ամփոփում

2.4.1. Գործազուրկների հարցման արդյունքներից բխող հիմնական եզրահանգումները

1. Գործազրկության տևողության և գործազուրկի տարիքի միջև որոշակի կապ է նկատվում՝ 3տ. ավելի ժամանակով գործազուրկների 1/3-ը 50տ-ից բարձր խմբին է դասվում: Մեծ է նաև 31-40տ. խմբի տեսակարար կշիռը:
2. Կրթական մակարդակի և գործազրկության տևողության միջև որոշակի կապ է նկատվում: Այսպես, 3 տարուց ավելի գործազուրկ է միջնակարգ կրթություն ունեցողների 43.3%-ը, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների պարագայում այդ ցուցանիշը 34.6% է:
3. Գործազրկության տևողությունը որոշակի առնչություն ունի աշխատանքային ստաժի հետ: 3 տարուց ավելի աշխատանք փնտրողների շուրջ 60%-ը աշխատանքային ստաժ չունի:
4. Հարցվածների 20.6% համարում է, որ աշխատանք գտնելու հարցում խոչընդոտներ չկան: Խոչընդոտներից ամենաշատ նշվածը փորձի բացակայությունը կամ անբավարարությունն է, ընտանեկան

հանգամանքները և տարիքը: Թափուր աշխատատեղի բացակայության պատճառը նշվել է միայն հարցվածների 14 տոկոսի կողմից: Մասնագիտական հմտությունների և որակավորման պակասը խնդրահարույց է հարցվածների 12.1%-ի համար:

5. Աշխատանքի որոնման հիմնական աղբյուրը Համացանցն է: Դրանից օգտվում է աշխատանք փնտրողների 63.2%-ը: Մեծ է նաև բարեկամ, ծանոթների միջոցով աշխատանք փնտրողների մասնաբաժինը (37.7%): Փոքր է զբաղվածության պետական ծառայությանը դիմածների տեսակարար կշիռը: Էլ ավելի փոքր է զբաղվածության մասնավոր գործակալությունների միջոցով աշխատանք փնտրողների թիվը (հարցման մասնակիցների 1%-ը):
6. Աշխատանք փնտրող հարցվածների գերակշիռ մասը կարևորում է աշխատավարձի չափը (87.3%): Պակաս կարևոր են աշխատանքի պայմանները, գրաֆիկը (51-54%): Մնացած գործոնները որակապես ցածր կարևորություն ունեն: Աշխատանքով բավարարվածությունը հարցվածների 75 տոկոսի համար կարևոր չէ, 80 տոկոսի համար կարևոր չէ մասնագիտության հարգի լինելը, 91 տոկոսի համար էական չէ գործատուի կարգավիճակը, հեղինակությունը:
7. Հարցվածների կեսից ավելին ակնկալում է ստանալ աշխատանք մինչև 200 հազար դրամ ամսական աշխատավարձով: Սա խոսում է սպասելիքների ոչ ուռճացված և ադեկվատ լինելու մասին:
8. Գործազրկության տևողության և ակնկալվող վարձատրության միջև ևս որոշակի առնչություններ կան: Մինչև 100 հազար դրամի աշխատավարձ է ակնկալում 3 տարուց ավելի աշխատանք փնտրող հարցվածների 52.5%-ը: Ավելի քիչ ժամանակահատվածում աշխատանք փնտրողները փոքր-ինչ ավելի բարձր աշխատավարձ են ակնկալում: Այսինքն՝ աշխատանք փնտրելու տևողության երկարելուն համընթաց նվազման ուղղությամբ վերանայվում են աշխատավարձի մեծության նկատմամբ սկզբնական ակնկալիքները:
9. Հարցվածների 43.6%-ը չի ցանկանում ոչ փոխել մասնագիտությունը, ոչ էլ բարձրացնել որակավորումը: Նոր մասնագիտություն է ուզում ստանալ հարցվածների միայն 18.2%-ը:
10. Վերապատրաստման կարիք ունեցողների 43.3%-ը նախընտրում է վերապատրաստվել որևէ ուսումնակրթական կենտրոնում: Բուհը՝ որպես վերապատրաստման վայր, նախընտրելի է 28.3%-ի համար: Այլ տարբերակները պակաս նախընտրելի են:
11. Վերապատրաստման արդյունքում 28.6%-ը կցանկանար ձեռք բերել համակարգչային հմտություններ: Որևէ արհեստ սովորելու անհրաժեշտություն է զգում վերապատրաստման կարիք ունեցողների մոտ 24%-ը: Մոտ 10%-ը կցանկանար ձեռք բերել սեփական գործ բացելու և վարելու հմտություններ:

Որոշակի կարևորություն է ստացել նաև կառավարման ու մարդկանց հետ աշխատելու հմտությունների ձեռքբերումը (8-ական տոկոս):

12. Եթե հարցման պահին աշխատանքի տեղավորվելու հնարավորություն լիներ, ապա հարցվածների 87.4%-ը պատրաստ էր անմիջապես անցնել աշխատանքի:
13. Անմիջապես աշխատանքի անցնելուն անպատրաստ գործազուրկների 50%-ը 40տարեկանից բարձր է, 44%-ը ունի բարձրագույն կրթություն, 79%-ը 3տարուց ավելի է աշխատանք է փնտրում կամ պարզապես աշխատանք չունի, աշխատանքային ստաժը 5տ. պակաս է, 57%-ը ակնկալում է ամսական 100 հազար դրամից պակաս վարձատրություն, 57%-ը չի ցանկանում ոչ փոխել մասնագիտությունը, ոչ էլ վերապատրաստվել:
14. Հարցվածների 67%-ը որևէ պատասխան չի նշել այն հարցին, թե *վերջին ամսվա ընթացքում ի՞նչ քայլեր եք ձեռնարկել հիմա աշխատանք գտնելու կամ սեփական գործ սկսելու համար*: 14%-ը խոստովանել է, որ ոչինչ չի ձեռնարկել: Ըստ էության, ակտիվորեն փնտրում է միայն հարցվածների 12%-ը, իսկ միայն 3%-ն է քայլեր ձեռնարկել որակավորման բարձրացման կամ նոր հմտությունների ձեռքբերման համար: Այսինքն՝ գործնական քայլեր ձեռնարկելու ակտիվությունը ցածր մակարդակի վրա է:

2.4.2. Սահմանափակ կարողություն ունեցող անձանց հարցման արդյունքների ամփոփում

1. Հարցված հաշմանդամների գերակշիռ մասը՝ 72.3%-ը, նախկինում ունեցել է աշխատանք: Նրանց շուրջ 80 տոկոսի աշխատանքային ստաժը 3տ. ավելի է:
2. Հարցվածների կեսից ավելին համարում է, որ կարողությունների սահմանափակումը աշխատանքի վրա չի անդրադարձել: Մյուս կողմից, շուրջ 40%-ը նույն պատճառով հարկադրված է եղել դադարեցնել իր աշխատանքը: Եվ միայն 8%-ի դեպքում է, որ հնարավոր է եղել աշխատել նույն մասնագիտությամբ, սակայն՝ փոխելով աշխատավայրը:
3. Նախկինում աշխատանք ունեցածների 65 տոկոսը տարբեր պատճառներով ստիպված է եղել փոխել իր աշխատավայրը: Հիմնական պատճառներն են ցածր աշխատավարձը, աշխատավայր հասնելու խնդիրները, աշխատատեղի կահավորված չլինելը:
4. Աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող անձանց 60%-ի դեպքում աշխատանքն անհրաժեշտ է իրենց նյութական պահանջմունքների բավարարման համար, 35%-ը որպես շարժառիթ նշել է ընտանիքի մյուս անդամների նյութական կարիքների բավարարումը, այլ անձնաց հետ շփվելու պահանջմունքը աշխատանք գտնելու շարժառիթ է 25% դեպքերում: Այսինքն՝ աշխատանք որոնելու շարժառիթները զուտ տնտեսական բնույթի են, իսկ սոցիալական և հոգեբանական պահանջմունքները երկրորդ պլան են մղված:

5. Աշխատանք փնտրողների շուրջ կեսը պատրաստ է բավարարվել մինչև 100 հազ դրամ ամսական աշխատավարձով: Փոքր-ինչ ավելի բարձր՝ մինչև 200 հազ. դրամ է ակնկալում 23.5%-ը:
6. Աշխատելու ցանկություն ունեցող,սահմանափակ կարողությամբ անձանց 39%-ը նախընտրում է աշխատել լրիվ աշխատանքային շաբաթ, բայց՝ ոչ լրիվ աշխատանքային օր: Ոչ լրիվ շաբաթ և աշխատանքային օր գրաֆիկով աշխատելու ցանկություն են արտահատել 22.2%-ը: Տանը կամ հերթափոխով աշխատելու ցանկություն է հայտնել 5.6%-ը:
7. Առանց լրացուցիչ կամ էական ջանքերի, աշխատանք փնտրող հաշմանդամների միայն 55%-ն պատրաստ անցնել աշխատանքի: Մյուսների պարագայում անհրաժեշտ է լուրջ նախապատրաստական աշխատանքի, վեռրականգնողական կուրսի կամ հոգեբանական աջակցություն:
8. Հարցվածների միայն 37.8%-ն է դրական պատասխան տվել վերապատրաստման կարիք ունենալու վերաբերյալ հարցին: Նրանց 1/3–ը ցանկանում է բարձրացնել իր որակավորումը, շուրջ 28%-ը որպես առաջնային նպատակ է դիտում աշխատանք գտնելը: Մոտ 17%-ի պարագայում շարժառիթը կրթական մակարդակը բարձրացնելը կամ նոր մասնագիտություն (արհեստ) սովորելն է:
9. Հարցվածների 22%-ը աջակցություն է ակնկալում աշխատատեղի որոնման հարցում, 16%-ը մասնագիտական վերապատրաստման, ևս 4%-ը՝ մասնագիտական կողմնորոշման հարցերում: 12%-ը ֆինանսական օգնություն է ակնկալում, իսկ 8%-ը արտաքին աջակցության դեպքում կարող է նաև սեփական գործ հիմնել:
10. Աշխատանք չգտնելու պարագայում հարցվածների 10 տոկոսը ոչինչ չի պատրաստվում ձեռնարկել, 6.5%-ը պատասխանել է, որ կշարունակի փորձել: 15.2%-ը կմեկնի արտասահման, 10.9%-ը սեփական գործ կհիմնի, իսկ 6.5%-ը պարզապես կտեղափոխվի Երևան:

««Կոմպասս» գիտահետազոտական,
կրթական և խորհրդատվական կենտրոն»
հասարակական կազմակերպություն



Հասցե՝ ք. Գումրի, Անկախության հրապ.
9ա շ. 3-րդ հարկ, 301 սենյակ
www.compass-center.org
compassgyumri@gmail.com
Հեռ.՝ (+374) 312-6 01 00, (+374 95) 16 01 00